# ՍՕՍ
## ԵՒ
# ՍՕՆԴԻՊԻ

*արար*

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Վ. Ա.

Ի ԿԱԼԿԱԹԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1847

13802

ԱՌ —

## ՀԱՅՈՒՀԻ՛ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

### ՏԻԿԻՆ ՔՈՅՐ.

ՇՆՈՐՀՕՔ վերնախնամ ՀՈԳԻՈՅՆ Աստուծոյ վսեմանամ արդարև, ոչ այնքան 'ի գիւտ անարուեստ երգոց, որքան կենդանաբար երախտեաց ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅՈՒՀԻՈՅԴ. որ ոչ միայն առաջին հանդիսացար մեծապարգև առատաձեռնութեամբ պսակել զիմ փծուն ձեռագիրս՝ այլև անխնայ մատակարարելով զեն և զանթերի ծախս տպագրութեան սորա՝ մատուցեր զսա 'ի զբօս և 'ի զուարճութիւն Տիկնաց Պատուականաց մերոյ աշխարհի ։

Մի՛ եւ համարձակեսցի պարծել Պառնասիս ՚ի դասերս երգոց իւրոց, այն ինչ Արև շնորհաց փայլեալ ՚ի Հայաստան՝ երև եցուցանէ ԶՀԱՅՈՒՀԻԴ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ յեթերաճեմ ՚ի գահ Մասեաց ընդ Անահտայ և ընդ Նանեայ՝ ախորժալուր նուագել զաշխոյժ նախահարց Ազգիդ ։

Մի՛ եւ յաւելցին լեզուք վեհերոտք զմարգարէութիւն թիւր մարգարէանալ ՚ի վերայ Հրեշտակուհեաց տանս Թորգոմայ, որք վաղու եւ սկսեալ՝ և ․ՔԵԻ զարդիս խրախուսին անմահիցն զմայլիլ ախորժ նուագօք ։

Երանի՜ էր ինձ, եթէ գործն դուզնաքեայ՝ որ միայն ժտի առ և գիր եղեալ՝ արժանի ինչ լինէր երախտեաց ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅՈՒՀՒՈՅԴ․ բայց որովհետև ոչ այնպէս, յաւելու նա մանաւանդ զշուք հայրենասիրութեան ձերոյ՝ քան զարժանիս իւր, և խրախոյս բառնայ գերարուեստ եղբարց իմոց առաւել ես հանճարով մղել ՚ի հանդէս փառաց Հայրենեաց ։

Ամենախոնարհ Ծառայ

Մ․ Դ․ ԹԱՂԻԴԵԱՆՑ․

# ՄՕՄ ԵՒ ՄՕՆԴԻՊԻՔ

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

# ԴՐՈՒԱԳ

## ԱՌԱՋԻՆ ԵՐԳՈՑ

Նկարագիր Վահեւանեան տօնիցս — Սօս զաճիւն հաւաքեալ իւրոյ Սօնդիպեայ ամփոփէ յարտեւան լերինն. Ասողիկ յԱրածանին կանխեալ գետ՝ նշմարէ զնա. — Հարցանէ զնմանէ ցորդի իւր Սէր. որոյ անփոյթ բայց և սոյդ պատասխանի ՚ի գութ շարժէ զԱստուածուհին, — Հիր ծաղկանց հմայ առաքէ առ նա. այլ ընդ այլոյ եղեալ Սօս՝ դիմէ առ Աստուածուհին, որ հարցանէ ցնա զպատճառաց սգոյն. Սօս պատմել սկսանի թէ որպէս աշխարհաշուրջ եղեալ՝ ՚ի Հինդ հասանէ. Անմուտ ՚ի կանոն՝ բացօթեայ բնակլի արտաքոյ. բնական և զարմացական խոկմունք. — Տապան փայտակերտ տեսանէ կախել զպարսպաց. հուպ մատուցեալ գտանէ ՚ի նմա կուան վիրաւոր, որոյ շրթանց հոկ՝լով Սիրոյ՝ նետահար ՚ի սիրտ լինի, և ուշաթափ արկանէ.

# ՎԷՊ

Ի

# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

---

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

ՎԱՀԵՒԱՆԵԱՆ [1] ՏՕՆ
Խմբել ՚ի Տարօն.
ՎԱՀԱԳՆԻՆ [2] մեծի՝
պատմել զարութիւն ։
Որով Ահարկուն
Ու լախտ հաստաբուն ,
Վոհմակ [3] վիշապանց
Վճարեաց համբուն ։

Նա՝ յԱտրեստան,
Ձահ հան և սասան.
Երբ զԱստուած Նոյա՝
Բանդեաց[4] ըզԲարշամ։
Ձորոյ դէզ յարդին,
Հան յայեր վերին.
’ի մէջ աստեղաց՝
Ցատակեաց զուղին։
Օ՜ որ յանուն վեհին՝
Հինք անուանեցին
Մեզ հետ[5] Ցարդգողի,
Ցախաստան[6] Հայկին։
Մինչ յորժամ[7] Աստղիկ
Սիրոյն դիպցիկ.
Կայծն ՚ի սուրբ ստեանց՝
Ցայն կամար ծորեաց,
Յայնժամ նախնիք մեր՝
Ուսան յոմն ընտիր.

Մկրտել որդւոյ՝
Ջուղին կաթընծիր ։
Ցնծումն ամբոխին ,
Մեծ էր ՚ի տօնին ․
Քան զոր [8] Վարդամառն
Եհար յոսկէ վին ։
Երգք մանկանային ,
Մանկունք խայտային ․
Եւ քան զամենայն՝
Կայթէր կանանին ,
Հայորեար գրոհին ,
Քաղցրանայր Երկին ,
Եւ դաբր ՚ի պարուց՝
Հարկանէր գետին ։
Յորժամ ՍՕՍ Վանեան
Հոծ ՚ի թախծութեան ,
Նստեալ մենաւոր
Լերին յարտեան ,

Հեայ ըղմիմունք ։
Ւ ՚ի յօղ սրտառուչ
Թանայ ըղդամբան՝
Կուսին ոսկեփունք ։
Օ՛ որ դիւցակըրօն
Հայր [9] անագորոյն
Հան զոհ ՚ի սեղան
Կռոց Հայկազուն ։
ԱՆԴ [10] Ոսկեծըղին
Աշխարհիս Տիկին ,
Մայր Սիրոյ Աստղիկ՝
Մատչի առանձին ·
Յակն [11] Արածանւոյ
Գոհարեան գետոյ ·
Ջիրան լուսեղէն
Մաքրել յարատոյ ։
Ուր մանէ Մանկիկ
Ըղձին՝ գեղեցիկ ·

Ջարդ պարանոցի՝
Գոյն ըղձոյն ծաղիկ ։
Եւ առնէ հիւսիս
Հերացն հոպոպիս ,
Ջովահար մատանց
Քնքուշ խաղալիս ․
Յարդարել ՚ի պակ ,
Սիրոյն արուսեակ․
Եւ ջահել նովին
Վահագնին [12] Սենեակ ։
Մ՝ԻՆՉ այս և մինչ այն,
Աչք Մօր ցանկութեան՝
Յորժամ՝ ՚ի տեսիլ
Պատանւոյն հարան ։
Ոգին փափկասուն ,
Հալեցաւ զէտ մոմ ․
Թախծելւոյն Սօսայ
՚Ի կարեկցութիւն ։

Որ փառի գեղով,
Եւ չունի զորով,
Իժ է մահաթոյն՝
Վառ ընդ վարդենւով ։
Իսկ Դիցուհիս մեր՝
Ակնարկեալ առ Սէր ,
Ձև զայս օրինակ,
Տընա հարցանէր ։
"Ուժգին [13] Դից վերնոց ,
Տեսանես յայնկոյս .
Պատանի սուզեալ
Խոր 'ի սուգ ողբոց ։
Աշխարհ ընդհանուր
Ցնծայ համահոյլ .
Իսկ նա բառնայ սուգ
Դրոշմ 'ի դէմս իւր ։
Սէր պարծոյց առ նա .
"Ո՞չ [14] ես կոյր ծնայ ,

Եւ զի՞ ասկյես ,
Թէ ո՞վ լալի՝ լայ ։
Նետաձիգ լինիմ ,
Ցո՞ և հասանիմ ․
Եւ զի՞ փոյթ ունիմ ,
Թէ ո՞վ լալի՝ լայ ։
Ո՛չ մայր խնայեմ ,
Եւ ո՛չ խոկ 'ի կին ․
Աշխարհ բովանդակ
Ինև լալի՝ լայ ։
Գուցէ Սօնդիպեայ ,
Արին իցէ դա ․
Զորոյ մահ անկարծ
Ողո՛րմ լալի՝ լայ ։"
" Իբրև՛ գեղեցիկ
Ցանձըն թշուառիկ ,
Պայծառանայ սէր ,"
Հառաչեաց Աստղիկ ։

"Ամո՛թ [15] Անմահից
Որք ըստ անքանից
Վըրնջան ըղձետ
Հեշտիյն Յաւէրժից ։
Այլ գընա՛մ Քաղցրին ·
Եւ զայս տա՛ր հերին ·
Զոր ձեռք Շնորհաց՝
Հիւսեցին զոտոլիկք ։
Ա՛րկ զուլամբ նորա ,
Որպէս [16] հայն հըմայ ·
Եւ զոգին սառած՝
Ցիս յափշտակեմ ։
Յատկութիւն որում
Յաւիտեանց թաքուն ,
Ա՛յս է՝ որ վշտաց
Բերեալ մնացօն՝
Փոխան տրտմութեան ,
Տայ որդւոց մարդկան

Նոր հանդէս սիրոյ
Եւ ուրախութեան :"
Մ՛օր հրամանին՝
Հնազանդ որդին ,
Մինչ հիր Ցանկութեան
Հար ի պատանին ,
Որպէս շանթահոս
Երկաթ ի բովուց ,
Մուխ ի սառուցեալ
Աւազան ջրոյ ,
Այսպէս Սիրոյն բոց
Ներգործեալ ի Սօս ,
Անմահ տարփանօք՝
Զոգին եռացոյց :
Այլ յայրմէ եղեալ ,
Որպէս խելագար ·
Մուայսու զանձն իւր ,
Եւ Սօնդիկ իսպառ :

Յարեաւ ՚ի կիտին ,
Ըստ Սիրոյ բանին .
՚Ի կոչ ցանկութեան
Զօգաւ կամովին ,
Ո՞ւր է ծանրութիւն
Անշարժ ՚ի կեդրոն ,
Կամ սիրտ , որ անքարշ
՚Ի տուանց սիրոյն ;
Գնա՛ւ , որ անարիւն
Արծանի հանդոյն ,
Ճարտար սոտութեամբ
Խամրես բնութիւն ,
Բե՛ր բարոյութիւն .
Եւ մեկնեա՛ ինձ սո՛յն .
Կարէ՞ հուր ժուժել
Թէ հուպ վառօդոյն ;
Ուէև զո՛ւր լալիք .
Սօս երայց հերիք

Ջիւրոյ Սօնդիպեայ՝
Ցուրտ ոռկերտոտիք ։
Եւ առեալ զաճիւն
Մաքրափայլ մարմնոյն՝
՚Ի գիր հանդստեան՝
Ջեռեղեաց իսկոյն ։
Տնկելով յերկի ,
Ցխրագին նոճի ·
Ցօղով արտասուաց՝
Սփռեաց հովանի ։
Այլ զի հրաւէր
Անմահին ՚ի սէր ,
Հլութիւն կամաց՝
Զողջոյն պահանջէր ։
Մանուրոյ գընաց ,
Ը ՚ի հեշտոկցըն յայց ·
Որ սոսկ հայեցիք
Զոգին հրդեհեաց ։

Ձոր լերև ետես ·
Թնդայ սաստկապէս ·
“Ողջո՜յն քեզ,” ասայ ·
“Դժխո՜յ լուսերես ։
Թէ հողեղէն ես,
Ի՞մ այդքան փայլես,
Եւ թէ հրեղէն՝
Ուստի՞ մարմին քեզ,”
Ասաց պատանին ·
Եւ զոյգ ընդ ձայնին՝
Հպէր 'ի համբոյր
Այտուց Անմահին ։
Իսկ հեշտասիրին
Խլիրտ 'ի սրտին,
Այլ 'ի դէմս իւր կե
Լրջութիւն բանին՝
Խէթ խոժոռ աչօք,
Որ յաւելոյր շուք

Արծարծուն գինւոյ ,
Անհարկեալ՝ ասայ .
"Ի՞նձ հուպ մօտչիս դու ,
Ժպիրհ մահացու .
Ու՞ր ծնրին աստուածք
Քո [17] երկրպագու ։"

ՍՕՍ

"Ներեա՛ ինձ , Դիցո՛ւհ .
Հաստատես այդու ,
Զանշուշտ խրատունս
Խո՛ր առ քեզ սիրոյ ։
Օ՜ ի մ՛ւլ , որ ետես՝
Ոչ սիրեաց ըզքեզ .
Կոյր [illegible]տուածքն լիցին .
Եւ լ[illegible]աւոր՝ եմ ։"
Զի՛նչ լիցէ լեզու
Կընոջ գեղանւոյ .

Թէ ոչ աւելորդ
Աճուրդ անդաւոյ ։
Ուր աչք անբարբառ
Առաւել ճարտար
Խօսին ըզկըրից՝
Քան զարհին հանճար ։
Մին՝ այսպէս խունջիկ
Մին՝ այնպէս մնջիկ ,
Մին նազ նազելով՝
Գործ առնէ հերիք ։
Խոր գաղտնեաց սերին ,
Փորձ էր Դիցուհին ․
Փորձ և բնութեան՝
Քաջ Ախոյենին ։
“Ո՞վ լիցես ,” ասաց ․
Եւ զինչ այս քո լաց ․
Ո՞ զոգիդ անմեղ
Սուսերել կարաց ։”



ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

## ՍՕՍ

“Ո՛հ Դիցուհ Ըղձից ,
Իմ անցք աղխոտից՝
Զոր Սէր շարադրեաց .
Օգնեցէ՛ն ինչ քեզ ,
Արւոյն եւ հայոց ,
Մխակ որդի Սօս .
Որ ՚ի զարգանալ
Մանկական տիոց ,
Ուր զՋոկ Ջորոյ ,
Ուղտուց և ձիոց ,
Եւ զանբաւութիւն
Հայրենի զանձուց ,
Զորքայ ինքնակամ,
Յաշխարհ ամենայն .
՚Ի գեօղ և քաղաք ,
Ծանօթ և անծան ,

Եւ իբր ահագին
Յաղթ արաստոյ վէմ
'ի գահէ Մասեաց
Ճայթուցեալ 'ի բայ,
Հոսմա՛յ ուժգնակի,
Հարմա՛յ, և հարի՛·
Փշրեցմա՛յ այն,
Բայց և փշրեցի՛ ։
Բերմանց աշխարհի,
Պատրանաց բաղտի·
Բոհմանց օտարաց՝
Բասրանաց Ազգի,
'ի տանջ և տըրոր,
Գըխովին տոգոր
Տարայ տակաւին,
Ուսանել ինչ նոր ։
Այլ միայն գըտի,
Ձայս խըրատ ոսկի·

Թէ այր հեզամիտ
վեհ է ճշմարիտ ։
կամի՞ս կեալ անփորձ ,
՚Նոյն ջանա՛ այլոց ·
Եւ զոր ինչ անձին՝
Արա՛ ընկերին ։
·Քանզի տես · մարդ ո՛վ ·
Որ կեանս ապահով,
Ղեկեաց ընդ անհուն
Աշխարհի այս ծով ։
Ինձ այս կեանք դպրոց ·
Իսկ վարժապետ՝ փորձ
Բուռն և բանացի՝
Դասեր շատ ուսոյց ։
Յլ ՚ի Հնդկաստան ,
Ուր սին [18] Բրահման
Իշխէ տիրաբար՝
Խորհրդոց մարդկան ։

'Ի քաղաք ուրեք,
Հասի յոստանիկ,
Ոյր անուն[19] կանոզ,
Պարիսպք՝ պղնձէք։

Ուր գիշերոյ մութ
Անխայեաց ինձ մուտ,
Բանակ բայօթեայ
Հարկի ցառաւօտ։
Իմ ծառայորեար,
Արբեալ ըղձեկտար
Մորփեան մեկոնից,
Քաղցր ՚ի քուն խորդայր։

Իսկ իմ ընդ աչաց,
Քուն ՚ի քէն զինեաց.
Նստայ մտախոհ.
Ջաշխարհիս բերմանց։
Ուր պատկերացան,
Մտաց տեսութեան՝

Անհամար դիմօք ,
Ցնորք ուրուական ։
Մերթ ասեմ յինքեան ,
“Թէ հիմ[20] գանթարվայն
Փոխեալ անիծիւք
Ցիշդ կերպարան ,
Կարաց հրաշիւք ,
Ասա՛ , հըմայիւք .
Պատել զայն քաղաք
Եօթն պարսպօք ։”
Մերթ յիս գամ անդրէն .
“Թէ իմ հնարին ,
Չի իբրև զբոց
Ցոսկեղէն բովուց ,
Զուլեցեալ ՚ի բայ՝
Ազգ[21] Ակնիկուրաց ,
Քաղաքիս մեծի՝
Ամբարձին զփառս ։

Ամենայն ինչ հին ,
Թէպէտև չնչին .
Մինչ չարիք անգա՛մ ,
Պարծանք համարին ,
Անցեալ ժամանակ
Պարծ յիւր յիշատակ .
Յինքն գրաւէ
Զամենայն փափագ :
Այլ փորձն անվրէպ ,
Որ ուսոյց 'ի դէպ
Կշռել ըզներկայն՝
Յանձին երաշխէպ ,
Յանդիման արար ,
Զաշխարհ ծայրածայր ,
Ընդ թշուառութեամբ՝
Դիպուածոց հոծեալ :
Ատի թուէր ինձ ,
Ըզգալ ըզկսկիծ

Մօր յօրհաս մանկան՝
Մաղկատել երկնից ։
Խոկ անտի՝ հարսից՝
Հո՛ծ ըղձնարից
Հոգեվար սիրոյ՝
Թօթափել թախիծ ։
Աղքատ առ քաղցի՝
Ընկեալ 'ի բացի ,
Տոչորէր որպէս
Ձուկն 'ի տապակի ։
Եւ զե՞ մի առ մի ,
Վայր առանց վշտի
'ի ներքոյ երկնից՝
Ոչ ուրեք տեսի ։
Ընդ շրջան ամաց ,
Եւ անիւ կենաց .
Ցանսահմանութիւն
Հոլովէր անդարձ ։

Որպէս շիթ ցօղոյ՝
'ի վերայ սիզոյ·
Ցողդողդ 'ի վտանգ՝
Է այս կեանք մարդոյ ։
Դարձայ ես ապա ,
Ը՞նդ անձին խօսեցայ·
Փո՜ւչ[22] մարդ · Թէ աշխարհ
Այսպէս գայ՝ գնայ ,
Ապա դու զի՞ կաս ,
Գրաւեալ սստեաց .
Խորհեա՛ց մի , և տե՛ս .
Աշխարհ ո՞ւմ մնաց ,
Ո՛երութիւն ամաց ,
Թարց գործոց բարեաց՝
Ոչ զոք փրկեցին
Յաւուր արտասուաց ·
Թէ չար ես զղջա՛ ·
Բարւոյն հետևեա՛ .

Եւ ՚ի գութ երկնից
Ապաստան գընա՛ ։
Քանզի դողին խոկ ,
Արայն [23] գեղեցիկ
Մեռելոց երկրի՝
Եկաց անդրանիկ ։
Ուր վիճակք չարաց
Ըստ պղպջակաց ,
Ցնդեալ վերացան՝
Զուրկ յիշատակաց ։
Մ՚ԻՆՉ այս և մինչ այն ․
Մասն հաստատութեան
՚ի պատառուածոյ
Ամպոյն՝ երևան ․
Շողէր ընդ աղօտ
Յերկնից վերնոլորտ՝
ՅԱնահտական [24] Դից
Փայլուն ցառաւօտ ։

Օ որ Ներքուստ Գանգէս
Ցիւր անբաւ ալիս՝
Թեկրեկէր ՚ի բիւր
Ձև զարմանաւոր ։
Այլ յուշ · տեսարա՛ն
՚նոր գայ յերևան ։
Կա՛խ ըղպարսպաց՝
Փայտակե՛րտ տապան ։
Օ որ ձեռք դողդոջուն
Լարասող թողուն ,
Մինչ հասուցանեն
Խըրամից ամրոյն ։
Ուր իբր անպիտան ,
Լքուցեալ դառնան ·
Եւ վատ ըղվարուց
Գաղափար ինձ տան ։
Այլ ես յառարկայ՝
Զարմանաց մատեայ ,

Եւ ստուգեցի ,
կուսան մի ահմ .
Որ խիստ անիրաւ
Եւ չար միջոցաւ ,
Խոցոտեալ և կայր
Արիւնաթաթաւ ։
Որ լուսով գեղոյ
Յաղթէր արևոյ .
Մինչ բանայր զամէն
Գաղտնիս խորհրդոյ ։
Իսկ քաղցր և ազդոյ
Հողն հայեցուածոյ՝
Բեղմնէր ՚ի բարբառ՝
Զամլութիւն ուշոյ ։
Շղարշ նրբաթել
Ընդ քարշ կիտուածէր ,
Խաւ ՚ի խաւ հարեալ
Սիտական [25] Աղբեր ։

Կուռ ՚ի գիսակն ,
Ակատ մեծագին .
Իբրև [26] հոյլ հզօր
Վառէր վիշապին ,
Յականջացն ՚ի վայր ,
Գինդ ակնապարար .
Յեռու՛ և ռընգան՝
Քթոց [27] քարաշար ,
Մահիկ մարգարտի ,
՚Ի պարանոցի .
Կանաչէր և՛ կուրծ ,
Շարան զմրխտի ,
Բազպան բիւրեղեան ,
Կապեալ յարմնկան ,
Որ բաղտ , քան բաղտի՝
Յուռութ պահապան ,
Ապրջանք ձեռաց՝
Յականց մեղեսկայ ,

Իբր գլխեմ[28] Սանեայ
Որոր յաստեղաց ։
Կամար յակնթեայ
Ըզմիջով նորա ,
Խալխալք սրունից՝
Ոսկի[29] Սումատրայ ։
Գամ փաղփաղակի
Եւ տամ կաթողնի ,
Համբոյր սուրբ այտուց
՛Նորուն բալենի ,
Մինչ այսօրինակ ,
Առնուի Ճաշակ
Վարդաբոյր շնչոյ՝
Հրաշագիւտ հուրւոյ ,
Քո՛յ զինեալ Որդիդ
Որ շրթանցըն պէտ՝
Դարանեալ հոկէր ,
Ցիս շանթեաց ըղնետ .

Կոտրեաց կարծեվէր.
Հատոյց բիւր եղեր.
Եւ զինչ քան զայս մեծ,
Արար բնաւ Սէր։
Զո՛յն տուք քաջարանց
Հսկայից մեծաց.
Գալ և վկայել
Սիրոյն դաւանայ։
Թո՛ղ քեզ[30] Շամիրամ,
Որ զայս Հայաստան,
'Ի խնդիր խանդին՝
Ողողեաց յարեան։
Կամ դէպք[31] Պարխայ
Ընդ իւր հեղինեայ.
Որ եղծ աւերեաց
ԸզՏրովադայ։
Սամխան[32], Դալիլա,
Պիրամ[33] ընդ Թեսպեայ.

Եւ բիւրք ընդ նոսին՝
Թո՛ղ լիցին վկայ ։—
Անկայ հոգեվար ,
Թուէր մինչ խապառ ։
Թէ բարձաւ յինէն
Եւ բան՝ և հանճար ։—

# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

# ԴՐՈՒԱԳ

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳՈՑ

Աստղիկ ընդ Սիրոյ և Շնորհաց նոր նստի լսել · Սա շարունակէ ասել զհանգամանս դարմանելոյ վիրաց, զգիւտ Պիլպեայ, զբժշկութիւն, զանկանոն տենչ իւր, և Սօնդիպեայ հրաշակերտ խրատքն · Որոց անլուր՝ մեկնումն իւր յանապատ, ուր տեսանէ զտատրակին օրինակ · զղջայ 'ի դարձ · Սօնդիպեայ պատահեալ՝ տանի զտերեն յԱյոլէ · Սարոնաքայ հարց և փորձ · դարձն լի զանձուք · յաղթել զազանին · միջարկութիւն Սիրոյ և Բաղտի, Ծոխութեան բերմունք · Կալիդասայ հարձին նըկարագրութիւն, զինէհարութեամբ պագշոտել և ամօթահար դարձ Սոսայ · յանդիմանութիւն Սօնդիպեայ · ցաւ սրտի Սոսայ · և անէծք անհնարինք 'ի Կալիդասա · յոր և Կուսին հարեանցի ակնարկութիւ, և յանկարծ կապ տալ բանից ։



ՀՍՀ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

# ՔԵՐ

’Ի

# ՍՕՍ ԵՒ ՍՕ՛ՆԴԻՎԻ

## ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՂՏՐ Աստուածուհին ,
Որ միշտ յանկողին
Վարդենի՝ Հանգոյշ
Անուքէր զօգին ·
Յարձան ինչ խոշոր ,
Բազմեցաւ անդոյր ·
Շնորհք [1] շարաշար
Ծնրեցին բոլոր ,

Իա՜ և Մանո՛ւկ Սէր ,
Որ խաղուց զհետ էր ,
Զճարդ զուսպ յանկճխաս
Հըրաշից լինէր ·
Յորժամ Սօս վանեան
Ըզկարգ պատմութեան ,
Այս ձև վերստին
Առնոյր ՚ի բերան ,
“Այլ յիս գամ կրկին ,
՚ի հնչիւն ձայնին ·
Որ մեղմ և ըզմայլ
Սուղեցաւ յունկն իմ ,
“Ո՞վ իցես , հե՜ր դու ,
Որ յայս նեղ ժամու ,
Գաս հաղորդ վշտաց՝
Եղկելւոյ մրոյ ,
Ո՛վ ձեռն անիրաւ ,
Որպէս զօրեցաւ ·

Զրխ երախտեաց՝
Ածել ապաշաւ ,
Այլ սակայն էմնց ,
Ժամ՛ գանգատանաց .
Եւ կոյր ընտրութեան՝
Մահ մատուցաւ վարձ ,
Ողորմ՛ած Աստուած ."
Հնչեաց և հեւաց ,
Եւ թուեցաւ ինձ ,
Թէ մեռաւ՝ գընաց ,
Բայց հուպ մատուցեալ՝
Տեսի , որ շունչ կայր .
Եւ արիւն վիրաց
Տակաւին երթայր ,
Թողեալ անդ զնա ,
Իսկոյն փութացայ .
Եւ զարթուցեալ իմ՛
Բանակ բացօթեայ՝

Բացի զդեղարան ,
Բերի՛ զբալասան ,
Պատեցի զնորա՝
Ըզվիրաբերան ։
Խոնարհեաց գիշեր՝
Ցհաւուն խօսել ․
Եւ ոսկեզօծէր
Զաշխարհ Լուսաբեր ,
Ուր վաղայարոյց
Եզնավարն ՚ի լուծ ․․
Խիղճ ՚ի հատանել ,
Զնորհ յանդամոց ,
Հարսին սիրայնոյ՝
Որ արթուն ցայգոյ ,
Խոնջ յարարըս տան՝
Մուտ ՚ի քուն ժամու ,
Ցուշիկ մատուցեալ ,
Դիէ ըզնեկտար

կէծ կարմիր դիմաց՝
եւ մեկնի ՚ի վար ։
Միա՛յն Հաստատուն
Այն երջանկութիւն՝
է կի՛ն տնաւոր ․
Քան զոսկի բազում ։
Այլ մեք ՚ի վէպ մեր ․ —
Դարմանեալ ըզվէր ,
Ցո՛ւշ և ՚ի ժամուն ․
Օրն առաւօտէր ։
Բարձեալ ՚ի դեսպակ ,
Ցո՛յն հանի քաղաք ․
Ուր վարձու կալեալ՝
Ինձ տուն ընդարձակ ,
Հանգուցի՛ յուշիկ ․
Ցանկողին հեշտիկ ․
Եւ չոգայ , բերի
Ըղձալատար բժիշկ ,

Լար անդ ՚ի դարուն ,
Բժիշկ իմաստուն .
Ոյր համբաւ էր մեծ
Եւ Պիղպի անուն ,
Ազգաւ Բրահման ,
Խիստ ամպարտաւան .
Որ ծնաւ գոգջեր ,
Աւագ [2] Արհիման ,
Նա որ գիմեցի ,
Ոսկի տեղայի ,
Եւ առ Սիրուհին՝
՚ի ծունր իջուցի ,
Ո՞ր անհնարին ,
Կամ զինչ դժուարին ,
Զոր ո՛չ դիւրացոյց
Դեղներես ոսկին ,
Սուտ [3] Բերանածին ,
՚ի տես Զքնաղին ,

Չասիցես · ո՞րպէս
Ջինջաւ գլխովին ։
Օ՛չ եթէ յայնժամ ,
Դիցո՛ւհ հեշտութեան ·
Տեսեալ էր քո զայս
Վիրաւոր շուշան ։
Որպէ՛ս ՚ի խոր ձեանց ,
Զփաղփիւն փառաց ,
Արձակ նշողէր
՚ի միջոյ վշտաց ։
Պիղպի բժշկեաց ·
Այլ իմ բոլոր զանձ ,
Եւ անդորրութիւն՝
Ջրոյ պէս գընաց ։
Սարկայ՝ թէ ահա՛ ,
Հաս ժամ ոսկեկայ ·
Յոր ինձ տրխուր
Վաստակոց զայր նա ։

Պարզեալ ըզբազուկ ,
Շուրջ գոլոր զմիջօք ·
Զայս ձև առաջեաւ
Ծներեցի յողոք ։
" Իմ հնդիկ հուրի ,
Քանի՞ մի քանի՞ ·
Տիգօք աչաց քոց
Շամփիրես զիմ հոգի ։
Ի՞մ պիտի լինիս ,
Ասա՛ խնկապէս ·
Թէ ոչ՝ է՞ր այսքան
Տրորես դու զիս ։"
Նա չլինեաց ամօթ՝
Զկոյսն անծանօթ ·
Ցայն ծիրանափայլ
Երանգ անաւօտ ,
Զոր Հարսունք[4] Դաշտաց ,
Ցանուշակ ծաղկանց ·

Մնդոյր հաւաքեն
Վասն Օրիորդաց ։
Որ անդրամեստ և լուրջ ,
Մնաց անմռունչ .
Վարկայ՝ թէ սիրոյն
Կապեցէ ըղփունջ ։
Բայց անակնկալ ,
Լուայ , զի կարդայր
Գիժ գլխոյս վերայ՝
Ձագուխուն տումար ։
Սպաժոյժ ըղձի ,
Ազդէ՞ ոյժ լեզուի .
Զոր այսօրինակ
Ծորեաց յիմ հոգի ։
“ Ազնիւ անծանօթ .
Քոյ մարդասէր փոյթ ,
Քեզ իմոց կենաց
Արար կիսատուած ։

Այլ մի՛ անըմբեր՝
Ջերր ՚ի սէր խառնէր ․
Առաքինութիւն
Անգոսնէ զոճիր ․
Գործ զՎերին Դից ,
Գործեցեր առիս ․
Դիւցազնաբար կա՛ց ,
Թէ օգտիլ կամիս ․
Ո՜ ինչ պարծանք Արւոյն ,
Որ յաղթեաց մահուն ․
Կընոջ անկելոյ՝
Աղարտել զանուն ։”
ՊԱՐԾ ՚ի շուք սերին ,
Գոչեաց Դիցուհին ․
“ Պարծա՜նք արդարև
Հնդկաց աշխարհին ։
Որ ծնաւ զաւակ ,
Վարուք հրեշտակ ․

կանանւոյ երկրին՝
Չքնաղ օրինակ ։
գիտութիւն , այո՛ .
Համեմատ դեղոյ .
Այլ պարկեշտութիւն՝
Պարգև Աստուծոյ ։
Սակաւ գտանի ,
Որ 'ի վտանգի
կենաց՝ հակառակ
Մղաց , զինուորի ։
Զի՞նչ օգտեցաւ կին .
Որ անզուսպ յըղձին ,
Զանձըն պատուական՝
Կորոյս հողագին ։
Ո՜ի կարծիք մարդկան ,
Ո՛չ իրին յարգ տան .
Այլ սոսկ միջոցին՝
Որով ստանան ։

Զի՞նչ լցէ ոսկի՝
Թէ ո՛չ՝ դիրդ երկրի ·
Այլ զի հաղուագիւտ՝
Հանապազ յարդի ։
Նպեղեան ձեռաց՝
Քերուբ քանդակայ ·
Եւ արժան բարձու՝
՚ի մէջ աստեղաց՝
Է Սօնդիպի ‚ Սօ՛ս ·
Այլ հազար ափսո՛ս ·
Թէ չօգտիցեն գովք
Հանդերձեալ դարուց ։
Վասնորոյ յապայ ·
Ջոք յորդւոց[5] Նանեայ ‚
Վիպասան վարուց ·
Յարուցից դիմս ‚
Որ յեւ ՚ի վՃիռ ‚
Բանից մարգարիտ ·

Հիւսիցէ դիմս՝
զպսակ Ճշմարիտ ։"
"Լուսակ անատխեղծ ·
Թո՛ղ քո Բանաստեղծ ,
Յարիցէ ՚ի լար
Հարկանել զիմ [6] ա՛ր ։
Որ վառեալ սիրով ,
Որպէս հալ ՚ի բով ·
Ղահեցայ ոչ ինչ՝
Նորա խրատով ։
Որ յիմ տագնապի ·
Այնքան կայ յուշի ,
Որքան ջուր ՚ի մաղ
Հողմ ՚ի վանդակի ։
Ուստի յուսահատ ·
Թողեալ զանարատ
Ակն երանութեան՝
Չոքայ յանապատ ։

Ամէն առարկայ
Թուէր անոպայ ·
Եւ սանդարամետք՝
Աշխարհ ոսկեկայ ։
“ Գանձ , ասեմ՛, այլ չէք ·
Ոչ ազգ՝ ընտանիք ·
Ցրուեցան ծառայք
Եւ ձիք և ջորիք ։
Որպէս թէ չարիք
Այս՝ չէին հերիք ·
Խաբեաց զիս՝ և խիստ
Հնդկացւոյն աղջիկ ։
Արդ՝ ցուցէք ինձ , դիք ,
Թէ ո՞ւր աստանդիկ ,
Կոյր բաղդիս բերմամբ՝
Ելից մուրացիկ ։”
Որպէս խօսեցայ ,
Եւ խոր սուզեցայ ,

Յանդունդ վարանաց
Մարն[7] Աժդահակայ ,
Մինչև վեհ բնութիւն ,
Բեր ՚ի տեսութիւն .
Հէգ մնաց խմոյ՝
Նորոգ զարմացօն ,
Օ ի յերի գահին ,
Ցոր կամ՛ ՚ի գնին ,
Անկանէր խարխուլ
Որմ՛ աւերակին ,
Ուստի սուր մնջին ,
Թևոց թրթռին ,
Ցարոյց զիմ՛ դանդաղ
Ուշադրութիւն ,
Կամայ՝ ակամայ ,
Ցայնկոյս Հայեցայ .
Եւ տեսի զտառապ
Տատրակ ՚ի տաղնապ ,

Զի մահաբերն օձ ,
Պարզեալ գլխայթոց ,
՚Ի բոյն զաւ ՚ի վեր՝
Նկրտէր ծագուց ։
Սուր զո՛յգ ալիկար ,
Իբր արդարև մայր .
Փոյթ ՚ի փրկութիւն
՚Նոյուն մահանայր ։
Թաքէ աղեաց մօր .
Եւ ա՛յնց որխուր՝
Հանցեն զաւակունք ,
Գործ արժանաւոր ։
Ո՛րդ և վարուժանն ,
Տեղ անմեղութեան
Վառեալ ՚ի վրէժ
Ձագին կորստեան՝
Քան ըղկար անձին՝
Քաջ ՚ի վտանգին ,

Մրցէր ու կոցէր ·
Մնջէր ցաւագին ։
Որպէս թէ ՚ի ձայն՝
Քաղցր Անմեղութեան
Կոչէր զոք որբոց
Խւրոց օգնական ։
Տեսի՛լ աղիտիս ,
Գալարեաց զաղիս ·
Հարի՛ զԹշնամին
Տիգաւ Նիզակիս ։
Ընկա՛ւ ախոյեանն ,
Ցերկիր անկենդան ·
Իսկ տատրակն ՚ի գէջ
Հանեալ ըղձլոէժ ,
Երիցս Ճխալով ,
Ճախրեաց ըզբընով ·
Եւ Երիցս սաւառն
Ած զիմով զլխով ։

Իբրև երախտեաց ․
Արարեալ ինձ դարձ ․
Անկաւ ՚ի գետին ․
Եւ զոգին փչեաց ․
“ Քաղցրիկ բնութիւն ․
Քանի իմաստուն ,
Ո՛չ իցէ , ասեմ ․
Քոյ ամէն շարժիւն ,
Որ տաս օրինակ
Ցոյս անմեղ տատրակ ,
Ամուսին սիրոյ ,
Ծնողական գթոյ ։
Այլ նոքա անցին ,
Եւ ինձ զո՛գ թողին ․
Հոգ նորափետուր
Մատաղ որբերին ։”
Յիս առի՛ գնային ․ —
Այլ լցա՛ւ սիրտ իմ ․

Որ այսպէս անփոյթ՝
Լքի զԱնձկալին ,
Ոյր պարկեշտութիւն ,
Ջէն կուսից պարուն ․
Էր լոկ՝ որ զսպէր
Զիմ պագշոտութիւն ։
Փոշիման դարձայ ․
Եւ տխսի ահա՛ ,
Զի հնդիկ հուրին
Ընդ յառաջ իմ՝ գայ ։
Ցորժամ՝ յիս հայան
Աչք մեղրածորան
Ցօղովք արտասուաց
Հեկեկաց զայս բան ։
"Ո՛հ պատուական Սէր ․
Սիրոյ սրտիս տէր ․
Ինձ բարկանի՞ս դու ,
Այլ մի՛ մեղանչեր ;"

“Բա՛ մինչ երբ կարօտ
Մնայցեմ սիրոյդ.
Մահ ունի զիս, կա՛յս,
Եւ քո դեռ չէ՛ փոյթ։”
“Երկիր պատանիդ.
Գուցէ զմարգարիտ
Անաշխատ գտեալ՝
Կորուսցես դարձեալ։”
“Եւ այդ քո վճիռ
Տեսցէ զիւր ոճիր.”
Ասացեալ ցընա.
Անկայ ի մախիր,
Օ՛ ուլամբ կաթողնէ.
Սիրուհին փարի.
Եւ սիրտ իւր սրտիս
Տայ սպեղանի։
Չիմ նորոգեցայ
Ընդ Հայիլ նորա

Մահացուն սիրով
Ղօրդ անմահանայ,
"Մ՛ փորձութիւն իմ,
Դարձիր վերստին.
Ջոհել զիս," ասաց,
"Սիրոյդ կրակին:"
Ա՛ռ քեզ զայս պիտակ,
ՅԱյովդ 8 տար քաղաք
Տուր ըներքինին
Աւագ Սորոնաք:"
Խորհուրդք էին խոր,
Ինձ ինքն, և գործք իւր.
Մխոք մեկնել կարէ
Ջկանանոյն ցնոր,
Օր խուրաքանչիւր,
Գօղ ծնանէր նոր
Ախիթ զարմանաց՝
'Ի գեղն ահաւոր:

Տերևիկն յԱյովդ ·
Տարայ կարի փո՛յթ ·
Եւ ցներքինին
Ետու խնամոտ :
Որ բարձր 'ի բազմոց՝
Ծօճէր հեծանոց ·
Զերկակի գանձուք՝
Գոյից և գեղոյ :
Իբր զխլուրդ կոյր՝
Որ զանձ թաղէ խոր ,
Այլ 'ի վայելից
Մէն նստի և զուր :
Կամ հրէշ 'ի հուր ,
Որ ձոյլ 'ի սարսուռ ·
'ի հրճուիս հարսանց
Կայր լուռ և տխուր :
Եւ փմուք այսոքիկ ,
Զոր տան արքունիք ,

Ջուր կակաճանաց
Ջոհել ըղմարդիկ ,
“ Ո՞ւր իցէ .” ասաց .
“ Դժխոյն սիրայրեաց ,
Տալեան տերևոյ ,
Հզօր աս տուած ;”
“ Փայակ 'ի պատգամ ,
Վարձեալ տարաժամ.
Ծրար 'ի ծոցի՝
Քո զառաջեաւ գամ ;
Եւ ասել ինձ իւ .
Թէ զի՞նչ այդ տերև
Ասիցէ զինէն ,
Պատի՞ժ , թէ պատիւ ;”
Արքան ջանացաւ ,
Սակաւ օգտեցաւ .
Երկիցս Արեգակն՝
Հարաւ ընդ հարաւ ;

Մինչ դարձաւ Արհին
Եւ բերեալ ինձ ձին ,
Մատոյց զառաջեաւ ,
Պարկ ՚ի գաւակին ,
"Արի՛ ել , Օտա՛ր ,
Յայս սոս ոսկեսար ,
Եւ զոր կամս " ասաց .
Զգուշութեամբ տա՛ր ,"
Որպէս ծանրութիւն
Մղի ՚ի կեդրոն ,
Կամ դէպ ՚ի բևեռն
Զգի մագնետոն .
"Նո՛յն ես ՚ի ժամուն ,
Յուս հեծեալ ձիոյն .
Ծալ ՚ի ծալ հատի
Զուղւոյն ծանրութիւն ,
ԱՅԼ [9] մեծանախանձ
Հիմանտեանն աստուած ,

Խանդացեալ սիրոյ
Անմեղ տարփածուացս ,
Հրէշ մի զարզանդ ,
Դժնդակ և ժանդ .
Նոր գո՛գջիր [10] Գրող ,
Պահապան եդ անդ ։
Իրան խաւարին ,
Դէմք ձիւաղային ,
Ցորմէ և դժո՛խք
Սարսեալ դողային ։
Կոթող մնային ,
Ցոր դեք խաւարին ,
Փոխանակ ոգւոց՝
Անդուլ եռային ։
Աչք հրբուղխք էին ,
Ցայտ արձակէին ,
Ուստի քուն վերազ՝
Փախուստ առնուին ։

Սա ՚ի դրան տան ,
Յորում ծնեան
Իր Սօնգիպի մեր՝
Հսկէր տարաժամ ։
Այլ ո՞ւր խոչ սիրոյն ·
Ո՞ւր դժուարութիւն ,
Զի՞նչ որ յաշխարհէ՝
Արգելու զնոյն ։
Յաւէտ զայրագին
Վառեցայ սովին ·
Դատէր Սուրաջայ
Պաշտել ըզքապին ։
Խոյացեալ ուժգին
Մատչիմ ՚ի տեղին ·
Բայց լուեալ զորոտ
Ահեղ Ճիւաղին՝
Որ ասէր · “Մերժեա՛ց
Պատանի՛դ ՚ի քա՛ց ,

Թէ ո՛չ փոխարկես
Ըզմահ ընդ կենաց :"
" Մերժել ՚ի սիրոյ ,
Սօնդխպեայ խմոյ ,
Ճլուա՛ղդ ու բուական .
Սպառնամս ինձ դու ;
Ցնո՛րդ ահագին .
Թօլցես մահ ինքնին .
Մեկնել զիս աստի ,
Չիշխես տակաւին ;
Քոյ յոխորտանաց՝
Ա՛ռ զայս , ասեմ , դարձ .
Ընդ բանիս՝ բանամ
Նիզակ երկնամբարձ ;
Մ՚օտ ինձ հասանէր
Ցորմ զնա վարսել .
Սոսկալին հրէշ
Գէշ Թռչնոյ դնել .

Թէ չէր Սիրուհին
Ջինջացեալ սիրտ իմ,
Ձերանգել ըղձէր
Արեամբ չուառին ։
Եւ դարձեալ առ իս ,
Քաղցրութեամբ բանիս .
Որ խո՛ր , կարի՛ խո՛ր
Ազդեցաւ յոգիս ։
"Որ ետուր պայման .
Իսկ արդ էանց ամ.
Եւ դու նո՞ր դառնաս ,
Իմ կենաց պաշտպա՛ն ։"
"Պժխո՛յ Սիրուհեաց ,
Թէ քեզ ամ էանց ,
Ինձ " ժուկ մի ողջոյն ,
Թարթ ական թուաց ։"
Այսպէս խաղ առնէր ,
Աչացուն քո Սէր .

Զուարկայ ըղձիս
Ցաւէտ անուշել ։
Իսկ իղձն աստանօր ,
Որ յանկձիւս էր խոր ,
Այսպէս առ Արին
Բաց ըղբերան իւր .
" Թէպէտ մերկ ծնայ ,
Սակայն հաւատմ ,
Որ ՚ի մերկութեան
Կամ՝ ամեներան ։
Ընդ հիւղ աղքատին ,
Առաւել հաճիմ .
Քան ընդ արքունիս
ցաներան [12] քաջին .
Մարդ՝ քանի պարզ կեայ ,
Աճի սէր նորա .
Բայց ընդ ճոխութեան
Ոխն յաւելանայ ։

"Քեզ որպէս թուի,
փոխումն վիճակի.
Նախ և ըղկընի՝
գանձուց աշխարհի." —
"'ի չա՛ր անդր կոյս —
Այլ հազար ափսոս.
Զի թէ Բաղտ, թէ Սէր
Եւ կոյր էք, և կե՛ռ :
Իբր երաշտ և թօն,
Ցուրտ և ջերմութիւն.
Սոսկ 'ի կուրութեան
Իրար համաքուն :
Զի յորժամ բերի,
Քսակ գանձո՛ւ լի,
Ցվերջին դինար՝
Ետ ինձ Սօնդիպի :
Եւ ասէ," գընա՛,
գնեա՛, և ձեւեա՛

Քեզ սար 'ի սարուց ,
կասեան հտաւուց :"
Թուէր այս պատուէր
Զքարին գուշակել .
Զի իւրաքանչիւր
Երազէ ինչ իւր ,
Գնամ' անդանօր ,
Եւ ընդ նորանոր
Ապշիմ յաշխարհին
Առատ առեւտուր ,
Ուր էր հրապարակ
Լայն և ընդարձակ ,
Եւ մեծակառոյց
'ի կեդրոնին՝ ապ ,
Յորում Կալիդաս ,
Արքայասարաս
Կայր պերճ 'ի պաշտօն՝
Ոգւոյ հազարաց ,

Զոր գըտի՛ ինձ այր ,
Յոյժ քաղաքավար ·
Որոյ լեզուն մեղր՝
Եւ շուրթն էր շաքար ։
Սա շատ ստիպեաց
Զիս յիւր տուն և հաց ,
Մինչ հաւանութիւն
Տուեալ յակամայս ,
՚նստաք ՚ի սեղան
Պարարտ , համադամ ·
Եւ շուայտեցաք
Յամրի՛տ [13] դիցական ։
Հրաշագո՛րծ գինի ,
Տե՛ս քանի՛ յայտնի ,
Քարոզէ յունկան
Զգաղտնիս սրտի ։
Զի քուրմն ապիկար
Զիմ՛ ուսով անկեալ ,

Շընորհ աղերսէր ,
Ո՛ւմ շնորհ արար ։
“Թէ Ներսես , եղբա՛յր ,
Է՛ իմ սիրահար ։
Պարիկ , երգեցիկ ,
Եւ նուագահար .
՚Ի քէն գանթարվայ
Այսր ածից ըղնա ,
Երգով օրհնութեան
Հռչակել [14] զինդուայ ։
Որ աչագեղիցն
՚Ի մէջ Յաւէրժից .
Բոլորոջէ ըզքոց
Ապաժոյժ կըրից ։
Զի գինի և գեղ
Թէ չիցեն մի տեղ ,
Զխո՛րդ ազդիցեն
Որ հաճ և համեղ ։”

Ասացի“ գարո՛ն․
Քո՛ կամք, և քո տուն․
Ո՛վ է, որ չանսայ
Պատգամաց գինւոյն ։”—
Գընաց կալըդաս
Եւ աչա՛ սարաս,
Կնոջ դժնէի,
Եւ քեռ [15] կատաղեաց,
’Ի ներքս անդ ածեալ
’Նստոյց հաւասար․
Դև ’ի դժոխոց,
Գէսքն օձագալար ։
Ջի քածն աղաւաղ,
Աչս ունէր վավաշ․
Քիթըն թիզուկէս,
Պռնչուկն անտաշ ։
Բերան լայն բացեալ,
Կոկորդ կերկերեալ․

Երգն առասպելօք
Պղծութեանց խառնեալ ։
Գարշելի՛ ՚ի տեսոյն .
՚Նողկի՛ամ ցփսխօն ,
Ցուղեղ Հարկանէ
Ոգի ըմպելւոյն ։
Մ՚ինչ յիս գամ իսկոյն ,
Ասե՛լ ցիս ուրոյն .
“ Քե՛զ ինչ . որ սրտի
Սիրածն է սիրուն ։ ”
Անցին զէտ մրրիկք
Ցայգունք ՚ի յերեկ ,
Եւ ածին [16] զՏէր
Վըկայ չարեաց մեր ։
Չիք ինչ պատուական
Քան ժամանակ այն ,
Զոր վատնեն մարդիկ
Ղուայտ յարբեցութեան ։

Այլ եկն ապաշաւ,
Ցո՛յց զաւազանաւ,
Թէ ելք փափկութեանց
Զզուանք են իրաւ.
Յարուցեալ [17] խուժար ·
Դարձ ամօթահար
Արարի, առ ո՛վ —
Արդեօք հասկացա՞ր. —
Զքա՛ն առաջին,
Զոր կոյսն երկնային
Կշտամբեաց՝ տողեմ
'Ի պարսաւ անձին ·
" Տե՛ս սիրելի Սօս ·
Թէ այսպէս թողուս
Զիս խոր 'ի վարան
Կոյս անապաստան,
Եւ չլջիս մոլի,
Շուայտ 'ի գինի ·

Ընդ անառակաց
Քաղաքիս մեծի ,
Թո՛ղ ապա հատցի
Հաղկապ այն ոսկի ,
Զոր աջ երախտեաց
կապեաց 'ի միջի ,” —
Ասացեալ այսպէս ·
Ելաց դառնապէս ,
Ուր իբր 'ի հնոցէ՝
Ել ծուխ 'ի սրտէս ։
Ողբացի զա՛յն օր ,
Յորում՝ ծընայ Նոր ,
Եւ ըղձալիդաս ,
Զհաց և քաժ իւր ։
Որպէս խօթութիւն
Տանջող և տեւուն ,
Որ եղանիցէ
Բանիւ Բարձրելոյն ,

Տայ ախտացելոյն
Անբաւ դիւրութիւն,
Ջերմախտիս երկնից
Պատկերով Հոգւոյն.
Նոյնպէս յիմ փծուն
Այնինչ ՚ի լեզւոյն
Եւ աւաղելին
Կալեդաս անուն,
Իբր անմահարար,
Ցերկնից դեղուձար,
Խայթուածոց խղճիս՝
Հատ մեծ դիւր արար։
Ձի կուսին լուեալ,
Ասաց քաղցրաբար,
“Եւ դու յորոգայթ
Նորա որսայար։
Գիտեմ ո՛վ է նա.
Այլ սակայն մի՛ոյ։” —

# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

# ԴՐՈՒԱԳ

## ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՑ

Փոփոխութիւն Սօնդիպեայ, գիր Կալիդասայ, 'ի կոչումն հրաւէր, զարմանալի և յանկարծ յեղափոխութիւնք վիճակին Սօսայ։ Խրատ Սօնդիպեայ, բազմ խնջոյից, արբեցութիւն, յառնել Սօսայ և գտանել զԿալիդաս և զկին նորա ընդ խորգով։ Սօնդիպեայ աներևոյթ գնալ, տարակոյսն անհնարին, թաղումն սպանելոցն, ելն 'ի խնդիր նորա, հանդէս կրօնաւորութեան Հայոց, հիւանդացեալ կալ առ Քրիշնայ մեհենաւն 'ի Հուսափ, պատահել Սորոնաքայ, հրաշակերտիցն ունկն դնել աստուածոց նորա, Սիրոյ խնդիր առ Մայր իւր՝ որ սաստէ նմա զուսպ կալ, և ստիպէ զԱրին մեր 'ի ճառ։

# ՔԷՐ

'Ի

# ՄՕՄ ԵՒ ՄՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

ԱՋԻՒ անց ամիս
'ի վերայ բանիս ,
Ցորում գոգջէր , կոյան
Թաղեալ 'ի թախիծ ,
Մերթ 'ի վայր լուին
Ողբայր ցաւագին .
Մերթ յոգւոց հանէր
Հառաչ մնհաճին ,

Մ՚երթ յերկինս ՚ի վեր
Ակնապիշ հայէր .
Մերթ գլուխն ՚ի կոր՝
Զարտասուս ցօղէր ։
Մինչ յորժամ [1] Դիպայն ,
Աչացուն Աստուած ,
Զայր Թուղթ ՚ի ձեռին ,
՚ի Ներքս անդր էած ։
Թ՚օթափեալ իսկոյն
Զխորին տխրութիւն ,
Տերև ոսկեգիր ,
Առ իս կարկառէր .
"Արի Սօս վանի ,
Տես զինչ ՚ի Տալի ,
Տողեաց քեզ " ասաց ,
Արքայն Կալիդաս ։"
Ընդ հնչիւն անուան՝
Զարհուրեալ դողամ ,

Ցորժամ[2] Սանսկրիտն
" Այսպէս հասկանամ.
Կայլիդաս[3] Թաջայ՝
Քաջին Սօս վանեայ
Ողջոյն տուաքէ
Հատ՝ ի[4] Գէց Լաշմայ .
Ո՛չ գիտեմ ընդէր,
Այսքան համակիր
Լինի քեզ ոգի ,
Ըզտիւ և գիշեր .
Գուցէ յառաջնում՝
Ծննդեան մի բում.
Համամայր ծնաք ·
Մի ազգ , մի արիւն ,
Եւ նոյն երկուքին
Ծնցուք վերստին ,
Թէ կեցցուք սիրով
Աստ ի միասին ,

Ուստի եկից ես ,
Սուերգեան [5] առ քեզ
'ի ծառի և ծիծաղ՝
Կատարել հանդէս "
Պողն 'ի կախաղան ,
Ձայր երկիւղ մահուան
Բառնայ յերեսաց՝
Գոյն կենդանութեան ։
Ոչ այնքան ըզգայ
Ահափետս և ահ ,
Որքան ես 'ի գիւտ
Նամակի նորա ։
Քուպլոտ անծանօթ
Ծաւալ ընդ ծնօտ
Ակնարկեալ աւխ
Ասաց՝ համառօտ ,
" Ծէս կրկրի մերում
Պատիւ տայ պատուոյն

Չափ արդար չափէ
Եւ Արդարութիւն ,
Վ.նմ Սօս Վ.անի ,
Ջի Հայ օտարի
Զրին կերողաց
Դժուարաւ մաքսի ,
Հրաւէր կարդա՛
Քում՝ Կալիդասայ ,
Եւ վարար վառեակ
Ցարփածուի Նորա :”
Օ՛ արմա՛նք կալան զիս
Ընդ անկածելիս ,
Ցեղյեղոյթ բնութեան ,
Իեղանակ խօսից ,
Թուէր հորիզոն ,
Պղտորեալ գեղոյն ,
Պարզել ՚ի պայծառ
Սիրոյն Հաշտութիւն :

" Կամք քո եղիցին ,"
Ասացեալ 'նմին՝
Լուռ , տխուր և լուրջ ,
Չափեցի զուղին ։
Միայն ժամ 'ի ժամ ,
Խորհելով յիս զամ .
Թէ ես՝ որ չունիմ
Գէթ հինգ կրեղան .
Օ խո՛րդ փառալից
Նորուն խնձոյից ,
Խնձոյ հաւասար
Կազմել լարացից ։
Եւ այս խոկ արատ ,
Ջի մերկ ծնաւ մարդ ,
Եւ յաղքատութեան ,
Կապեալ յորոգայթ ։
Ահ յայլոց չարեաց ,
Հատ խորշի 'ի բաց ,

Որքան յայնժամնէ՝
Ցոր եդ զնա Աստուած ։
Թէ այս՝ և թէ այն ,
Քաղցրութեամբ զիջան
Կալիդաս և կինն ,
Պատուել զիմ սեղան ։
Բայց յորժամ Հատաք
Ջուղույն Հասարակ ,
Բաբէ [6] տեսարան
Հրաշագան տեսաք ․
Սփիւռ անուշակ
Վարդ ու մանուշակ ,
Փողփողեն զողջեր ,
Ջփողոցին յատակ ։
Իսկ սատի՝ անտի
Դարբասին մեծի ,
Բառնան [7] քիլենիք ,
Շար բացմենակի ․

Բայց մնեալ 'ի բակ ,
Շատ սքանչացաք ,
Որ փոխեալ գոդջիր ,
Յադլին փառունակ՝
Ինծայէր աչաց
Ուրախ հայեցուած ,
Եւ բոյրս անուշից
'Ի կաղղոյր կենաց ։
Իսկ տուն մեր բաբէ ,
Ո՞ պատմել կարէ ,
Եթէ [8] Որմզդին
Զիցէ մարգարէ ։
Օ ի բազմոցք ոսկի ,
Բարձքն վարդենի ․
Կահ ու կարասիք
Ողջոյն արքենի ։
Ուր խորդոցըն թաւ
Ծաւալ խաւ 'ի խաւ ,

Ճերմակ ու կապոյտ
Խառնեալ երանգաւ ,
Կոհակ առ կոհակ
Ծածանեն համակ ,
Ցայտս հարկանեն
Ըզտուն ընդարձակ ։
Անդ ՚ի կեդրոնի
Որպէս ՚ի կղզի ,
Ամբառնայր սեղան
Բիւր բարութեամբ լի ։
՚Ի վերայ որոյ՝
Գունտ ոսկւոյ արքոյ·
Եւ կուռ ՚ի գնտին
Ձոյլ՝ անմահ [9] դրմու ։
Ջոր անդրադարձիկ ·
Ցոլմոցն հայելիք ,
Պատկերին ՚ի բիւր
Տարազ գեղեցիկ ։

'Ի վերնակողման
Թագմ՝ արքունական .
Յորում՝ նստան Հիւրք
Մեր բարեկենդան ։
Դիւցուհեդ ծանեա՛ր .
Զի պսակ Հիւսեալ
Յաջոյ Անեղին
Է կին տնարար ։”
ՅԱՅՆԺԱՄ Սօնդիպի
Առեալ մի կուսի ,
Զև զայս օրինակ՝
Խօսել խուձապի ։
“Միայն այր ժուժկալ
Կարէ պատիւ տալ .
Հապա՛ զգոյշ , Սօս ,
Բնա՛ւ չարբենալ ։”
“Ո՞ շաղեալ ընդ մուր
Եւ կայցէ մաքուր ,

փորձ զոսկին յայտնէ
Ընկեր զընկեր իւր ։"
"Միայն զգոյշ կա՛ց"
Ասաց և էանց ·
Իսկ ես ընդ հիւրոց
Բազմեցայ ՚ի հաց ։
Այլ որ չէ տեսեալ,
Եւ ո՛չ փորձ առեալ
Ըզկայլիդասայ՝
Կարէ զարմանալ,
Թէ զի՞ անվրէհեր
Ուտէր և ըմպէր,
Եւ զընկերն ՚ի նոյն
Զարխս յորդորէր ։
"Դու՝ որ ոչ ըմպես,
Ասաց · ազդ առնես,
Զի և ես ծարաւ,
Ելից ՚ի տանէս ։

Արդ մի՛ ըմպեր դու
Զայս դաւաթ գինւոյ ,
'Ի կեանս այնորիկ՝
Որ զայս ետ խնճոյ ·
Եւ տեսցես , պարո՛ն ,
Զի սեղան և տուն
Քեզ միայն թողեալ՝
Մեկնեցայց իսկոյն ։"
Երբ ընկալայ զայս ,
Յաջորդեաց այլ թաս ·
Տարաւ գինին զիս՝
Ցնդեաց 'ի խելաց ։
Մ՝երթ ըսկսանէր
Քիթըս երկարել ,
Մերթ անօթանին
Սեղանին՝ պարէր ·
Մուտ հուր 'ի գլուխ
Յաչաց ցնդեաց ծուխ ,

Գատալեան [1] զինև ,
Գառնեայ մառախուղ ,
Զիմոյայ որքան՝
Զգեցաւ երկա՛յն
Այս մռօրինակ
Թմբիր թախծութեան ,
Այլ յորժամ յարեալ ,
Տխուր միջօրեայ
'Ի սուգ ինձ հանէր
Զամէն առարկայ ։
Տուն զուրկ 'ի զարդուց՝
Հաշէր յարտասուս ,
Դրունք և դարակք
Կորզք 'ի կրնկոց ։
Այ՛ , ո՛յ բաղտ պժխեմ ,
Արթմնի իցեմ.
Եւ թէ սոսկ երազ՝
Ձոր արդ տեսանեմ ։—

Եւ զի՞նչ այն կիտուկ ,
Տժգոյն և տաղտուկ ,
Որ յանկեանն , ասեմ՛ ,
Դիզանի յատուկ ։
Որպէս կողոպուտ ,
Զոր ՚ի մօտալուտ ։
Հինից փախուցեալ՝
Թողու ժողովուրդ ։
՝Նախ զայն զննեցից ,
Եւ ապա տեսից ,
Թէ ո՞ , որ խռով
՚ի խնջոյս եկից ։
Ասել սոսկամ՚ես ,
Երբ մատեայ յայն դէզ ,
Արհաւիրք ահեղ
Պաշարեցին զիս ։
Սոսկալի՛ մահուան
Տխուր տեսարան .

Կալիդասն և կին
Հանին յանդիման ։
Զի գլուխք հատեալ
Եւ շամփրեալք իրար
Դիակամբքն՝ և կան
Ընդ խորգով արկեալ ։
“Արդա՜ր Եհո՛վահ ·
Այսքա՜ն սաստիկ ահ
Յարարածս քո՝
Դրոշմել կարաց Մա՜հ ։
Ա՞յս վարձ ամօթոյ ·
Ա՞յս վախճան գինւոյ ·
Ողբա՜մ Կալիդաս ,
Զողորմ կորուստ քոյ ։
Անդ նախ ձեռն ՚ի գործ
Արկեալ մահափորձ ,
Գուբ փորեցի խոր
Խե՜ղճ հիւրոյ իմոյ ·

Երկրին օրինաց
Ներհակ էր գործ իմս ,
Որ եթէ աշկեար ,
Բերէր պատուհաս ։
Ոչ ի անդ ո՛չ թաղեն ,
Այլ յաձիւն դատեն ,
Ուր է առըն գիշոյ՝
Ընկերէ և 11 կին ։
Այլ ո՛ւր Արփենին ,
Եղև խնդիր իմ ·
Կորեա՛ւ , և կորոյս
Ցոյս բովանդակ իմ ։
Ի զուր զամենայն
Խորշ մաղեցի տան ,
Եւ զուղեղ դադարկ
Մզեցի ունա՛յն ·
“Միթէ հուղկահար
Մուտ այսր արարեալ ,



Համփրեաց զերկուսին ,
'ի տեղ մահասայր ·
Եւ զերի վարեաց
Զոր ոգիս զերեաց ·
Բայց զարմանք իրաւ ,
Որ յես խնայեաց ։
Գուցէ զիս անմեղ ·
Եւ յօտարի տեղ ·
Կամ կոյսն առ անձին
Պաղատանս էհեղ ։"
Սոսայ չէր հնար
Ըզնա մոռանալ ·
Կամ տղայաբար
Նստիլ և ողբալ ։
Ցորոն սարէսար
Ցամենայն աշխարհ ,
Սակ 'ի հանդիսին
Առնելն մնայր ։

Խնդրեմ թէ իբրև՝
Զընդ ամպեալն արև ․
Գտից՝ որ շնորհ
Շողայցէ զինև ։
Ուխտեմ [12] վահագնի ,
Բագին արծաթի ․
Թէ գիւտ կորստեան
Ինձ յաջողեսցի ։
Եղանեմ յուղին ,
Յիշեմ զ՚ներքինին․
Յորմէ ՚ի կսկիծ
Ինձ բերի զոսկին ։"
ՀՐԱՇԱԿԵՐՏՆ Աստղիկ
Որ ցայս վայր լռիկ՝
Յունկն հեզութեան
Քաջին քաղէր զերգ ․
՚Ի լուր իւրայոյ ,
Զայս կարդայ քարոզ ․

“ Արդարև յատուկ
Է քաջացն Հայոց,
Զոյգ ընդ արութեան
Աշխարհասասան,
Եւ ըզպաշտօն դից
Առնել սեպհական։
Եւ ինչ դժուարին
Հայկազուն ձեռին,
Թէ և դից անգամ
Ծանր երևեցին։
Այլ կա՛ Սօս վանի.
Քոյ շղթայ ոսկի,
Եւ յեռ ինձ ՚ի գոյն՝
Շարան մարգարտի։
Օ՛ի քան ճշմարիտ
Գեր քան մարգարիտ՝
Եւ հեշտիցն անգամ
Զարդ է պատուական։”

Դիցըն յարգանաց
Գլուխ խոնարհեաց ,
Եւ այսպէս ըղձաւ
Իւր շարունակեաց ։
«'Ի Հուստինափուր [1]
Քաղաք փառաւոր՝
Զոքայ որոնել ,
Այլ Ներքենին՝ ո՞ւր ։
Կալաւ զիս յայնժամ
Ալստ ինչ ծիւրական ,
Որ 'ի բժշկաց
Կոչէր սիրոյ-բան ։
Օ՛ օրէն կմախի
Կամ կաղամախի ,
Որ կայծակնահար
Ցերկիր հոսիցի ,
Ցոգի ապաստան ,
Որպէս ուրուական ,

Հուպ առ [14] Քրիշնայ
Ընկանիմ մեհեան ։
Մ՚ինչև անազան
Ներքինւոյ ընդ այն՝
Ընցանել տեսի ,
Եւ աղաչեցի ·
“ Ո՛հ Տէր ողորմեա՛ ,
Մեռանիմ ահա՛ ·
Թէ իմ՝ փրկութեան
Ճար ունիս , արա՛ ։”
Ձայնիւ ինչ թաքուն ,
Խառն ընդ տրտմութիւն՝
Լերկ դիմաց նորա
Բայց զկնձռութիւն ։
Ցորմէ առաղօտ
Ցոյս նոր յիս եմուտ ,
Թէ գաղտնեաց իւրն
Ձիցէ անծանօթ ։

“Դո՛ւ լսես Արին ,
Ասաց ներքենին .
Զոր տեսի կանխաւ՝
Վառ յարիւն վարդին ։
Իսկ արդ՝ զի՞ մաշիս ,
Է՞րում կղկաթիս .
Հոգ ոսոխ է , թո՛ղ .
Թէ ապրիլ կամիս ։
Տրտմութիւն հոգոց ,
Զո՞ յարարածոց
Ո՛չ Ճեպեաց արդեօք
Ցաղիս դժոխոց ։”
“Անգի՛ն իմ՝ կորուստ
Մեծ է քան զապրուստ ,
Կեանք առանց նորա
Է ինձ հազար մահ ։
Կամաւ տանէի
Կտտանաց Բաղդի ,

·Քան թէ կորստեան ,
կուսին կաթոգնի ;"
'Ներքինին գըթած ,
Ճմռացեալ գընաց ,
Պատուիրան թողեալ
Իւրոց պատանեաց ;
Օ՛ի արագ երագ
Բարձեալ 'ի դեսպակ ,
Եւ 'ի ջուր [15] Գանգեայ
Հանցեն անապակ ;
Զի ըստ ցքահար ,
Ցամաք և ցնդեալ
Գըխոյ Գրողին
կենցաղ Մարդկային ;
Օժիտ Ճահաւոր
Եւ կեանք տարևոր ,
Ուխտելոց ձօնէր
Գանգէս փառաւոր ;

Զի մաքրեսցեն զիս
՚ւ ՚ի զարդ փառալից
Յապարանս անդ իւր՝
Հանցեն յարքունիս ։
Այլ ծանրանայր ժամ,
Առաւել քան զամ.
Մինչ տեսի զարհին ,
Լոյս ինձ ՚ի մըթան ։
Քանե՛ պատուական ,
Ձիցէ բարեկամ.
Որ անկեղծ ՚ի սէր ,
Փորձ ՚ի նեղութեան ։
Բազմեցաւ առիս ,
Տեղ ՚ի լսելիս .
Զիւր տխուր և լուրջ
Տեսութիւնս անցից ։
“ Վա՜ղ աստ ծանեայ ,
Թափառականդ Հայ ,

Զի նիւթէր քեզ սէր
Ձարիս անխընայ ։
Այլ փորձոյն թողի ,
Առնել խելացի ·
Բայց զի՞նչ խելին ձառ
Կամ սելին օձառ ։ —
Շիկնիս հա՜ , ցնծամ ·
Զի բարի նըշան
Են պատկառանք սուրբ
Յայտըս մանկութեան ։
Այլ դու միայն չես ,
Որ հարար այսպէս
Պագշոտ ցանկութեան
Մահաբեր նետից ,
Զի թշուառագին
Քեզ գտան նոքին ,
Զոր թաղեցեր դու
Գալըշութին հողոյ ։"

՚Նոցա՛ բլուր անգամ
Երանի՜ կարդամ.
Որ 'ի միասին
Սնան և մեռան.
Ապա ինձ նման,
Թշուառ ապերջան.
Որ զիմ կորուսի
Ծաղիկ անթառամ։
Յուս բարձեալ համբուն
Ջաւուր ծանրութիւն,
Եւ անման էլի
'ի ժամու վարձուն ։
Ա՛նց բուրումն անոյշ,
Եւ թող ինձ ըզգուշ.
կատել կարեվէր
Ջուշ իմ և զուրուշ ։"
"Օ՜ քեզ, Բարեկա՜մ,
Ծաղիկ անթառամ.

Ձո՞ վաստակոց քոյ՝
Վարձ Արքայութեան
Անուանես ,” ասայ ·
Ի՛ կնճռեալ դիմաց
Արձակեաց առխս՝
Խոժոռ հայեցուած ։
“Օ այն յաւէրժ հարսնիկ
Իմ՛ կոչեմ՛ ծաղիկ ·
Որ յարեան բոսոր ,
Հողաց զարև իւր ։”
“ Ուրեմն երևի ,
Ձի վարկպարազի ,
Ըզհետ ընթանաս
Գեղոյ ստորի ։”
“Գեղո՞յ ստորի —
Այդ ինձ քա՛ւ լիցի ·
Ցորչափ շնչիցեն
Սօս և Սօնդիպի ։”

“Այո՛, Սօնդիպի՛ ·
Եւ ո՞ւստ կարեյի
՚ի միջի ձերում,
Հաղկապ այսպիսի :”
“՚Ի սէր Աստուծոյ,
Ապա՛ ՚ի պարզոյ ·
Արամբի՞ իցէ
Զքնաղն աշխարհի :”
“Արամբի չէ նա ·
Անկեղծ հաւատա՛ :”
“Ոչ ես կանամբի՝
Վասըն Սօնդիպեայ :”
“Այլ խորհ մեծ կայ —”
— “Ընդ ես և ընդ նա ·
Զիմաստ առածիդ՝
Զիմանամ, Ներեա՛ :”
— “Ասեմ քեզ այո՛ ·
Դու հայ, նա հնդու ·

Ազգ ազգի ներհակ ,
Աղանդ՝ աղանդոյ :"
— "Երբ սիրտ ընդ սրտի
Սիրով շաղկապի ,
Ոչ ազգ , ո՛չ աղանդ
Անդ ունի զտեղի :"
"Եւ քանի՛ք այդպէս
Գըտան սեւերես ·
Ցորժամ՝ այր զեղեռն
Իւր անուանեաց սէր :
առք ՚ի պատանեաց
Պագշոտ ցանկութեանց՝
Դովին զոհեցին
Ջանուն կուսանաց :" —
Բարբէ՛ զինչ լսեմ ·
Ներքենի՛դ վըսեմ ·
Եւ դեռ սէր կոչի ·
Եղեռն այդ դժխեմ :

Ես սէր գիտեմ՝ զայն
Բորբոք ջերմութեան ,
Զոր ելոյց Որմիզդ
Յատրուշան բնութեան ։
Զի կենդանարար
Սէրըն պահպանեալ
Զմահացուն դից՝
Դիցէ հաւասար ։" —
"Եա՝ որ չարաչար
Սիրոյ փորձ էառ ,
Ո՛չ կարէ խտրել
Ընդ լաւ , ընդ վատթար ։"
"Որ ուղիղ դատի՝
Որոշել կարէ ,
Թէ ՚ի մէջ մարդկան ,
Կայ չար , և բարի ։
Եւ պատմեա՛ իշխա՛ն ,
Ո՞ այն դաւաճան ,

Որ քաղցրիկ սիրոյ
Դարձ եւ դառնութեան
"Աւա՜ղ աղետիս.
Զինորդ պատմեցից.
'Ի լուր քո զանլուր
Գուժկան արկածից։
Որ միակ զ սաեր
Սուրաջայ կայսեր՝
Բաց խոր 'ի սրտի,
Վէրս անբուժելի։"
— Ո՛վ ժամ երջանիկ.
Ցոր բարեբաստիկ
Հաղորդ գտայ ես՝
Վիրաց այդոցիկ —

Ես —"

— Զի՞նչ "և ," քաջազո՜ւն.
Մի՞ դու իցես նոյն,

Որում՝ ուխտէ նա
Զանձն իւր և զանուն ։" —
"Ես նոյն գոլ յուսամ,
Առանց փոխութեան ·
Սիրեցի , սիրեմ,
Սիրով կամ և լամ ։"
ՆՍՏ ոսկեթևեան՝
Մանուկ ցանկութեան ,
Զուլամբ մօր անկեալ՝
Զայս աղերսեաց բան ,
"Թէ զիս որդի քո ,
Արուեստին սիրոյ
Աշակերտ տաս՝ տո՛ւր
Ցըմալ այս չնդու ,
Օ ի լեզու նորա՝
Զանցեալն առարկայ
Նկարէ ունկան ,
Եւ այնքան ներկայ՝

Մինչ աչաց պխտոյ ·
Չիք խնդիր Սիրոյ ,
Ա՞յս է՝ որ և Սէր
ծնաւ զաչացու :"
Իսկ Մօր Նորա ուշ
Յափշտակ ՚ի Սօս ,
Հաշէր անհամբեր
Վախճանին երգոց :
Զի եթէ մարդկան
Իմն լսէ հաւան
Օղուն ոլորուն
Բարբառ խառնութեան ,
Ապուրեմն որքան ,
Դից հաճոյական
Ոչ լսէ լեզու
Մեր աստուածասան ,
Ուստի Նոյնհետայն
Յաստուցեալ Մանկանն ,

*ՋԱրին մեր ճարպիկ*
*Յորդորեաց 'ի բան ։—*

# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

# ԴՐՈՒԱԳ

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳՈՑՆ

Պատմէ Յօս զասութիւն Սորոնաքայ Ներքինւոյ, պարտիզպանին որդի Կալիդաս՝ ուսանի 'ի մինայէ զերգ. Ներդաշնակութիւն ձայնի և ճոռոմութիւն լեզուի նորա, զթութիւն Յօնդիպեայ առ նա, բանագնացութիւնքն երկար, գրաւել սրտին Կալիդասայ, յանձնառնել ընդ-նա ցներքինին իւր, կամաւէ բորբոքէ զսէր 'ի 'ի միջի. Տօն գուրգայ— Անտառ Ջուարճութեան, անարի հանգամանք անձին Կալիդասայ, մուրացկանութիւն.— Գնել զԱնտառն Ջուարճութեան ընդ նաժշտին, Հրի կամ Քրիշնայ տօն, կոչունք Կալիդասայ, — յանդիմանութիւնք Յօնդիպեայ, վիրաւորել և ընկեցիկ լինել 'ի պարսպէն, սուտ համբաւ զխախտենէ նորա ընդ օտար սիրահարի, Սուրաջայ ուխտ և ելք,—Դիցն հանդէս, դատապարտումն Լաշմեայ, առաքումն Վրիպայայ առ 'ի մահ Կալիդասայ, Թշուառութիւնք Յօնդիպեայ, հաշումն վասն Սոսայ, պատահումն իւրերաց, խոստկցութիւնք, և հրաւէր 'ի հարսանիս.—

# ՔԵՐ

՚Ի

# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

“ Խո՛ւնդա՛ Սօս վանի ,
Քո՛յ է Սօնդիպի .
Ասաց Ստրոնաք .
Ցոծ՛ խմանայի :
Որ իբրև ըզձիւ
Շուշանի կարմիր ,
Հոյզն գարնանի
Տէց մնուանդ ըմպէր :

Իբր կոկոն կոկոն ,
Զմայլարար մեկոն
Գոկէին ի լանջ՝
Արփենի ծոցոյն ,
Ցայնժամ պարտիզպան
Ըստ սովորութեան ,
Ծաղկունս հաւաքէր
Դից նուիրական ։
Եւ ի փունջ հիւսեալ ,
Այլ [I] յափսէ քաղեալ ․
Բերէր տալ ծաղկի
Ծաղկին հաւասար ։
Բայց յաւուր միում,
Գլերգ ի պաշտօն ․
Ցորդի իւր տայ զայն ,
Կալիփաս անուն ․
Նա այն ապերախտ
Կուլին էր դժբաղդ ,

Որ ապախտ աբար
Զբարին լուր անախտ ։
Այլ յոճ՛ պատմութեան ,
Թո՛ղ անդրէն դառնամ ·
Լալ կոյր ՚ի վերայ
կուսին ընտրութեան ։
Յորժամ Կալիդաս ,
Եմուտ ընդ դարբաս
Մեծ կանանոցի՝
Արևուն հնդկաց ·
Բազմէր Սօնդիպլի ·
Յաթոռ [2] սադուանի
Եւ ունկըն դնէր
Խօսուն [3] մինայի ։
Որ ՚ի մէջ հաւուց ,
Գոլով մարդախօս ·
Գեղգեղէր նմա՝
Ձա՛յս տարազ երգոյ ։

“ Ո՛ Հաղա՛ր ռաջմյ ,
Դատեր Սուրաջայ .
Զօր գիշեր 'ի բուն ,
Կատարեն պաշտօն ։
Խսկ ես՝ խսկ ես՝ բա՞ .
Մին խղճուկ մնա ,
Այրեցեալ հրով
Սուրբ սիրոյ նորա ։”
Կայլիղաս լուեալ՝
Զոր հաւըն կարդայր .
Բան 'ի բերանւոյն
Կայաւ անվթար ։
Համբարուաց [4] գունակ
Ախորժ էր հաղագ .
Որ այնքան ազգու
Գեղգեղեաց նուագ ,
“ Խսկ ես խսկ ես բա՞ ,
Մին խղճուկ մնա .

Այրեցեալ հրով
Սուրբ սիրոյ նորա ։"
Մինչ թողու ձայնին
Հալաւ Արփենին ․
Եւ զթոյն յաչաց
Ընկալաւ [5] քարբին ։
" Հրեշտակ ’ի մարմնի ,
Գա՞մս ասաց ուստի՞ ․
Օրհներգու ընտիր
Դիւցըն հանդիսի ։"
" Շնորհալից [6] Բանի՛ ,
Որ հորիզոնի՝
Հայրենեաց իմոց
Շողաս գերարփի ։
Մանուկ աղքատիկ
Քեզ բերեմ ծաղիկ ․
Որ ամէն ծաղկանց
Փայլիս գեղեցիկ ։"

Պ.ժխոյն զիս այնժամ,
Տե՛ս ասէ, իշխա՛ն.
Թէ ո՞րպէս խօսի
Մանուկ բրահման.
"Խեղճն համարի խև,
Բայց ո՞յս քո պարգև
Դուստր Արեգական՝
Ծաղր առնել զինև.
Օ աղքատ արհամարհ
Աստուած ո՛չ արար,
Վեհ աղքատ գիտուն
Քան ձօխ անաստուն.
Զե՛նչ երանութիւն
Եթէ վարժատուն,
Ուսուցէ միայն
Զանձնչան հնչիւն.
Որ իմաստակաց
Մնալի է պարծ,

Գրկեմ՝ , գուրգուրեմ ,
Եւ մուրալ ընչայ ,
Իսկ ես 'ի փորձոյ ,
Ուսայ անդպրոց .
Զի զոր ինձ կամիմ ,
Արարից այլոց ։
Սիրել զոր սիրուն ,
Պաշտել զիմ պաշտօն ,
Համարիմ անձին՝
Մեծ իմաստութիւն ”
Ասաց Կալիդաս ,
Սակայն չաւատաս
Թէ սիրտ Սօնդիպեայ
Ո՛չ պատասխանեաց ,
“ Ո՛ ինձ երանի
Լինէր Ժիրաւի ,
Տեսանել զքեզ .
Որպէս ցանկայի ,

Գոլ այնքա՛ն զոյուն ,
Որքա՛նդ ես գիտուն .
Մի՛շտ անվի՛շտ երգել
Ըզնուագ սիրոյն ,
Ո՛ւր երամք հաւուց ,
Երգեցկաց վերնոց .
Նա ծառ և ծաղկունք
Արձագանգք ձորոց ,
Ձայնակից եղեալ
Քընարիդ ըզմայլ ,
Պատկերին ՚ի լուր
Քո՝ ըզախրահար :"
Որում՝ Կալիդաս
Դարձուցեալ ասաց .
"Ե՛ւ աստուածուհի՞դ
Կարօտիս ասանեաց ,
Փոխան տարփանաց ,
Եւ աշխուժանաց ,

Հզօր հանճարոյ ,
Եւ իմաստութեանց ,
Օ որ ո՛չ տալ կարեն ,
Ո՛չ բառնալ բաւեն .
Ոսկի և արծաթ
Եւ հայք հանքեղէն ,
Դո՛ւ ոսկւոյ հաշէս ,
Գանձո՛ւց գալարիս ,
Եւ աստուածութեանդ
Ամօթ չհամարիս ;
Ս ա՛շ ժամանակիս
Յորում դիպայ ես ,
Ուր հաստուածք փողոյ`
Պաճուճեն զանձինս ;
Թէ կորեաւ համբաւ
Անուն բարեյաւ .
Որ քան զամենայն
Ազնիւ պատուեցաւ ;

Թո՛ղ ապա ոսկին ,
Դիրդ հողոյ ընչին .
Քոյ չքնաշխարհիկ
Գեղոյ լիցի գին ,
Հա՛յր Արարչութեան
Որ գոգոր [7] ՚ի շուշան ,
Իբր յօրորանի
Բերոր յՈվկիան ,
Տե՛ս զե՞ անպիտան
Գնէ սա ինքեան ,
Ծնեալս առ ՚ի քէն՝
Կուլին Բրահման ,”
Ասաց և էանց .
Ոգւով Թախծանաց .
Այլ սիրտն յաւարի
Սօնդխպեայ մնաց ,
Որ սակաւիկ մի՝
Անկոր հալի ,

Գո՛գ ընդարմացեալ
Յարձան պղնձի ,
Մինչ կամ՝ [8] Աւատար ,
Ջանխուլ մատուցեալ
Քամեաց ՚ի վերայ
Պեթսի [9] կակղալար ,
Սուտի թափ առեալ՝
Ըղձակատ եհար ,
“ Ո՛հ Հայր ,” ասէ ցիս ,
Մեղա՛յ չարաչար :
Գանձո՛ւց եմ՝ կարօտ ,
Որ այսքան ընդոստ՝
Գիւտի սնոտւոյն
Պնդիմ՝ հետամուտ :
Ո՛չ — ո՛չ — դարձցի նա ,
Յիւր սիրտ ոսկեկայ ·
Ջոր ՚ի յորդայթ ·
Գեղդ ուրացայ :

Դա՛րձիր կայլիդա՛ս ,
Սօնդիպի՛ սուղեաց ·
Ա՛ռ չքեղ անդրէն
Քո զաղբիւր կենաց ,"
" Օ՛ հի՛մ սիրտ տաս դու ինձ ,
Ո՛չ երբէք առից ,
Այլ թէ քոյ դժխո՛յ ,
Տաս սիրտ ընդ սրտիս ,
Ցայնժամ՝ առայից ,
Թէ կայ խնկապէս ·
Սէր և գթութիւն
Ցարիւն անմահից ,"
Յաւարտել բանիս՝
Սօնդիպ ասէ ցիս ,
" Տեսանես հա՛յրիկ ,
Քանի՛ հրաշալիս ,
Մերկանայ բանից ,
Վսեմ՝ պատանիս ·

Եւ յոձ՛ անմահից
Ցափշտակէ զե՛ս ,
Առջեր ՚ի տուն քո ,
Եւ ՚ի գութ սիրոյ ,
Սնուսջեր ըղդա՝
՚ի փա՛ռս Աստուծոյ ,
Զոր լինչ արուեստից
Գիւտք են հրաշից ·
Զոր հանճար՝ վերին
Արքո՛ զիմաստից ,
Եւ սար ՚ի սարուց ,
Ռքեղ ըսպասուց ,
Յաւելջեր դմին
Ըստ աղատորդւոց ,
Մինչ տեսցուք իւեք ·
Դողին երանիտիք ·
Կամ՝ անուան ՚ի մէնջ՝
Ցայտնին տպաւնիք ։"

Բայց Մօնդրեալ —
Այլ ի դոյն վարդէ,
Երանգեաց ամօթ,
Ջերեան արփենի ;
Բիւր երանք տամ,
Ոյց բանին անսան.
Թէ սիրում կցէ՝
Թէ յատելութեան ;
Ահիւ ընկալայ,
Զոր պատուիրեաց նա.
Այլ յիս մեկուսի՝
Զայս ինչ խօսեցայ,
“Թէ՝ սէր աչք չունի,
Զի տեսանիցէ
Զպակասութիւն
Սիրելւոյ իւրում,
Այլ ինձ աւուրք գան,
Եւ խմացում տան.

Որ զիժ 'ի ծոցի
Ունայն սնուցի ։"
Իսկ կամ' մեր հզօր ,
Զանծանօթ ինչ հուր
'ի մէջ երկոցուն՝
Բորբեաց օր աւուր ։
Այս դուզնաքեայ կայծ ,
Յայն հրդեհ աճեաց ,
Որ յաճիւն եդ տուն
Արեւուն Հնդկաց ,
Մինչ այս և մինչ այն ,
Տօն Դուրգայ ժաման ,
'ի կայթ և կաքաւ ,
Հար զՀնդկաստան ։
Յայնժամ և սոքին
Պահ պայմանեցին
Յանտառ Զուարճութեան
Չուել միասին ։

Զոր ՚ի մէջ [10] Հուստեայ ,
Եւ [11] Պողիպոթրայ ,
՚Ի բլրին բարձու՝
Տնկեաց [12] Սակինա ։
Շուրջ զորով [13] Ջմնա ,
Ծոցեալ՝ ծովանայ ,
Եւ սիրայորդոր
Խառնի ՚ի Գնգա ։
Ուր [14] Սիպ տարրանայ
Տենչից պարպաթեայ
Եւ ընդ հովուհեաց
Լուղայ [15] Քրիշնայ ։
Վերածել ըղձոյն
Աշխարհիս համբուն ,
Աւազան մեղաց՝
Եւ արքայութին ։
Զի յայնմ վայրի ,
Թէ որք մկրտի ,

Քաւեալ ՚ի մեղաց՝
Յաստուած փոխարկի ։
Ըստ յաջմէ՝ ծովուն
Չեզիկ ծածանումն .
՚Ի ձախմէն՝ Թաւուտ
Անոյշ [16] ամբենուոյն ։
Սէզ դալար աստի ,
Ծառ , ծաղիկ անտի ,
Ցան սիրոյ Նոցա՝
Զնոր իմն ոգի ։
Մինչ այնքան՝ զի բան
Չաս Արեգական ,
Եւ եգիտ ըղձա
Խիստ Հաճ և Հաւան ։
Զի կոյր հաւատ մեր ,
Զքուրմ՛ աղօթկեր ,
Նուաւել ընտրէ
Քան սէգն ՚ի սուսեր ։

Այլ ինձ ժամանակ
Խնայէ արձակ,
Զանցեալն հիւսել քեզ
Մանրագիր ցուցակ:
Զի մարմնով տկար,
Հոգւով ապիկար.
Ջուր արիւն նորա.
Լեղին ցամ նեխեալ:
Որ մինչ [17] Խօլն Թավուն
Բոյ վառեալ համբուն
(Նա՛ որ [18] զկուժիկա
Ռոպեաց ՚ի Սելովն.)
՚Նկար ՚ի պատկեր,
Զարին հանդիսէր
Վեհազոյն Դից Թամ,
Ցասպամենայն [19] մեր:
Մուկաց անարին,
Ցերկիւղ մահածին.

Եւ 'ի դիւթութիւն
Ապաստան Ազգին ,
Հզօրն 'ի խօսի ,
Հեգն 'ի վտանգի ,
փախուցեալ թաքեաւ
Յանքոյթ ինչ տեղի ։
Դիւթ էր ցածոգին ,
Եւ կեղծաւոր սին ·
Գիտէր բան 'ի բան
Կարկատել ուշիմ ։
Ցախտ կեղծաւորեալ
Եւ գայ դալկահար ,
Զառաջեաւ կուսին՝
Զայս պապաջէ ձառ ։
“ Մեհ [20] Սուրա՛ջ բինի ·
Տես քանի՛ , քանի՛ ,
Հաշիմ՛ վասն քոյ՝
Հանդերձեալ բաղտի ,

Որ զամենօրեայ
կատարեալ [21] Լաշմեայ
Ընդունել Ճգնութեամբ
Լցի [22] զտապաստ ,
Մ՚ինչ արժանայայ ,
Դստեր Սուրաջայ
Բերել զայս ծաղիկ
Հզօրին կամայ ։
Ա յլ սակայն" —
" Եւ զի՞նչ " այլ սակայն ,"
Ցինէ՞ն զաղես բան .
Ասա՛ զոր կամիս ,
Առանց խտրութեան ,"
Խորախուսեալ անդէն
Սուտ աստուածորդին
Ընկաւ մուրացկան
Ցոտըս մահացուին .
" Պա րտէզ Անտառին ,

Հաս այսօր 'ի գին ․
Ողորմեմ դժխոյ ։
Գնեմ զայն վասն իմ,"
" Կամիցիս գնել ,
Այս անվեհեր —
Եւ զեպեր ընդ էր
Խառնես 'ի խնդիր ։
Ես օգնեցից քեզ ,
Որպէս դու կամիս ,
Միայն մի ապախտ
Ջերախտիս հանցես ։"
Օ այս ասացեալ՝ տայ
Յհէզն անոպայ ․
Թիւր [23] աղիւս ոսկւոյ՝
'ի հարկաց փեկուայ ։
Գնաց և գնեաց ,
Զադինասարաս
Անտառ զուարճութեան

Ամենայն հնդկաց ։
Սուր մտեալ նորուն
Որպէս շուն ՚ի բուն ,
Անկուշեաց սիրոյ՝
Սօնդիպեայ մի րուժ ։
Գթութիւն առ գեղ ·
Է չար այն քաղցկեղ ,
Որ և զերախտեաց ։
Ծախեաց զուխտ ահեղ ·
Պարգև Սօնդիպեայ ,
Բաշխ Մահադէվայ
Զօր յեղձ շնորհողին
Վարեաց [24] Ռաքիա ։
Փոխան արփենւոյն
Եւ առաքինւոյն ,
Զակատեալ ըղձեա ։
Աղճին ազազուն ,
Ե՞րբ գիտաց [35] կուլին ,

Թէ զի՛նչ լսէ կի՛ն .
Թէ փող տաս՝ չնայ
Ջօր ընդ հազարին ,
Նզո՛վք կաւատին ,
Բոլանդական սերին ,
Որք զօձան կնոջ
Խնդրեն՝ քան ըղկին ,
Հուսկ ապա տեսեալ ,
Եթէ չէր հնար
Ցարդար վրիժուց
Անպատիժ մընալ .
Օձն 'ի ներքուստ դաւ
Նիւթել ըսկսաւ .
Արտաքուստ 'ի սէր
կեղծաւորեցաւ :
Օ ուարձանայ [26] հրէ́
'ի հենգն եւ հուլի
Ուր աշխարհ հնդկաց

Ցնդեալ ՚ի խելաց՝
Ցածի անդադար
Սփռելով յերար ,
Փոշի սնդուրի ,
Եւ թմրբառ յիմար ,
Տօն զայս հանդիսեաց
՚ի տան կալիդաս .
Ցոր և Սօնդիպեայ՝
Հրաւէր կարդաց ։
Եւ ակն յանդիման
Կոյս պարկեշտութեան՝
Վարարեալ ըղձեօ ։
Վատանուն վհկան .
“ Տես գժխոյ , ասէ .
Այս այն պարիկ է ,
Որ յատեղիս իւր
Ջաշխարհ ըզմայլէ ։”
“Այս , հրապուրէ .

Զի համբարու է ,
Եւ կոր՛ ըղձա ։
Թէ և սրովբէ ։"
"Կո՛ր Նախ դու զիս ·
Եթէ ախորժիս ·
Զի՛ք որ յաշխարհի ·
Մեկնիցէ ըղձեզ ։
Մինչև ցե՛րբ կացից
Լրութեան քո՛յ տից ·"
Ասաց Կալիդաս
Ցոխորտ զայրալից ։
Օ զուանո՛ց արժան
Բերանածնին բան ·
Զոր թէ և ասուած ,
Ոյք լուանն՝ ատեան ։
Դարձուցի յայնժամ ·
"Նոր չի՛ք այդ · իշխա՛ն ·
Փող զո՛ր սինլիքոր ։

Զարար մեծաքան ,"
"Նորդարև այդպէս ,
Այլ եկ տես որպէս ,
Ապախտ առաթուր
կոխեաց զերախտիս ։
Մինչ չև էր գինին
Տիրացեալ կնճին՝
Մեկնեցաւ կոյս մեր
'ի խորշ առանձին ։
Մինչ այս և մինչ այն
Գիշեր տխրական
Ճնշեալ 'ի վերայ ,
Վաստակոց մարդկան ,
Դիւական գործոյ
Դժոխածիգ ծածկոց
Ուր անտեսն 'ի մէնջ՝
Կատարեցաւ գործ ։
Յայգ Հասարակէր

Եւ քու՛ն յորդորէր
Սողոխ Թմրութեան
Խոր յընդերքս մեր ։
Ունի զկալիդաս
Մաձար Նորահաս ,
Ո՛ւմ հովահարէ
Բորենին ՚ի բարձ ·
Խռովեալ խղճին ,
Ո՛չ օգտեայ քամին ·
Գոչեաց " 27 Ռազուլն ·
Ո՞ւր է Սօնդիկն ։
Ջի երազ տեսի ·
Երազ քստմնելի ,
Եթէ կեցցէ նա՝
Մահ ինձ հասանի ·
Ո՛ն բեր Ռանգուլն ,
Սուսեր երկայրի ,
Եթէ ոչ ծիւ ծիւ

'Փանդանիմք վաղիւ .
" Գուցէ ջերմութիւն
'Նորահաս գինւոյն ,
Ցնդէ զքեզ ," ասաց ,
Համոզ համբարուն ,
Որ 'ի մահուանէ
Երկիւղ ունէցի ,
'Ի գործոյ մահու
Հեռի կալ պիտի ,"
" Բե՛ր ինձ այսրէն սուր
Որոտաց [28] Ասուր
Թէ ո՛չ վաղիւ մեզ
Վերջին բերէ զօր ,"
Ապերախտութիւն
Դալկանայ խակոյն
Դրօշ 'ի դէմս իւր
Քարշելով զԳարգոն ,
Զի ժանտ և ժպիրհ ,

Երեսաց կնձիռ
դժոխոց անդամ՛։
Ածէր արհաւիր ,
Կացցէ կերպարան
Ամենադաժան ·
Քան զանիծապարտն
Ապերախտութեան ։
Որով կալէդաս
կուրացեալ բարեաց՝
կանացի ձեռօք
Բախեաց զհարուած ։
Մեր արհամարեալ ·
Եւ ՚ի մահ մատնեալ ·
Ցաւոյ սիրոյնոյն
դի տապաստ մնայր ։
Մինչև երկոքեան
Պատրաստեն տապան
Եւ ՚ի նոյն եդեալ ։

Դի կիսակենդան ,
Անողո՛րմ սրտիւք ,
Անարի՛ ձեռօք .
Տանին առ կախեն
Ձամբին պարսպօք .
Ձոր որպէս ասես ,
Գտեր վերջապէս .
Ցերախտեայ քաջիդ՝
Պանծալի հանդէս .
Ցայս վայր միաբան
Մարդկօրէն մեղան ,
Իսկ ապա դիւաց
Չարագո՛յն գըտան ,
Տեսեալ թէ այսքան
Ոչ գողէր մեծ բան ,
Կեղտ յանուն նորա՝
Պարտել ըսկսան :
Այն ինչ յանկողնի ,

Ջօրէն պատճառի,
·Քնով քաղցրութեան
Դիւրէաք զոգի ,
Յայլմուկ անհնարին
Աղաղակ բարձին ,
" Փախեաւ Սօնդիպի ։
Յօտար դաւակին ,"
Օ օրէն շամփշերոց
Յարեաք յանկողնոց ,
Սա պաստառաւ զիւրեաւ՝
Իսկ նա՝ 'ի մերկուց ։
Յոգն ջերմեռանդ
Յածաք աստ և անդ ,
Այլ ո՞ւր մեզ գիւտն այն ,
Երբ նա 'ի քոյ տան —
Իսկ յորժամ Սուրաջ ,
Աղետիցն հաս քաջ ·
Կած կծու արար

Եւ զոհ՝ մարդ հազար ։
Զի որ այսքան մեծ
Առնէր ողջակէզ,
՚Նա քուրմ՝ աստուծոց
Էր և Քաջ՝ մարդոց ։
Ապա զաջ պարզեալ
Դէպ յահեղ տաճար
Բագնին [29] Բագավայ
Ուխտ այսպէս արար ,
Թողուլ զերկիր իւր
Զթագ և զաթոռ ·
Եւ զալ աստանդիկ
Յաշխարհ ընդհանուր ։
՚Ի խնդիր դստեր՝
Որ , որպէս թուէր ,
Յարիւն դիւցազանց
Զիւր խառնեայ եղեր ։
Զի ուր և գոցի ,

Ցողջակէզ հանցի
Կուռոց աշխարհին՝
Ձեռօք հայրենի ."
Եւ ցաւագանի
Իւր՝ այսպէս խօսի ,
" Գիտիցէք որեա՛ր .
Զի որ մեղս արար ,
Ոչ թողլով զաւակ՝
Աթոռոյն ժառանգ ,
Եւ ո՛չ Բրահմանայ ,
Բաշխելով կանայս ,
Պարտի ծայրածայր
Ցաշխարհ ծանուցեալ
Ուխտաւոր գնալ
'ի տօն և տաճար ,
Ահա՛ ձեզ թողում
Զայս մեծ տէրութիւն ,
Զի արքայութեամբ

Վարեսջիք ըզսոյն ,
Կալարուք ձեզ սանձ
Զաշխարհիս հնդկաց .
Ես որպէս մեղայ՝
Այնպէս քաւեցայց ."
Հուսկ ամենեցուն
Զիւր փեսայացուն
Կալիդաս կոչեալ՝
Խոր յառանձնութիւն ,
"Ո՜ որ ինչ և անցին .
Թո՛ղ առէ անցցին ,
Կորիցէ՛ ՚ի սպառ
Ցիշատակ նորին ,
Գլխապարտ լիցի ,
Որ հէգ Սօնդիպի
Բնաւ ՚ի բերան ,
Առնուլ ժպրհիցի
Նաւիկ քեզ զանձ ,

Եւ անշարժ կալուած ,
Հաստանեմ՝ [30] զՕրիս ,
Բանգալ , Բհարիս ;"
Իբրև եւ արքայ ,
Իշխանք անոպայ ,
Ջերմաստան կալան
Տէրութեան նորա ;
Ժամուկ վտանգաւոր .
Զի աշխարհ հանուր
Մատնեցաւ գոգջեր ,
'Ի սուր և 'ի հուր ;
Իսկ վեհ Գլից ատեան
Ընդ այս անարժան
Արարս արքայի՛
Զայրացեալ ցասեան ;
Նման որոյ [31] Վիշնու
Իբր զրոց հրոյ ,
Շարժեալ 'ի հիմանց

Զարհի՛ն [32] Սոմերու ,
Լեառն երազածո՛յ .
Ոյր նիստ աթաստոյ
պահանջէ գո՛գջիր ,
Բիւր գնտոյ մերոյ ,
Եւ ՚ի բարձրաբերձ
Ոսկեձոյլ գահից ,
Ուր իշխէր Լաշմի
Գերոյ և բարոյից ,
Ցուրտ ամպրոպաց
Զառաջեաւ կոչեաց ,
“ Զի՞նչ այս քո , ասէ ,
Անկարգ արարած ,
Որ զօձ մահաթոյն
Գեղով վարվառուն՝
՚Ի կատար բաղխի
պահեալ հաստատուն ,
Զեղծուս չարաչար

Զի՛մ [33] ման Աւաթար ,
կարգ տիեզերաց՝
Շրջես վեր 'ի վայր ,
Օ խի՛մ պարգև բարեաց ,
Ձարայ պատուհաս ,
Ցաղարտ հանելով
Ցայդ հէք կալիւէաս :
Ո՛ւմ փոխան պատժոյ ,
Ճ'ոխ անձրև զարդուց :
ցեղացեր այսքան
Ցայրըէ չարագործ
Համայն աստուածոց
Հակառակ այս գործ ,
Արժանի է միշտ՝
Արդար վրիժուց ·
Վասնորոյ ընդ բարձու
գահուդ 'ի Ցուսմրու ·
խորխորատ [34] կասեայ

Լոյս գնդան քոյ ։
Խաչ [35] Վիրապուրայ
Իշխան Այովդայ
Եղեռնագործիդ
Կործեցին 'ի մահ ,
Չարն անապաշաւ
Կորիցէ չարեաւ .
Որ ընդդէմ շնորհաց
Կուսին կուրացաւ ,"
Օ այս խօսեցաւ բան
Աստուած մեր [36] խնամ ,
Եւ զամէնն ասաց
Համաղիցն առեան .
Բոլոր գերդաստան
Տխուր 'ի փարան ,
Յոդւոց հանէաք ,
Մրմունջ հեծութեան ։
Մ՛ինչ տեսաք աչօ

գունդ վիրապուլայ ,
Ծպտեալ Սօնդիպի
Ցորսոլով Անահտայ ·
'ի մէջ արտասուաց
Վիրաց և վշտաց
Նուիրեաց մեզ նոր
Ռուխթ հրճուանաց ։
Բայց կո՛յս զրպարտեալ ,
Եւ 'ի զոհ ուխտեալ ,
Ցամէն ուստէքէ՝
Դողայր ահահար ։
Աշխարհ բովանդակ
Ջինէր հակառակ ,
Մանաւանդ այս մեր
Ապերախտ քաղաք ։
Ճ՛եպ առ նա գընամ ,
Ողջոյն սիրոյ տամ ·
Ջերեան հայրենի

Արտասուօք թանամ·
Եւ փոյթ ընդհետայն ,
Պատեալ ՚ի սաւան ·
Փակեմ յարքունիս՝
Իբր ՚ի խոր գնդան ։
Մի ըստ միոջէ
Պատմել հնար չէ ·
Է՛ եթէ խորհի ,
Իւ այն ըղձքէն է ։
Հա՛նց յերկ էր , Սօս ,
Ցոր ըստ դիպուածոյ՝
Գնացեալ տեսի ,
ԶԱրփենին՝ ափսոս ։
Որ ՚ի ձեռն առեալ
Զէտ անգին գովհար ,
զՎարազագիր [37]
Զուխտի քո յետկար ,
Թանայր արտասուօք ·

Սրբէր համբուրիւք
Ջաւուրց անցելոց
Նորոգէր մորմոք ։
Երբ յոգւոց հատեալ
Խապառ թալկանայր
Լուռ հայէր զնմաւ՝
Եւ սքանչանայր ։
Ջոտից կախ տուեալ ,
Կացի անդ երկար .
Մինչ լռայ . զի նա
Սկսաւ դարձեալ ։
“ Խո՛ր կենաց կայան ,
Տարփանաց տապան ,
Սիրոյ ճերախտեաց
Սօս Վանեայ նշան ։
Կամ մեհ Տրի դից ,
Որ խոյզ ի շամբից ,
Սոս Թեանց՝ սոսյգն

Առ, և գրեաց մեզ.
Աղատե՛պ արձան
Ահաւոր երգման,
Եւ կնիք ամուր
Ուխտից սրբութեան,
Առե՛ս պահեցից.
կենա՛ց խմոց կից.
Մինչ ահեղափառ
Գթութիւնք երկնից.
Ողորմելով ինձ՝
Դարձուսցեն առ իս,
ԶԱրին բազմերախտ
Սիրական սրտիս:"—
Ասէր տակաւին,
Թէ չէր աղախինն
Ազգ մատամբացի
Արարեալ զինէն,"
"Պնեռ զինէն խորհի

Զքնաղն աշխարհի ․
Ձոյր խրատ ազդոյ
Ապախտ արարի ։"—
Սօս վանի , անսա՛ ․
Զի դեռ քան շատ կայ ․ —
Նա որ միանգամ՝
Հարսնութեան խօս տայ՝
Թէ և միշտ անփորձ
կացեալ իցէ կոյս ,
Եւ միշտ ցանկութեան
Հրճուցեալ ըղձոց ․
Օրէնք տակաւին ,
Թոյլ ոչ տան նմին ,
Պսակ հարսանեաց
Կապել վերստին ։
Երբեմն երջանիկ ,
Իսկ արդ թշուառիկ
Նաւե՛ Սօնդիկլի

'ի լաց մահածիդ :"
"Դու գեղ մարմնացեալ .
կարես իմանալ .
Թէ որպէս եռաց
Ցիս իղձ անժուժկալ :
Բայց զինչ յաւելից
Զըղձից պատմել քեզ .
Որ բոլորովին
Իղձ անմահից ես :
Այլ յայլմէ եղեալ
Որպէս խելագար ,
Առ ներքինին վեհ
Զայս արարի ճառ ,
"Ո՜ ինչ դառն այս քո գոյ
Զոր տաս ինձ 'ի սուժ .
Ոգիս տեսութեան
կուսին ապաժոյժ :
Ցողոք խոնարհի

Վեհիդ առաջի ,
Առաջնորդ լինձ օն
Լեր առ Սօնդիպի ·
Եւ յայնժամ ցուցից ,
Թէ զի՞ կոխ ոտից
Տայց խժականն զայն
Սնոտիս ծիսից ։
Որ ըղկոյս անփորձ
Իբրև զչարագործ ,
Կեր կրակի տան՝
Կամ կրեյըն բոյծ ։"
"Մ՛ի յանդուգն այդքան ,
Որք մեղմ ընթանան ,
Փութով 'ի կատար
Ուղղոյն ժամման տան ։
Բոլոր Հնդկաստան ,
Կուսին է սատան ,
Բայց չողդէ վխեմ

Խոհականութեանն ,
Երդ յանդգնութիւն
Ո՛չ է արութիւն .
Եւ միշտ չար գործէ
Փոխանակ բարւոյն ։"
"Գիտես զինչ է Հայն
Յագեցն ապաստան .
Եւ այն բաց բարակ
Սեւոյ յանդիմման ։"—
"Օ՜ գո՛յշ մի՛ շշուկ .
Հանցես կամ՝ զաղմուկ .
Այլ արի՛ սիրով
Առ նա կանխեսցուք ։"
Յորժամ՝ յաւքունիս ,
Գրո՛ք զարփինիս ։
Ո՞ պատմել կարէ
Ազդուութիւն սրտիս ։
Իբր այն՝ որ զական


1
2
3
4
5
6

Հատեալ յիւրում՝ տան ,
Եւ գտանիցէ
Գանձ անապական ,
Զիմորդ առ խնդին
Ծափ տայ ու կայտռին ,
Նոյն ես խնդութիւն ,
փոխեալ գլխովին ,
Յայլ յայլմէ եղայ ,
Եւ դից հիմենայ
Զօն նուիրեցի ,
Ցայտըս սուրբ նորա ։
“ Թուէր , Սօս Վանի .
Ասաց Սօնդիպի .
Թէ սիրոյդ կարօտ՝
Մեռանիլ պիտի ։
Այլ գոհութիւն դից .
Որ պանծուկ սրտիս
Լցին գթութեամբ՝

Ցերախտիս երկնից ,"
" Հնա՛ր ինձ Անո՛յշ .
Թէև անզգոյշ ,
Մոռանալ սիրոյն
'Ի պէմտ դրօշ ,
Յիմ' անարգութիւն
Թո՛ղ գրեսցէ գոյն .
Այլ սա՛ս ո՛ր զև
Էր անագորոյն ;
Որ մտեալ 'ի տուն
Մինչ էաքս 'ի քուն ,
Եւ զարիւն հիւրոց
Արբոյց ծարաւոյն ;"
Իրա՛ւ զարմանաս
Թէ որ իմանաս , —
Թէ զիա՞րդ գուժկան
Զիմոյ կորստեան ,
Առ Վ,իրապուրայ'

Իշխա՛ն Այվազայ ․
Հասեալ՝ ի վրէժ
Բորբոքեաց զնա ։
Որ կազմեաց իսկոյն
Զայրընտիր զօրուն ,
Շտապ անհնարին ,
Ած ամենեցուն ։
Զի՛ ըզկալիդաս ,
Ուր և հասուէհաս ,
Կալեալ սպանցեն ,
Ցահ անառակաց ։
Այ.ք յանկարծ մտին ,
Ծանեան զեղկելին ,
Եւ զոյգ ընդ աղջկին՝
Գլի տապաստ արկին ։
Ըզքեզ յանկողին
Հանգուցին՝ վասն իմ ,
Զիս այսրէն ածին

Իբր 'ի տուն հօր իմ.
Ուրանօր ինձ հայր
Թող միայն աշխար.
Եւ ել տատանդիկ
Ցերկիր ծայրածայր :"
" Այո՛, և զքեզ
Ուխտեաց յողջակէզ,
Հա՛յր անագորոյն
Ծընող սևերես :"
Մ՚ի՛, սիրելի [38] Սօ՛ս,
Ադպախի զրոյց
Խօսեր զնմանէ՝
'Ի գրգիռ ցասուցս :"
"Թուլիս կոյս ազնիւ.
Հօր դնել պատիւ.
Որ զորդին ուխտեաց
Մատաղ կատաղեաց :"
"Նրացէ քանի

Եւ կա՛մք հաճիցի ·
Տակաւին հայր է,
Պատճառ պատուելի ։
Ո՞ւր այն իմաստուն
Որ ՚ի գլուխ պողոյն
Ծառն անարգիցէ
Թէպէտեւ փշուն ։"
Օ ամօթի հարայ
՚ի բանից նորա ·
Եւ բիւր փոշիման
Գոչեցի մեղայ ։
Պարտ է զաւակաց
Ջանուն ծնողաց
Առաւել յարգել՝
Քան զկեանս իւրեանց ։
Բայց զի՞նչ, սիրելի՛,
Խորհիս ՚ի սրտի ·
Յաղագս հանդերձեալ

Մերում՛ վիճակի ։
Կայցո՞ւք միշտ այսպէս ,
Տխրութիւն յերես ,
Թ՛եղցուք քաջութեամբ
Սիրոյն յասպարէզ ։
"Ուրս երանի .
Եթէ կարէի ,
Ջայդ առնել , ասաց ,
Այսօր 'ի հուստի ։
Բայց կոյս զրպարտեալ
Եւ 'ի զոհ ուխտեալ
Մէն և թշուառիկ ,
Ողբամ՛ աւասիկ ։"
Ուչք 'ի մտանի ,
Եւ ձեռն 'ի ծնօտի ,
Ընդարմացեալ եկաց
Իբր արձան աղի ։



# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

# ԴՐՈՒԱԴ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳՈՑՆ

՚Ի հոգոց Սօնդիպեայ խորհուրդք շնորհաց , հարց զՀայաստանեաց , Սօսայ խնդութեամբ պատասխանել , հանդիտութիւն ականաւոր վայրաց նորա և աշխարհին Հնդկաց , Հայկայ հրաշալի նահատակութիւնքն , — Շամիրամայ և Արայի պատերազմին նկարագիր , — Վիշապաց գերութիւն ՚ի Հայս , — Ստորագրութիւն ճանապարհին առ Հայս ։ Զու , և հատուածն , Վարդավառին տօն , Սօնդիպեայ ընդ օրիորդաց Հայոց ՚ի դաշտին ծաղկաքաղութիւն, Սուրաջայ յանկարծ ՚ի վերայ գալ , յափշտակել զնա , և կատաղաբար զոհել կուոց Վահագնի , խառնիղք ՚ի ալիս Աստղկան , անձնամատոյց նուէր և Սիրոյ ձգել զվարագոյրն ՚ի վերջ ։

# ՎԷՊ

## ՚Ի

# ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

## ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

՚Ի մէջ ամենայն
Վշտաց բնութեան
Որպէս հող յատուկ
է որդւոց մարդկան ,
՚Նոյնպէս և ճարտար
Կրթեալ ըղհանճար ,
Եւ առնէ ընդնա
Բխւր հնարից հայր ։

Այն և Սօնդիպմ
Սոյզ յայլս սրտի ,
Նոր հանձարեաց ինձ
Ցաջողուած բաղտի ,
Զի զգաստացեալ
Բան առխս ալար
“ Սօս , խորհէի միշտ
Թէ քանի՞ արդար
Զիցէ միտ բանիս ,
Թէ խնդրեն ասա միշտ
Իմաստունք՝ զհանգիստ ,
Ցիմարք՝ զհայրենիս ։
Ցորժամ՝ կոյր կրօն
Պայմանէ մարդոյն
Սրհինդ [1] ի սահման
Ընթացից իւրում ,
Հօր տուն մնաւանդ
Երբ դատեր է բանդ ,

Տխմա գերեզման
Ջաղեր և զարզանդ ,
Չլցէ յաւիտեան
Վասն իմ Հնդկաստան , —
Բայց քոյ որպիսի
Աշխարհ ՀԱՅԱՍՏԱՆ :"

Որպէս աչացուն
Ոստնու ՚ի կայթիւն ,
Եթէ խոստանաս՝
Աչաց տեսութիւն ;
կամ նաւուն ՚ի ծով
Ծփելոյ հողմով
Թէ ցուցանէր ոք
Հանգիստ ապահով ;

Օ՜ խնդրէ հողմահար
՚Նաւազնին ուրեար ,
Ջիւր երախտագէտ
Ոգի դուրս ամայր ,

Նոյն ես մեր ի մայր
Ոստեայ բերկլրացեալ՝
Երբ զերջանկութիւն
գտի, և հօր տուն։
Վասն որոյ զքնար,
Նախահարց առեալ
Այսպէս սկսայ
Տաղել զիմ Աշխարհ,
" ԶԱՂԽԱՐՀԷ՛Ս Հայոց
Առնես հարցուփորձ,
Որ ստեղծարան
է ազգաց հանուրց։
Որոց մայրաքար
կաթնասուն եղեալ
կրօնից և կենաց
Ցոյց ըղձանապարհ, —
Ուր ո՛չ [2] Ցանոսար
Ծաղկեալ նունաֆար,

Ցոլոլել 'ի քուն
Ջատտուած անկատար ,
Այլ ԱՄԵՆԱԿԱԼ
'ի Հայս խոնարհեալ
Ա՛նդ բանիւ իւրով
Կատարեաց զաշխարհ ,
Ուր տնկեալ զԱ·լին ,
Վայր երանածին ։
Եւ եդ 'ի նմա
Ջմարդն առաջին ,
Հայոց հաւասար ,
Ոչ է քո ³ հարդուար ։
Ուստի գանդէս մեծն՝
Իջանէ 'ի վայր ,
Որ առ իսկ ակամբ՝
Պղծի զարշութեամբ ։
Մարդազոհ գիշոց
Ողողեալ արեամբ ,

Ա՛յլ բղխի Եփրատ
Յորդ [4] Ափերահատ ,
Պարտիզէ պտղովք
Ջանջուրն անապատ ։
Ծոցէ և [5] զծոփեր
'ի գիրգ սիրալիր ,
Ուստի և ծնանի ,
Մեզ ոսկին ընտիր ։
Ո՛չ և [6] Հիմավանդ՝
Քո դից դարաւանդ ,
Որ արագահոս
Վտակէ [7] զինդոս
Գետ հինդ առաջեան
Ընդ որ Եգիպտական
Մոյծ զօր 'ի տեղ իւր ,
Քեզ բարոյս մարդկան ,
Ա՛յլ երբև զայլս
Փոփրացեալ Տիգրիս ,

*Խոր հերձակտոր*
*Առնէ զԱսորիս ,*
*Ընդ որ* [8] *Տիտանեան*
*Ա՛նց 'ի հայս ·Քաղդեայն*
*Զինքն ած հանեալ*
*'ի վառն ուրուական ։*
*Դրոշմել արեամբ հայց՝*
*Ցողի զաւակաց ,*
*Թէ բէլ ինքն իցէ ,*
*Արարիչն աստուած ։*
*կենդանի էր նոյ*
*մեր վերջին* [9] *Մնու ,*
*Որ զաստուածաբառ*
*դեռ խօսէր լեզու ։*
*Սա կոչէ ըղձայկ*
*նախկին նահատակ ,*
*Եւ կարդայ յունկան ,*
*Ճառ այսօրինակ ,*

“ Ո՛ր է՛ն հարց խմոց
'ի հեղեղաց ջուրց ։
Զիս արդարութեան
Քարոզ ապրեցոյց ։
Եւ զկատար Մասեաց ,
Ընտրեաց 'ի լերանց ։
Հրաշարան խուրոյ
Մեծ սքանչելեաց ։
Աստ յարեաւ սեղան
Բարեպաշտութեան ,
Եւ յողջակէզ խուր
Հաշտեաց զԵհովայն ։
Ո՛ր յամպս եդ Նըշան
Սրբոյ հաշտութեան
Ինքն էջ յայս խոնարհ
Դաշտ Արարատեան
Ո՛չ միայն օրհնել
Զհերկ և հունձ մեր ,

Այլ և ԶԻՆՔ՛Ն մեզ՝
Տէր ծանուցանել ։
Ուր Բէլ յոխորտայ
Որսորդն անոպայ ,
Ընդդէմ՛ Աստուծոյ
Եւ երկրի նորա ։
Ա՛ռ ընդ քեզ որդեա՛կ ,
Զայրն Արմենակ ․
Մարտիս հաւատոյ
Մատնի՛ր նահատակ ։"
"Նահապետն ասաց ․
Ն․ահատակն եռաց ,
Եւ զօր յԱղի՛ն ծով
կոչմ՛ աճապարեաց ։
Ընդ էր տեսանել ,
Զօրուն այրընտիր ․
Զի առնել և զայր
կատաղութեամբ՝ Բէլ ,

Գլուխ երկաթի
Բարձրըն պղնձի ,
Ձեռք և զրահք իւր
Համակ պողուատի ,
Այլ երեքթևեան
Արևոյս աղեղան ,
Թափ անցեալ ընդ մէջ
Կորոյս զՔաղդէայն ,
Ընդդէմ թշնամւոյն
կանգնեալ յաղթութիւն ,
Երբ գլուխն առ հո
Ներբովթայ [10] մերում ,
'ի տես կանանւոյն .
Ո՛չ յայպ անկելոյն ,
Այլ սուկ 'ի կազդոյր
կրօնից մերում ,
Իւ մեծահանդէս
Թագման լցեալ ծէս ,

Անուանէ զՔաջին
Դիրք՝ Գերեզմանք՝ մեզ ·
Ցեսանես Սէր իմ,
Ջայս մեր առաջին
Գործ պատերազմի
Զե՞ մեղմ, զե՞ վսեմ,
Այս է աւասիկ
Ապացոյց հերիք,
Բնութեան և բարուց
Քաջագործ Հայոց ,
Որով գերազանց
Բազմի գեր ազանց
Հայն ոսկեղենիկ
Ազգաց անդրանիկ ,
Եւ ըստ գիշախանձ
Ձեր Ուրուականաց
Որ լափ լիզելով
Ջարին Թշնամեաց ,

Զայն ոճիր չարեաց
Նկարեն աչաց՝
Ընդ որ և սարսին
Դժնիք կատաղեաց ,
Հայեա՛ց 'ի դուրգա
Քոյ տասնաբազկեայ ,
Եւ սա՛ հաւասար
փառահեղ [11] Նանեայ ,
Հայեա՛ց [12] 'ի կալի
Ճիւա՛ղ սոսկալի ,
Եւ 'ի շար գլխոցն
'Ի պարանոցի ,
Կամ 'ի [13] Պարբաթի ,
Եւ [14] Սարասուատի ,
[15] Կուժիլա , [16] Կունթի ,
[17] Րոտնի , և [18] Ստի ,
Եւ կանա՛յք իցեն
Աշապխոր դժխեմ՝

Անուրջք երազոյ
Աստուծոյ ընդդէմ։
Մեք զաշխարհ հնդկաց
Քամեցին յարեանց
Լոկ վասն լկտի
Ցանկութեանց իւրեանց ,
Այլ դու ես Տէր իմ,
Մնաս 'ի վէպ Ազգին
Եւ ընդ կանայս մեր
Հրաշանի՛ս , գիտեմ։
Պարծանք Հայուհեաց
Հիմնին յաւէտ յայս ,
Զի չառնեն ընդ դէմ
Պատույ և փառաց ,
Ո՞ երբէք մղեաց
Պատերազմ 'ի Հայս ,
Առ պաշտպանութիւն
Սրբութեան կանանց։

Կարծես, [19] կիմաւօն,
Քո բարձր հաւաքուն.
Ուր [20] սուհկայ խօսի,
Զխուժադուժ լեզուն,
Եւ [21] Բրիմպուտրա,
Զաշխարհ [22] կամրուպայ.
Լուացեալ համակ՝
'ի ծով անդր ամայ:
Լերին Բխուրակնեայ
Մերուամ՝ հանգէտ գայ,
Որ զադենահոս
Ամայ 'ի պոնդոս,
Փխուշն, կամ՝ [23] Ճորոխ
Գետ ամենաձոխ
Որ 'ի խոյս ոսկիս,
Հաչակէ զկողքիս:
Եւ զինչ, Արփենի.
Վասն [24] գեհոմնի.

Որ յանուն կոչեալ
Երաստայ մեծի
Կիսէ զԱյրարատ
Ըզդաշտ արգաւանդ ,
Մասաց և Մարմնոյ
Շտեմարան առատ ։
Օ ի որ աստ՝ զանձու ·
Ա՛նդ վասն գերդոյ
Պատերազմ՝ մըլեաց
Քօթար [25] Քաղդէոյ ·
Ուր անկաւ Արայ ·
Այլ [26] կոծ Նուարդայ
Թէ ո՛չ փոյթ ՚ի կեանս
Վերածէր ըզնա ։
Պատանիք Հայոց
Հրդեհեալք ՚ի բոց
Կիզուին գոգջիր ,
Ջաշխարհ անդնդոց ։

Դղրդէ՛ն դժոխք ·
Դողան վախ ու ոխք ,
Ջուր [27] խորոխտ պակչի
Գապանձին գրձղք ,
Մ՝ինչ վերայարոյց
Երևեալ իւրոց
Արայն , և սաաց ·
Հերի՛ք՝ քա՛ջք Հայոց ,
Ուր ՚ի ձոր Մասսեաց
Վիշապունք Մարաց
Ընդուշաւ Հանդերձ՝
Թագուհեաւ իւրեանց ,
Օ՛ր գերի վարեաց
Տիգրան Հայկազանց ,
Եւ վիշապ ՚ի վառն
Յաղթութեան՝ վարսեաց ,
Յորոց կընասէր
Աստապատցին եղ ,

Եւ ջուղա ստեղծ
Լեզու կորձ և կեռ ։
Բայց ոյք զԳողթան
գինէւէտ կալան ,
Ջոկ[28] պահեալ բարբառ ,
Ջոկ անուանեցան ։
Որ մեզ Աշդահակ ,
Ըստ Պարսից՝ Ջոհակ
Դիւական գործոց
Դիւթ և հեղինակ ։
Յորմէ Նախաթոռ
Եւ ահեղագոր
Պետութիւն[29] Մարաց
Ծաղկեաց ՚ի Հարուր ։
Ցէ՞ք քո[30] Կալասա ․
Ընդ ժայռ Տիբեթայ ,
Ուստի քարավազ
Գըլգըլայ գնգա ։

Թո՛ղ է ո՛չ բուն բառ հայ.
Այն է Քարաստահ,
'ի սահից առեալ
Մերոյս Երասխայ.
Կամ՝ զօղածոյ այն,
Ցաղթ կուլուն թերան,
Ուստ մոգք [31] Մուղալին
Գլխիկոր դարձան ։
Թո՛ղ է ո՛չ մեր կապան
Որ ձգի երկայն ։
'ի դահէ Գողթնեաց
Մինչ դաս 'ի [32] Մուղան,
Ուր ամոյ 'ի բաց
Սահան ջուրց բաղմաց,
Իբր անդամանդի
Պամուրջ կամարած ։
Նուր չափ բարձր և լայն.
Ընդ որ կարաւան

Ողջոյն մի զօրայ՝
Անթաց գնան ու գան ։
Ո՞ր այն աւրաստոյ
Լեառն քո [33] Մերու ։
Տաճար կարդացեալ
Լուսնին Արևոյ ։
Թէ ոչ մեր հուժկու
Լեառն Մարաթու ։
Ուր Սեմ՝ բնակեցաւ
Եւ Կոյս Գիշերոյ ։
Տեսե՞ր դժխո՛յ կոյս ։
Զի Աշխարհ Հայոց
Զէ մտացածին
Սահման երազոց ։
Այլ թէ ըստ Գրոց ։
Թ՞ուանդէից ծերոց ։
Դժխոյ դրախտաց
Է կխացնոյս ։"

Ցայս վայր Սորոնաք ,
Որ զուշ բովանդակ ,
Երգոց Հայրենեաց
Աղէր Հպատակ ,
Նշօք անմահից ,
Ակնարկեալ առ իս ,
"Գիտեմ, ասէ , Յո՛ս ,
Որ արդար խօսիս ,
Զի երկիր բարի ,
Զարդ բարի սրողէ .
Եւ ժողովուրդ զիւր
Քաղցր և քաջազօր ։
Բայց զի և ՚ի մէջ
Դից՝ մտանէ վէճ .
Եւ Հաղորդ բարւոյն
Գայ միշտ չարութիւն ,
Թո՛ղ զարդիս դու ինձ ,
Զհին առուրց անցից

Շքին ՚ի շքեղ
Եւս՝ աճել հանդէս ,
Եւ միայն սա՛ս ·
Թէ ա՛րդ զիա՛րդ կայ ,
Զարմ ՚նահատակին
Հաւատոյ՝ Հայկայ ,
Զի պանդուխտք Պարուց
Վա՜ղ պատմեցին ինձ ,
“ՀԱՅՆ թէ ՄԻԱԲԱՆ ·
Վա՜յ է նաև դից :”
“Շնորհ ունիմ քեզ ,
Որ ստիպես զիս ,
՚ի ճառ զուարճարար
Կացութեան Ազգիս :
Որ ՚ի մէջ Ազգաց՝
՚նախ ծանեաւ զԱՍՏՈՒԱԾ ·
Եւ կամք ՚ի կանոնս
Մաքուրն առ կենաց ,

՚Սա Հայր [34] Հնարից
՚ի յաւիտենից ․
Գտաւ առաջին
Վերին իմաստից ։
Նա քա՛ջ առաջին ․
Քա՛ջ կայ տակաւին ,
Եւ պերճ՛ ՚ի պայծառ
Ճառագայթ բանին ։
Թողում՝ զԵգիպտոս
Ցիւր հաստահեղոյս
Փքալ ՚ի [35] բրգեայ
Շիրիմք մեռելոց ․
Որք յարտաքուստ ահ ,
Եւ ՚ի ներքուստ՝ մահ ,
Դիզուն ՚ի գործով
Արքայից նորա ։
Պեռ [36] Ոսխրական
Մեր դպրոց ուսման ,

Որ ժամանակին
Չափ եդ և սահման ,
վերագոյն Նոցին ,
Ամբառնայ յերկին
Ըզշուք պարծանաց
գիտութեան Ազգին ,
Յարուեստարան մեծ
Հայեաց կործէից ,
Ուր [37] կործ մեր Նախնի
դաս ետ Հսկայից ,
'ի բարս և 'ի բուն
Տարերաց համբուն ,
Եւ յերար գաղտնի
համակրութիւն ։
Յաշխարհին [38] Մոգաց
վարժարան Հայեաց ,
Որ անուն և թիւ
կարդաց Աստեղաց ։

Քեզ 'նահէական
Մեր այն դարաստան ,
Նախկինն յաշխարհի՝
Տայ բժշկարան ,
Ո՛ն թէ մանաւանդ
Գաս 'ի 39 Ջարեւանդ ,
Ցեսանես զոր նախ՝
Ջարեւ ուսոյց անդ ,
Եւ 'ի 40 Սարատաշտ
Ուր վեհ Ջրադաշտ
Հրոյն Առաջնոյ
Հոգւոյն արար աշտ ,
Բայց զի միտք մարդկան ,
Ցետ թշուառն անկման
Հաստատուն կայցին
'ի չարին խընամ ,
Միութին նորուն
Է սուտ գժտութին ,

Թո՛ղ բանիս վկայ՝
Լիցի Բաբելոն ։
Ուր թէ Հայն միայն
կայ անմիաբան ,
գործ կատարեաց մեծ ,
Արարչին արժա՛ն ։
Բայց թէ համաբուն
Իցէ յօդ սիրոյն ,
Հայեա՛ց ՚ի Նորա
ՄԻԱԲԱՆ ԿՐՕՆ ։
Հայք մայր աշխարհի ,
Իրաւամբ կոչի ․
Որ խնամ տարեալ
Ազգաց՝ և տանի ։
Այնքան առաւել ,
Գայ յօտարին սէր ,
մինչ հոմ թուել քեզ ,
Հայն և հիւրասէր ։

Ը՛նց ընդ Ղարբլանիքու ,
Ցայն բլուր ընձու ,
Որ ընդ Պարս ու Հայս
Սահման արաստոյ
Գաս ՚ի [41] Մխանայ
Դաշտ կխալրուսնեայ ․
Ուր [42] զատրն Բայգամ
Լոյց Արամազդայ ։
Ուր Նախ [43] Ալեան ,
Ցամպոց բարձրութեան ,
Սիւգ ընդ յառաջէ
Քոյս գալստեան ,
Եւ ապա [44] Սհէնդ
Լեառն ծաղկաւէտ
Առուս առաքէ
Քեզ ակնակիտ ։
Ընտի ՚ի [45] Մարանդ ,
Ցարփային մարմանդ ․

Ուր Նոյեմկարա
Թաղեցաւ՝ մայր անդ ։
'ի զուարճարար
Ծաղկանց անօսրեալ՝
Բուրվառէ ըղձքն
Բոյր անմահարար ։
Ապ՝ Երասխ հզօր ,
Ո՛ տացէ մեզ օր ,
Զի սուրբ եզերացն
Մատուցուք համբոյր ,
Եւ 'ի նախջուան ,
Ուր Նախ իջեան .
Արարին խուրեանց՝
Հարք Ազգի մարդկան ։
Կամ 'ի Նախչուան ,
Ուստ Նախ չուեցան
Աշտարակաշէն
Բազմութիւն մարդկան ։

Տայցուք էութեան
Զուխտս գոհութեան ,
Որ յայս ժողովոյ
Փրկեայ զՀայաստան ,
Խնէ ընդ դաշտ Հայրուր
Գաս ՚ի ծաղկոց ձոր ,
Արծաթին գետակ
Քո դիմէ յայգոր ։
Եւ հարստունք հնձոց
Ուրոյն ՚ի գոգնոց ,
Բերեն պատարագ
Զընտիրս ՚ի բերոց ։
Բանայ [46] Մաղարակ
Զիւր սարին դարակ ,
Եւ արքանեկէ
Զանոյշն օշարակ ։
՚Ի ձախմէ Մասիս
Յաջմէ՝ գաւնին մեծ ,

Ընդ երկայնութիւն
Ծաւալին դաշտիս ․
Սուտի Արմաւիր
Նախ զայ ’ի տեսիլ ,
Թագաւորանիստ
Ազգիս փառալիր ։” —
“Սօս վանի հերիք ․
Զի քաղին ողիք ․
Ազգ քո Ազգ իմ է ,
Երկիր՝ Հայրենիք ,
Օ ի ծո՛ւր մահացուն ,
Որ զարքայութիւն
Բաց ինքեան տեսեալ
Եւ չեմուտ ’ի նոյն ․
Փութա՛ Սիրելի ․
Առաջ Սօնդիպի ․
Զի աւասիկ կամ ,
Որ ուր երթաս , գամ ։”

Յայնժամ՝ չու կազմեալ
Սարեմ՝ զանդրուար ,
Եւ զերես թեքեմ
Դէպ Հայոց յաշխարհ ։
Ուր իբրև յուսամ՝,
Նորոգ ցնծութեան՝
Յետ այսքան վշտաց
Կապել ծիածան ։
Նւա՛ղ անկայուն
Մարդկային յուսոյն .
Որ ի վախճանի
Տարևոր ուղւոյն ,
Որպէս նաւ բարձեալ
Մեծագանձ վաճառ
Յայս նաւահանգիստ՝
Սուզաւ չարաչար ։
Օ՛ի մինչ ի տօնիս
Եղանէր հուրիս

Ընդ Օրլուգաց
Հայոց աշխարհիս ,
Ծաղկունս հաւաքել ,
Փունջ ՚ի փունջ կապել ,
Եւ Դից Վահունեաց
Ջուլամբ արկանել ,
Մուրաջ հինդ Ռաջայն ,
Որ ՚ի 47 հոռեան տան ,
Ազգայնոյ խուռում ,
Նստէր ՚ի դարան ,
Մաւտ զանխլաբար
Սիրուհեացն ՚ի պար ,
Որպէս գայլ ՚ի հօտ
Գառանց ծաղկարօտ ,
Օ խուր յափշտակեաց
Դարբիկ դեռահաս ,
Եւ անգութ ձեռօք
Վահագնին ձօնեաց ։

ԶԳՒՆԱ՛ՂԴ ՚ի կանայս ,
Ահա՛ այս իմ՝ լաց .
Եւ ա՛յս իմ՝ աւիթ
Աղու արտասուաց ."
Իբրև Սօս վանեան
Յայս կնքեաց զիւր բան ,
Եռա՛ց հուր թաքուն
Յերակս Աստղկան ;
Զի զՍօս տեսանել
Եւ ո՛չ կղկաթել ,
Դիցուհեաց անգամ՝
Հնարին բան չէր ;
"Հազար երանի
Դստեր մահացուի ,
Որ Քաջիդ սիրոյ՝
Գտաւ արժանի ;
Զոհեալ Աստուծոյն
Մեռաւ մահացուն ,

Այլ իս մահացուիլ
Եղեց անմահ ձօն ,"
Նայաց դիցուհին ·
Եւ Սէր [48] ընդ բանին
Պարզեալ զառագաստ՝
Թաքոյց զերկոսին ։

ՎԵՐՋ.

# ՎԵՐՋԱԲԱՆ

Որ զայս կարդայ
Երգ գուզնաքեայ,
Եւ տարապարտ
Տրտունջ բանայ՝
Յուշ ընկալցի,
Զի զարդ երկրի,
Միօրինակ
Ոչ փոփոխի.
Այլ ոմն այսպէս,
Եւ ոմն այնպէս,
Վայելչութեան
Կազմէ հանդէս.
Ի ՚ի ծննդոց
Ազգաց հանուրց՝
Դեռ մի միայն
Կայ Հոմերոս.
Մանաւանդ զի՝
Քերդող չէի,
Այլ լո՛կ ժըռո՛ն
Զայս գրեցի,
Որ ըզթօնթոր
Սրբազան Հօր
Յիմ վաստակոց
Բառնամ բոլոր.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

## ԱՌԱՋԻՆ ԵՐԳՈՅՆ

1 ՎԱՀԷՎԱՆԵԱՆ առի ՏօՆ Վահագնի որդւոյ Տիգրանայ Հայկազնոյ, որ նախ 'ի Վիրս և 'ի Յոյնս, և ապա 'ի Հայս աստուածացուցեալ պաշտէին նախնիք Վահունեաց։ Զարմանամ յիրաւի. զի և յազգի մերում թագաւորութիւն և քահանայութիւն 'ի մի զարմ բովանդակէին։ Ըստ որում երբ մին անց 'ի Մակեդովնացիս, միւսն անխախտ մնաց 'ի սերունդս նորա։ Տաճար սորա երևելի 'ի Տարօն՝ կործանեաց Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ։ —

2 'Ի մէջս ազգաց բազում թուին Վահագունք՝ իւրաքանչիւր ազգ զգործս և զարարս այլոց յիւր անձն ժողովեալ բարդեաց, որպէս և Փըր-դովսի՝ 'ի Սակձին իւր Ռոստամ։

3 Զամգ Մարաց. զի Մար ի լեզու Արեաց մեծապ թարգմանի. Նազի և Հարստութիւն ինչ առ նոսա Աշդահակ կամ Վիշապ անուանեալ՝ բարձաւ ի Տիգրանայ մերմէ՝ առ Կիւրոսիւն Պարսկաւ.

4 Բար, ի լեզու ազգաց զորդի նշանակէ, և Սամ կամ Համ՝ Սեմ կամ Արև. Բայց թէ ծիլ այս նախնի Ասորեստանեայց՝ տարակոյս մեծ է. ՚ի ձեռագիր մատեան ինչ Պարսից՝ որ կոչի Շէբրաք նամէ, ընթեռնումք օրինակ զայս. "Գիտեմ, զի Պարս որդի Պահլաւայ որդւոյ Սմայ որդւոյ Նոյի աստուածախաղաղի, հաստատեաց զինքն ՚ի Պարս, ուստի և աշխարհն ընկալաւ զանուն, և ՚ի ձօրէ նորա Պահլաւայ՝ լեզուն Պահլաւեկ." Որում բառ երեք համաձայնի և Խաչատուր Վարդապետ. զի բար. փուր, պուր, և պուհ ՚ի լեզուն Պարսից նշանակէ զորդի. իսկ Ս, Սեմ կամ Արև. Փրկոմակ ՚ի Ռօշաքամնամայէն զնէ զՆիւրոմ, Նուրիմ, կամ զՆուրիման (Նոյ՝) զուլորդի Քուշ Արմանայ, զի բառ Ռիշարդանի, "Նուրիման՝ (Նոյ) երևելի հսկայ Պարսից որդի էր Քուշ Արմանայ. այսինքն Լէրի Հայոց, Հայր Սամայ, հաւ Զալզարայ, և նախահաւ Ռոստամայ." Ուստի Բար Համ այ-

սէնքն որդէն Սեմայ էր Զաւ հայր Քօստամայ, որ ընդ Ասորեստանեօք էր յայնժամ. բայց զի որդէք Սեմայ բազումք եղեն, ընտրել հարկ է քան պնդել թէ ո՞ սա ՚ի նոցանէ ։

5 "Յաղագս կաթին ծրոյ ումանք յառաջնոց Հայոց ասացին թէ ՚ի խիստ ձմերան Վահագն նախնի Հայոց գողացաւ զյարդ Բարշամայ Ասորեստանեայց նախնոյ, զոր մեք սովորեցաք ըստ խօսութեան Յարդգողի հետ անուանել։" Շէր։

6 Աստեղատուն յերկնին՝ շքեղ ստեղօք երեւելի՝ յանուն նախահօր Ազգի մերոյ՝ որ զաստուածամարտին Բելայ կամ Ներբրովթայ Որսորդէ եբարձ զկեանս ։

7 Աստղիկ ըստ պատմութեան Հայոց դուստր Նոյի, համարեալ առ նախնիս հեթանոսաց Ափրոդիտէ չաստուածուհի հեշտութեան. որ այնինքն է Փրփրածին. զի ՚ի փրփրելոյ համատարած հեղեղաց ապրեցաւ ՚ի տապանին՝ ընդ Հօր իւրում. կամ առաջին դստրիկ ծնաւ յետ հեղեղաց իբրեւ զաստղիկ լուսազեղ։ Առասպելք Յունաց զնաւարկութենէ սորա խնչերանք և եթ են ճշմարտութեան այսորիկ։ Կոչի Զոհրա ՚ի լեզու Արաբացւոց և Պարսից, որ իբրեւ հարսնիկ գեղեցիկ, ուսաւ զներդաշնակութիւն երգոց ՚ի

Հրեշտակաց անտի՝ Հարութայ և Մարութայ, և վերացուց յաստղն լուսաւորիր. Ըստ որում նկարի արուսեակն կին գեղեցիկ, թագ եօթնալուսեան 'ի գլուխ իւրում, յաջ ունելով սառման իւղոյ, և 'ի ձախոյ՝ զանոր. Զառուցս աստանօր այլք Հերայ ընծայեն կնոջն Արամազդայ. այլ ինձ յաջող ես համարեցաւ Միհրամօր շնորհ տալ, հետևելով Դուքեսպան գրոց Փանեայ.

8 Վարդամատն, մակդիր Աստղկան է՝ դիցն փափկութեան. մի՝ զի տօն սորա վառէր վարդով առ Նախնիս մեր, ուստի և վարդավառ անուանէր. Եւ երկրորդ՝ զի ախթարք Պարսից մինչև ցայսօր ժամանակի կոչեն զնա հարսնիկ Նաւագաձա երորդն երկնից.

9 Սուր կամ Սուրաջ նշանակէ զԱրեւ, և էր անուն արքայի Հնդկաց՝ հօր Սօնլիպեայ, որ զդուստրն զրպարտեալ՝ 'ի զոհ ուխտեաց Կռոց՝ առ որում և զատանիցէ զնա.

10 Ոմանք 'ի Պատմարանից մերոց շփոթեն զԱստղիկն ընդ Անահտական դից. այնու՝ զի արձան ոսկէձոյլ էր նորա յԵրիզա. զոր առ Անտոնինոսաւն խորտակեցին զօրք Հռովմայեցւոց, և միւս՝ զոր խորտակեաց Սուրբն Գրի-

զօր ։ Բայց ինձ հաւանական երևի , թէ Ոս-կեծղէն ելէ մակղիր Աստղկանն կամ Հեշտու-թեան ։ Ծէւ ծէւ ..ջէ է Վըըէ Բէրէրն ։ Վարդ և սոխակ առ Արևելեայս՝ նշանակք են սիրոյ և զուարթութեան ։

11 Արածանի է երկրորդ մասն Եփրատայ , որ լծանայ ՚ի Նոր Գիւղ առ Մուշ քաղաքաւ Տուրուբերան աշխարհի , և գայ խառնի յա-ռաջինն՝ ՚ի Շողինաձոր յԱնախաթուն , կամ յԱնախփախն անուանեալ տեղւոջ ։

12 Սննեակ Վահագնի կարգացեալ լինէր յասկապէս առաջար Արեգակնան Վահագնէ , որ-պիսի է այժմ տուն Ոսկոյ չաստուծոյ և Ոսկոյ չաստուածուհւոյ ՚ի Հնդիկս . զորս պաշտօն Ոսկա անուանեն նոքա , որ է ոսն Արևադարձի ։ Ար-քայն Պարույր երդուաւ ՚ի Ոսկա պատմել զնա-խարարս Հայոց , եթէ ոչ անկեալ երկիրպագա-նիցեն Արեգական . Եղէւ ։ ՚Ի զօւր ճգնի Նոր Բա-ռարան մեր մեկնել զՈսկան՝ [illegible] ։ Մոլ-պեսան Մոլպես Ոսկա՝ յազէ առելով ։ Ուղիղն է , Մոլպերան Մոլպես՝ Ոսկա յազէնն ։

13 Ուժգին Դիւց վերնոց առի Սէր . զի զը-րեթէ աստուածք ամենայն հնազանդին նմա ,

14 Յաւուրց անտի Հոմերոսի և այսր՝ Նկարեն

զսէր մանուկ կոյր՝ զի սէր ոչ ընտրէ ։ Թուեւուն՝ զի ցանկութիւն չոյր թռուցեալ ՚ի բաց ցնդի · զինեալ աղեղամբ և կապարճօք՝ զի ոչ գիտէ զոմ հարկանէ ։

15 Եթէ Քրիստոնեայքս որդիք Աստուծոյ իցեմք շնորհօք, ուրեմն պատկառելով ընկալցուք զարդար երգիծանս Աստղկան և զգաստասցուք կորստեան հոգւոց մերոց ։

16 ՚Ի մէջ Նախնեաց, աստուածածանօթիցն առեմ և սնոտեաց՝ այնքան յայտնի եղև արուեստ դիւթութեան, բաղտի՝ բաշխի՝ և ծննդեան, մինչ Եգիպտոս ընդդէմ կալ վստահացաւ աստուածահրաշ սքանչելեաց Մովսիսի · և Բաղաամ ՚ի Հայոց հրաւիրեցաւ ՚ի Քանան՝ անիծանել հմայիւք զորդիսն Իսրայէլի · — Սամուէլ ՚ի գերեզմանէ վերածաւ ՚ի տեսութիւն և ՚ի ճշմարիտ մարգարէութիւն տանն Սաւուղայ · և բազում մատեանք բազմագոյն գնոց՝ եդան յոտս Առաքելոցն՝ ՚ի կորուստ ։

17 Տես ՚ի դիցաբանութեան իմում, և ՚ի Սանդխտարանի՝ որ տակաւին չէ տպեալ ։

18 Բրահմանք ասին քուրմք Հնդկաց, որ առասպելին զանձինս ծնեալս ՚ի բերանոյ Բրմհայ դից արարչութեան ։ Զի՞ք իշխանութիւն, զոր

ոչ զբռամբ ածեն յամենայն իրս կենաց և կրօնից ժողովրդեան, մինչև նաև զխորս խորհրդոց նոցա։

19 Կանոջ առ Մուղալ Ինքնակալօք՝ քաղաք երևելի 'ի համանուն գաւառին Ակպարապատայ, և արքայանիստ Գանդխակողման Թագաւորացն Հնդկաց։

Էջ 20 Տող 11

Մորփէոս չաստուած քնոյ և երազոց. և մեկոն, խաշխաշ կամ Թմրութիւն քնոյ։

20 Մարդակերպ Թեւաւոր արարած, որդի կամ պաշտօնեայ դից Երկնից կամ Հեշտութե, Ասի, Թէ Գանթարվայ անիծիւք Հօրն անկեալ յերկնից փոխեցաւ յիշոյ կերպարան, և բնակ'ր 'ի մէջ Սաբհարամատի և Մահի գետոց 'ի Գուզրաթ. պղնձի պարսպեաց զքաղաքն Կանոջ, և առ զդուստր Արքային 'ի կնութիւն իւր։ Պատմ։ Հնդ․, Էջ, 210։

21 Ակնիկուլայք ասին ազգ ինչ Կշեթրայից. զորոց զարմ՝ առասպելի ծագել այսպէս։ Նեղացեալ Բրահմանաց 'ի Բուդդայականաց անտի՝ ելին 'ի լեառն Աբու, ուր Բրմհա, Ռուդրու և Վիշնու, համդերձ խմբովն աստուածոց սորայնոց. մաքրեցին զակն կրակի ջրովն Գանգեայ, և իւրաքանչիւր 'ի դից առարկալ զբագին իւր՝ ընկէց 'ի

նա , ուստի ելին չորեքին մեծամեծ նահապետք Ակնիկուլայց՝ Պրումարա , Կոհանա , Սոլանկայ , և Պուրիհարայ , որք պայազատեալք ՚ի Կանոյ՝ տարածեցին զտէրութիւն իւրեանց ցՆերբուդեան գետ ։ Պատմ ՀՆդ ․ Էջ 199 ց201 ։

22 Փուչ , արմատ փչելոյ , ուստի փուք ․ պղպջակ , ունայն , սնոտի ։

23 Հայեցեալ ՚ի պատմութիւնս ազգաց՝ ոչ ուրեք գտանեմ՝ յարութիւն ՚ի մեռելոց համբարձեալ՝ որ կանխագոյն իցէ քան զպատերազմն Շամիրամայ ՚ի Հայս , զմահ Արայի և զհամբաւ յարութեան նորա ․ թէպէտև աստուածք Առլեզք լիզեալ իցեն զմահ նորա ՚ի կեանս ։ Եթէ ոչ էր անդստին այս հաւատ ՚ի մէջ Ազգին , գիտ՟րդ կարե որ Շամիրամայ զսպել զյարձակումն զօրաց Հայոց՝ այսպիսի նորաստեղծ խաբէութեամբ , և կանգնել ՚ի Հայս զպատկեր դիւաց՝ առ որ չէին իսկ սովոր ։ Խոր․ Ա․ ժե ։

24 Անախտ , Անայիդ կամ Նայիդ ծագեալ ՚ի Նոյ բառէս , որ է հայեցուած ․ ըստ որում Հոյնէն երկնից՝ Մ՚ահ, Ամիս կամ Լուսին նկարէր կին հեծեալ ՚ի ցուլ սպիտակ ․ յաջն չարան յակնթի և ՚ի ձախն ոսո ռեհանի ,

Հայեցեալ յԱգաթանգեղոս և ՚ի ժամանակս

կռապաշտութեն Տրդատայ և աշխարհիս Հայոց,
թերևս յապշութեն կրթի ոք 'ի փառացի պատ-
ուանուանց անտի՝ զորս տային սմա հինք, 'ի մի-
ջան Արքային կոչի 'սա Տիկին, փառք Ազգիս,
և Կեցուցիչ, Մայր ամենայն զգաստութեանց,
Բարերար բնութեան ամենայն մարդկան, և Ծը-
նունդ մեծին արին Արամազդայ, "զոր և Թա-
գաւորք պատուեն ասէ. մանաւանդ Թագաւորն
Յունաց." Կոչի նաև Խնամակալու 'ի հրովար-
տակին Տրդատայ առ Հայս. "խնամակալութիւն
յԱնահիտ Տիկնոջէ" (հռոյէ ։) Վկայէ Ստրաբոն
թէ քան զայլոն առաւել Հայք պաշտէին զԱ-
նահիտ, որում և յայլուր և յԱզիլիսինի կանգ-
նեցին մեհեան։ Ազգս և զդրացեաց մերոց զԱղուա-
նից խօսելով ասէ, "աստուածս պաշտեն զԱրև,
զՈրմիզդ, և զԼուսինն. որոյ տաճար մօտ է առ
Վիրս։" 'Ի թուել նորա նաև զանեղիս տէրու-
թեան մեծին Միհրդատայ՝ յիշէ զԳամիրս 'ի Կա-
պադովկիա, Ունին ասէ նաև տաճար Անայ որ
Փառնակէս ասի։ Պլինիոս վկայէ և վասն անդա-
դարկ ոսկի պատկերին սորա, որ յԵրէզն աւանի՝
յԵկեղեցեաց գաւառի մերում. զոր ըստ վկայու-
թեան Ագաթանգեղոսի "փշրէին զոսկի պատկերն
Անահտական դից։" 'Ի հնութիւնս Պարսից ոսկի

պատկեր միայն Արեգականն ձուլէր , իսկ 'ի մերսն Լուսնի • որով երեւի՝ զի որպէս արեւ առ նոսա լեալ էր 'ի մեծի յարգի , նոյնպէս եւ լուսինն առ միօք • Ոչ օտար 'ի հաւանական կարծեաց տե-սանեմ , թէ որովհետեւ Պարսկաստան եւ Հայաս-տան փոխանակի տարան զառաջին եւ զերկրորդա-կան զահն՝ այսպէս իմն համաձայնեալ իցեն, զի մին զարեւ , եւ միւս՝ լուսինն ունիցի յիւր աստուածս նախամեծար • Եւ ոչ իսկ զարմանալի համարիմ , թէ որպէս արեգակն եւ առիւծ կան եւ մնան մինչ ցարդ նշանք տէրութեան Պարսից , նոյնպէս եւ Լուսինն եւ Ցամոյր լեալ իցեն նշանք Տէ-րութեան Հայոց նախ քան զՔրիստոնէութիւն • Քանզի դեռ կանայք մեր 'ի Հայաստան մի 'ի զարդուց կամ 'ի ըժժանաց ծամակալացն ունին զԼուսին ոսկի կամ արծաթի •

Բայց հայեցեալ 'ի հնութիւն պաշտաման ու-րա 'ի Հայս՝ սակամ ազատանալ 'ի կարծիս , քանզի Խորենացին 'ի գրել իւրում զհնութենէ Վաղարշապատ քաղաքիս մերոյ՝ վկայութիւն բերէ զբանս հնախօս երգոց աշխարհիս , յասելն վասն Վարդգիսի թէ "Վարդգէս մանուկն եկեալ 'ի Տուհաց գաւառէն եկեալ նստաւ զՇրէշ բլրովն եւ զԱՐՏԻՄԷԴ քաղաքաւ •" Հաւաստի իմն

է, զի Խորենացին յայնց երգոց առնու զբանն որ յետոյ Աղէքսանդրի երգէին Հայք. և ահա յայնմ ժամանակի ըստ վկայելոյ հնախօսից ջուն գործեցին Յոյնք զանուանս աստուածոց օտար ազգաց յիւրեանց աստուածոց ածանցեալս կարծեցուցանել. Նա ընդդատեցին իսկ զամենայն ժողովուրդս փոխել զանուանս աստուածոց իւրեանց՝ և Յունական անուամբք յորջորջել։ Այս այսպէս իմացեալ մեր՝ հետևայուցանեմք ապա թէ քաղաքն յառաջ Անահիտ կոչէր, կամ յանուն նահապետական անձինն, որ գլուխն է ուսոյց, և կամ մօզին և մօլորակին միանգամայն, իբրև դից աւան. Նշանն՝ դրօշ ՚ի վառն կէյ Քաւուզայ էր արեգակն և լուսին ՚ի վերայ նորա. որ ցուցանէ զայնու ժամանակաւ նախագահութիւն Ազգին ՚ի վերայ Մարաց և Պարսից. Բայց յաղագս Արդիմէդ քաղաքի երկու այլ ևս վարկմունք յանդիման լինին ինձ. մի՝ զի որպէս յանուն նահապետաց այլոց ազգաց զտանին տեղիք ՚ի Հայս, այնպէս և սա կոչեցեալ իցէ Արդ, Արտ, կամ երկիր Մեդայ նահապետի Մեդացւոց. Իսկ երկրորդ՝ թէ գուցէ յառաջին արշաւանսն անդ տիեզերակալին Արամայ, և յաջորդաց՝ դերի կամ գաղթական հարեալ

'ի Մարաց և այսր ածեալ բնակեցուցեալ եղեն ։ Ապա թէ ո՛չ պաշտօն Լուսնի՝ կամ անուն , և այն Յունական հնչմամբ , հազիւ թէ ճանաչէր ով 'ի Հայս նախքան զաստուածացուցումն Վահագնի, ո՛ւր թէ և կարել զայն 'ի վերայ այնքան աշկեար քաղաքի՝ հուպ առ Արմաւիր ։

25 Սիտա է անուն կնոջ Ռամայ , զոր Ռաւուն հսկայ Լանքայ յափշտակեաց · իսկ աղբիւր Սիտայ կոչի ջերմուկ Մունկերայ՝ բորբոքեալ իբրև կաթսայ եռանդեան՝ ականակիտ ջրով ։ Առ որ գնան բազմութիւնք ախտաժետաց և լուղան , կէս՝ 'ի կրօնից յորդորեալ , և կէս 'ի բժշկական զօրութենէ ջուրց նորա ։

26 Հոյլ , կամ հուլ · առասպելեալ ակն պատուական 'ի գլուխ արքայի օձից , որոյ լուսով առի տեսանել զկերակուր իւր ։

27 Քթոց կամ քթանոց առնումք աստանօր փոխանակ Թէչլա բառիս Հնդկաց , որ նշանակէ զզարդ քթի , կամ ռնգանոց ։

28 Խեմ է շրջանակ մազի կամ խարբալի ։ Իսկ Սանի , ըստ Հնդիկ դիւցաբանութեան՝ է անուն Երևակին , որ նկարի 'ի սեաւ կճոյ՝ գլխով կապկի , երանաւ մարդոյ և զաւակաւ խոզի · Թագ 'ի գլուխ , խեմ յաջ իւրում , և օձ գալար 'ի ձախն ։

վոհան կամ հեծանիլն սորա ըստ Հնդկաց՝ է ճայն թռչուն՝ որ զծնունդս իւր կլանէ. ուստի և հազուագիւտ է յաշխարհ ամենայն, այնինչ կուինչք ագռաւուց գլխելս ձանձրացուցանեն յամենայն ուրեք։ Նոյնպէս կարծեն գրկելով սպանանէ զձագ, խոզ՝ զքորակս ուտէ, և ժամանակ ծնունդս իւր կլանէ։

29 Սումատրայ է կղզի իմն երկայնաձև յանդիման Ջաւայ՝ 'ի Նեղուցի արեւելեան Հնդկաց ուր բնակեն զանազան ազինք Բուկիսաց, որք տակաւին ուտեն զմարդիկ. ընդ աւազս գետոց նորա բարձեալ բերի փոշի ոսկւոյ, զոր հաւաքեալ բնակչաց վարեն 'ի վաճառ։

ՀՈՒՐԻ տիրապէս հայ բառ է, և նշանակէ հրեղէն կամ գերմարդկային իմն արարած յիգական սեռի։ 'Ի զուր ստուգաբանեն զայս նշանակել շեղշնաչէայն 'ի լեզու Արաբաց։ Է և Փէրին Պարսից՝ պարիկն Հայոց։

30 Բայց վասն այն և բորբոքեան Շամիրամ 'ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա ( Արայի ) ցանկայր հասանել. և բազում անգամ երթևեկութիւն հրեշտակագնացութեան լինելոյ և ոչ հաւանել Արային, 'ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ առնու զբազմութիւն

զօրաց իւրոց , և փութայ հասանել ՚ի վերայ Արայի ։ Իսկ ՚ի լինիլ մարտին մեռանի Արայ ՚ի պատերազմին ․ և ՚ի միւսանգամ զրգռել զօրացն Հայոց քինախնդիր մահուանն Արայի՝ հրամայեցի ասէ աստուածոց իմոց լիզուլ զվէրս նորա և կենդանասցի ։ Խոր Ա ․ ժե ։

31 Պարիս որդի Պրիամու դատաւոր եկաց ՚ի մէջ Հերայ, Աթենասայ և Աստղկան , թէ ո՞վ արժանաւոր ոսկի խնձորոյն խռովութեան ։ Հերա խոստացաւ նմա զհարստութիւն ․ Աթենաս՝ զիմաստութիւն ․ իսկ Աստղիկ՝ զգեղեցիկն ՚ի կանանց՝ զՀեղինէ զուստր Մենեղաւսայ արքային Սպարտացւոց ․ յորմէ ծագեցաւ տասնամեան պատերազմ և վերջին աւերած Տրոյիոյ ։

32 Յաղագս Սամփսոնի՝ Վահագնի Հրէից , և Դալիլայ Թամնաթացւոյ՝ տես Դատ , ժդ ․ ժե ․ ց ժզ ․ վերջ ։

33 Պիրամ և Թեսբէ ծնան և սնան ՚ի Բաբելոն , և ըստ խռովութեան իրիք ծագելոյ ընդ մէջ՝ բաժանեցան յիրերաց ։ Թեսպէ յառիւծոյ պատառեցաւ , և Պիրամ ՚ի սիրոյ նորա ։

# ԾԱՆՕԹ. Բ. ԵՐԳՈՑՆ.

1 ՇՆՈՐՀՔ երեքին քոյր կուսանք, Պայծառ, Անթառամ, և Ջուարթ. դստերք Գինւոյ և Գիղոյ, կամ Աստղկան և Բաքոսի, որք միշտ զհետ գնային Աստուածուհւոյն հեշտութեան.

2. Արհմ, Արհիման կամ Խարաման որդի Զրուանայ, եղբայր Որմզդի կամ Արամազդայ, սկզբնահայր չարեաց և աղետից աշխարհի. Զի որ ինչ բարիք ՚ի յՈրմզդէ արարան, իսկ որ չարք՝ յԱրհմնէ, ասեն քեշակարկառքն Պարսից. Կռուին ՚ի մէջ զօրաց Արհիման և Որմզդի՝ առիթ ետուն հրաշակերտ երկնամարտութեանցն Միլտոնի ՚ի Դրախտն իւր Կորուսեալ.

3 Սուտ Բերանածին. զի առասպելէին Բրահմանք թէ ծնեալք իցեն ՚ի բերանոյ Բրմհայ՝ հօր հնդիկ արարչութեան. Տես ՊաֆՏ, ՀՆԴ.

4 Հարսունք դաշտաց անուանին առ քերթողս՝ մտացածին ոգիք ինչ պահապան դաշտաց.

5 Նանէ, Աթենաս կամ Պալլաս աստուածուհի իմաստութեան և պատերազմի.

6 Ար, ամօթ կամ Նախատինք այլազգերէն. բայց ՚ի բարդութեան արհամարհ բառիս կայ նոյն նշանակութեամբ ար — համար՝ այսինքն

տա , ամօթ կամ նախատինք համարեալ ։

7 Աշդահակ արքայ Մարաց , զոր սպան Տիգ-րան · զորոյ վարանաց և զտարակուսանաց՝ տես Խորէն ։

8 Այովդիա , կամ Ովդ Նշանակէ ազատ 'ի պատերազմաց . ուր զմեծ կռատուն Ռամայ կոր-ծանեաց Ակպար արքայ , և այժմ ուխտա-ւորք 'ի վերայ գետոյն առնեն զՋրօրհնէք կամ տօն · զի ասեն թէ անդ ծնաւ Լաչման եղբայր Ռամայ ։

9 Հիմանտեան աստուած կոչի Սիպ , ահա-ւորագոյն 'ի դիս համօրէն Հնդկաց վախճանարար զօրութեամբ իւրով ։ տես Պաւտ , Հնդ · ստէպ ։

10 Ճակատագիր , Բաղտ , Պարկեանք · բայց Գրող յայս միտ առեալ ըստ նախնի մեհենա-կան պատմութեանց մերոյ աշխարհի , եւս ի զու Հրատն , Դպիր , կամ Տիր · որ դրօշէր կրծոյն 'ի վեր՝ զխոյ Վարազու , և 'ի խոնարհ՝ տառամբ ծը-կան թեփոտեալ , յաջ իւրում գրիչ , և 'ի ձա-խըն կաղամար ։ Գլխով Վարազու զշամբամուտ խուզողութիւն . և տառամբ ձկան՝ զ'ի խորս իմաս-տութեան սուզանիլն յայտ արարեալ ։ Կոչի և Դիւան , և Երազընդհան , առ Ագաթանգեղոսի ։ "Տաճար երազընդհան պաշտաման Տրի դպրի , դպրի

գիտութեան քրմային անուանեալ դիւան զրչի Որմզդի Ճարտարութեան։" Անուանքս Տրդատ , Վարազդատ , Վարազդէն . յայտ առնեն զաճաւորութիւն նորա առ Նախնիս Հայոց . իսկ աղ կնքել Վարազազիր մատանեաւ իբրեւ զմեծազոյն երդումն , ոչ 'ի սակս ցած և բարձր փորուածոյ գրոցն էր' որպէս դնէ Հնազիր մեր , այլ 'ի սակս ունելոյ զպատկեր Վարազուս այսորիկ ։

11 ԺՈԽԿ· Ժամանակ ընդարձակ դար , կամ յաւիտեան պարունակող անհամար ամաց . նոյն 'ի մեզ և 'ի Հնդիկս ։ Տես Պատմ . Հնդ . Ծան . 1։

12 Տանկրան ·Քաշխե զարքայն Արեաց իմանամ , զի Միհրներսեհ առ Եղիշայ' կոչէ զինքն "Վզրուկ Երան և Տանկրան ։" Իրան— Թուրան ։

13 Ըստ Բուն հնչման Հնդկաց' Ամրթայ · որ ըստ մեզ' ամեր տայ , կեանք տայ , կենդանութիւն տայ , ոչ այլ ինչ է , եթէ ոչ զինի Հայաստանի այսօրինակ այլաբանեալ 'ի Մահաբհարաթ գրոց ։ " Է լեառն մեծ և գեղեցիկ որոյ անուն ՄԵՐՈՒ կոչի , ամենաբարձր շեղջ փառաց' որ անդրադարձուցանէ զճառագայթս Արեգական 'ի մէջոյ լուսափայլիւն եղջերաց իւրոց . ոսկեպատեալ չորեքկուսի' բնակարան հանդիսանայ Դի-

ւանց և Գոնիթարիլաց , անմատոյց 'ի մարդկանց մեղաւորաց · շուրջ պատեալ պահի 'ի վիշապաց զարհուրելեաց ։ Ընդ եմակս նորա յարազուարճ զալարիք երկնաւոր բժշկութեան · և կայ ճեղ-քելով զերկինս զերամպային զագաթամբ · լեառն հզօր անմատոյց և 'ի մտաց մահկանացուաց ։

Սուրք այսինքն քաջք և ամենայն փառաւոր զօրութիւնք երկնից իջեալ 'ի կատար բարձու-լերին այսորիկ՝ յառեան նստան յահազին , խորհել զգիւտոյ անմահականն Ամրիտայ · կամ Ջրոյն՝ որ Ամրիտայ ։ Դև Նարայան անդր գոլով , խօսեցաւ ընդ Բրմհայ , և ասէ , "Թող հարցէ Օվկիանոս իբրև զխնոցի կաթին միաբանեալ զօ-րութեամբ Սուրաց և Ասուրաց , մինչև կոգի-ացեալ Ամրիտայ 'ի վեր ելցէ յերես ջուրց բազմաց ։ Էր անդ և Մանդար կամ լասա լեռ-նաչափ՝ ուր բնակէին Կինարք , այսինքն կենդանի արք Դևք և Ապսարք , մետասան հազար ոճ բարձրութեամբ և մետասան հազար ոճ խորու-թեամբ իւրով ։ Զոր իբրև չկարացին դևքն շարժել 'ի տեղւոջէն՝ աղօթաւոր մատեան առ Վիշնու · որ բազմէր ընդ Բրհմայ · և ասեն ցնոսա · "Արկէ՛ք տեա՛րք , ցուցէք զիմաստու-թիւն ձեր զմեծ՝ առ օգտի մերում ։" Վիշնու

և Բոմհայ զինեալ ՚ի հայցուածոնոցս՝ հրամայե-
ցին զօրքայն օձից զԱնտիփա յանդիման կաւ-
անդ, և առնել զոր ինչ միանգամ և Նարբո-
յանն պատուիրեցէ։ Յայնժամ Անտիփա օգնու-
թեամբ Սուրայ առ Սկանդար, և յանդիման արար
ծովու՝ խոստացաւ ծովակալին զբանն. և բար-
ձեալ զՍկանդարն ՚ի վերայ Կոտեր Բուջայ կամ
թագաւոր Կրայի, կամ խեցգետնին, ( աշխարհի
Հայոց, ) ձեռն ՚ի գործ արկ խնդրել պայտօքել
զայն իբրև զանիւ կոգեհանոյ. ուր Վիշապն
Վարազէ, (հօրեղբօր կոյս աղօրս,) եղեն նոցա ՚ի պա-
րան. և այսպէս Գրէ, Գէ, Աղղուր և Թրանշաւ,
հարին ՚ի հնուածն զվկփանոս ՚ի գիւտ Ամիխայ։
Անտերէ ՚ի կողմանէ գլխոյ օձին դործէին, և
Սոտէ ՚ի կողմանէ տտտնն, իսկ Անտիփա դիւաց
մեծաւոր՝ կայր առընթեր Նարբոյանայ։ Եւ
այսպէս այնքան շարժէին զգլուխ օձին և հար-
կանէին՝ մինչ հուր ելանէր ՚ի բերանոյ նորա
զալարմամբ ծխոյ, իսկ շաչիւն ծովու ՚ի հար-
կանելոյն իբրև զորոտ ահագին ամպոց լսելի լի-
նէր. ամենայն շունչ կենդանի մեռանէր ՚ի ջուր,
առիւծ, և առանձնասէրն փիղ հարան հրով
բերանոյ օձին և ծախեցան ՚ի կորուստ։ Հուր
զինջաւ ՚ի հեղեղաց, զոր անմահն խնդրել հոսեաց

՚ի վերուստ․ Եւ ՚ի բաղդատութենէ ամենայն գոյութեանց յուզեցելոցն հարուածովք՝ Սուրք ընկալան զանմահութիւն․ Արդ ջուրք անդնդոց զանգեալ ընդ հիւթոց էակացն՝ արտադրեցին յիւրեանց զտեսակ իմն կոգւոյ կամ իւղոյ․ ուր զօրք հրեղինաց վերատին մատուցեալ առ Բըրըմհա, տուին բարեաց՝ ասեն․ բայց ՚ի Նարայանէ ամենայն Սուրք և Ասուրք վաստակեցան աշխատութեամբ՝ և տակաւին չիք Ամրիթ․ Յայնժամ ասէ Բրմհա ցՆարայան, զօրացո՛ զնոսա կրկին զօրութեամբ․ զի դու ես ապաւէն նոցա․ Ասէ ցնա Նարայան, Տաց զօրութիւն՝ որոց ՚ի գործ էլեալ են․ ընկեսցէ՛ Մանդար ՚ի ծով․ Զայս լուեալ ամենեքին ՚ի գործ անդր դիմեցին և ըսկսան հարկանել զՈվկիան․ յորմէ ելին Արեգակն և Լուսին, ապա Սրի՝ աստուածուհի բաղտի, որ բնակէ ՚ի Նունուփար ջուր․ ապա Սուրա աստուածուհի գինւոյ, և սպիտակ երիվարն Ուչչէշրավա կոչեցեալ․ ապա ակն Կաուստուբհ կոչեցեալ, զոր արկանէր Նարայան ՚ի լանջ իւր․ որպէս և փարիջաթ ծառն առատութեան և Սուրաբհի կովն ցանկալեաց, կամ որ լինու զամենայն ցանկութիւն սրտի․ Լակշմի, Սուրադէվի՛ Սրի և Ուչչէշրավա ընթացան համաշաւիղ Արե-

գականն , ապա եւ Դն Տնտպէ , անօթ լի ամրփն՝ 'ի ձեռին իւրում . ուր ամենեքին աղաղակ բարձին իբրեւ ընդ իւր իսկ սեպհական ստացուած . Յայնժամ եւ Տրփփիղ ամենազօր , զոր ցարդ ունի Հզօրն Երկնից , եւ 'ի դարձեալ խառնելոյ զծովն՝ մակարդեցաւ թոյն մահու , Սիպ բանիւ Բրմհայ եկուլ զայն , որ կապուտակ ներկեաց զկուլ նորա , յորմէ եւ զանուն Նիլկանթ կամ Կապտակուլն ընկալաւ . Յայնժամ Սուրատէվ առեալ բազմաց եղեւ , իսկ Նարայն զկերպարան Մոհինի Մայէայ զգեցեալ յեզանական սերի՝ գեղով իւրով յապուշ կրթեաց զնոսա , եւ առեալ զամրիթն՝ ետ ցՍուրատէն . բայց իբրեւ վերստին յարձակեցան Ասուրք 'ի վերայ Սուրայ՝ Նարայն 'ի կերպարանս կնոջ յափշտակեալ յիշխանէ նոցա՝ արբ 'ի նմանէ . եւ իբրեւ Ասուրք եւս մասնակից լինէին կենդանարար բաժակին՝ Ռահու ումն յԱսուրաց կերպարանափոխեալ 'ի Սուր , սկսաւ ըմպել եւ ինքն . բայց չեւ հասեալ ջրոյն 'ի կոկորդն՝ մինչ Արեգակն եւ Լուսին , որք բարեկամութեամբ էին ընդ Սուրս՝ յայտնեցին զխաբէութիւնն . ընդ որ Նարայն հատ զգլուխ նորա չակրայիւ իւրով , եւ եղեւ թշնամութիւն 'ի մէջ նորա եւ Արեգական եւ Լուսնի՝

մինչև ցայսօր ժամանակի • այն ինչ յանկարծ ՚ի վերայ յարձակի և խռովեցուցանէ զնոսա ։" (Բամ Սուրբ Գրոց, Ռահու Հնդկաց, Սևորդիք Հայոց, և սուտերն ստէն առեալ՝ զմինոյն իր և անձն նշանակեն ։ ) Նարայն կրկին յայր մարդ փոխակերպեալ մարտ պատերազմի եա ընդ Ասուրայն մինչև արիւն փոխել նոցա և աղաղակ Հա՛ և հա՛ լսելի լինէր յամենայն կողմանց • ՆԱՐ և Նարայն իջին ՚ի դաշտ անդր ՚ի միասին (տես ծնն •) Նարայն եւս ՚ի ձեռս ՆԱՐԱՅ զաղեղն երկնից, որով զմտաւ ած զէն իւր զյաղթ և զպատիչ Ասուրայ՝ Սուդարշան անուն • որ շողայր իբրև զրոց ողջակիզի, և յարձակէր ՚ի թշնամիս իբրև զՊիւտ՝ յօրանալ արեամբ • Ապա Ասուրք լերինս ՚ի լերանց կորզեալ հոսեն ընդդէմ Սուրայ ։ ՆԱՐ տեսեալ թէ տագնապ մեծ էր Սուրայն ։ Ասուրայ անտի՝ ելից զճանապարհ երկնից ոսկէտիպեան նետիւք, և կործանեաց զգագաթունս լերանց • (ասա դաշտարակն) փայլատակմամբ շանթից իւրոց ։ Ասուրք ՚ի ծով և ներտ երկրի սողան մազապուրծ, Զնրա և Սուդարշան վերացան երկինս՝ ուստի եկեալն էին • և Սուրք կանգնեալ՝ տարան եդին զՄանդարն ՚ի տեղւոջ իւրում, և առ ազին զուշմամբ

դարձան ջուրք 'ի տեղիս իւրեանց՝ և Խնդրաեւ ցՆարայան զջուրն կենաց պահպանել վասն իւրոյն ամենեցուն ։" Ստաղիր ընթերցուն կարէ պարզ 'ի պարզոյ իմանալ․ զի թէ Ամրդա Հնդկաց , թէ ամբրոս , կամ ամ-բեր Յունաց , և թէ 'Նեկտար Քաղդէացւոց , ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ գինի Հայաստանի , նախ մշակեալ 'ի Նոյէ կամ 'Նարայանէ՝ յետ համատարած հեղեղաց ։ Թողեալ զքանի մի անուանս և անցս 'ի շնորհս քերթողին Հնդկաց՝ զամենայն մի առ մի համաձայն զտանեմ թէ Սուրբ Գրոց , և թէ պատմութեան Ազգիս մերոյ ։

14 Զատուած հատուածութեան երկնից և Տէր Սվէրգայ , կամ Եղիւսեան դաշտի Հնդկաց ։

15 Կազատիք երեքին քուրք Զարհուրանաց 'ի դժոխս ։

16 Տիր ․ Հրատն կամ Ուդարիդ , տես ծան ,
16 , Բ ։ Թէ 'ի տպագրութեան Ագաթանգեղոսի ․ և թէ յառաման Հնախօսի մերոյ՝ աղաւեալ է մի բանիս "Դմախտղիդեալ 'ի Ճանապարհի Երազացոյց , Երազընդհան պաշտաման արի դից , զպղի գիտութեան քրմաց ։" 'Ի Նեբ.քոյ՝ գնի նօտարագիր պաշտամանք ։ Պարտ էր գրել պաշտաման ՏԻՒ դից , որ նոյն է ընդ Հրատին․ զի Տիր 'ի բար-

բառ մեր , և Թիր կամ Նէփ ՚ի լեզու Պարսից զատուկութիւն ընթացից մոլո ակին ցուցանեն։ Մոգպետն առ Եղիշայի զպաշտպանս բանդար. կեւոց մերոց՝ ՚ի Դարի Թիր հրաւիրէ , այսինքն ՚ի դրան տաճարի Տիր դից ։

17 Խումար է բուն հայ , խումառ , որպէս շնառ . կառուառ , Թուրքառ , և այլն , այսինքն առեալ ՚ի խմելոյ ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԵՐՈՐԴ ԵՐԳՈՅՆ

1 Անտուած դիպաց , դէպք , դիպուած Բաղդ կամ Ճակատագիրք ։

Էջ . 76 տող 14

Տուլ է ծառ նման Ասպարենւոյ կամ ախառւոյ որպիսի է փուջէբաա Եգիպտոսի , ՚ի վերայ տերևոյ նորա գրեն տակաւին մատեանք Հնդկաց ։

2 Սանսկրիտ Թարգմանի ՚ի մեզ Ջուփ կամ դփէաւլ ն յոփաջէաւլ , և է բարբառ իմն հաւաքեալ յամենայն լեզուաց երկրին , որով գրեթէ ամենայն մատեանք հնութեանցն գրեցան ։

3 Ոսկջա է արքայ կամ Թագաւոր ։

4 Լաշմի չաստուածուհի գեղեցկութեան և բաղդի ։

5 Սուէրգայ է արքայութիւն Ինդրայ՝ դից Հաստատութեան ։

6 Որոց տեսեալ իցէ զանպաճոյճ և զմերկ կենցաղավարութիւն Հնդկաց զհասարակ աւուրք կենաց , և զանկարծ և չափազանց շռայլութիւն նոցա ՚ի տօնս Դիւց կամ ՚ի հանդէս ինչ իւրեանց՝ պատմութիւն քան թէ քերթուած համարի զգրեալսն մեր ։

7 Քիլենիք , կամ ծառք քիլայ պտղոց , որ ՚ի բարբառ մեր ՄՈՋ ։ է բոյս ծառացեալ կարի լայն և երկայն տերևօք ։ մօզն ողկուզանայ մի միայն ՚ի բուն բուսոյն մերձ հարիւրաւոր վարնգանման պտղովք զմիմեամբ շարեցելովք ։ որոց կեղևն է դեղին , մէջն փափուկ և թարմ միս , իսկ տերև նորա է ափսէ աղքատաց ՚ի կերակուրս , և թուղթ ՚ի մանրավաճառս ։ վասն զի ջղային է , և ՚ի չորանալն ոչ փխրի ։ Այլ այս յատկութիւն մանաւանդ խոնաւութեան օդոյ երկրին է շնորհ ։

8 Որմիզդ , Արամազդ , Մուշթերի , Ջաւաշ , կամ Լուսնթագն գրօշէր հողագոյն՝ յիրան մարդոյ, ՚ի գլուխ կործան՝ եռանգիւնի թագիւ պս-

կեալ, որոյ ցցուն կամ զարդ երևէր մերթ կա-
տար աւքադաղի, և մերթ՝ գլուխ վիշապի · յաջն
փաթեթ կասւոյ, և 'ի ձախն՝ զարակ ջրոյ ։

9 Դրմաւ կամ Աստարովթեան որդի էր Ջու-
հայ որդւոյ Սատուրնայ կամ արեգական՝ զատա-
ւոր դժոխոց, որ վճռէր ոգւոց մեռելոց կամ
երթալ 'ի Սաւէրգեայ, յարքայութիւն Խնդրոյ ·
կամ իջանել 'ի Նարակ, կամ 'ի դժոխս ։ Սո-
նամանդակարիս աղաչեաց զՍիպ տալ իւր ըզ-
զաւակ · և նա ասէ “Զո՞ կամիս · Հարիւր ամառակ
և երկայնակեաց, թէ մի հանմաս և վաղամեռ ։”
Հայր զմերջինն ազերսեաց, և 'ի լրանալ ամաց
մանկանն՝ իբրև տարաքեաց Ջամ տանել 'ի բաց
զոգի նորա՝ ապաստան եղև առ նա 'ի Լինգա
Սիպոյ՝ և ապրեցաւ ։ Ջամ սպանաւ 'ի մարտին,
և երկիր լցաւ մարդկամբ, դէք զարհուրեալ
աղաչեցին զՍիպ յարուցանել զՋամ 'ի կեանս,
որ ապա առաքեալ զհրեշտակս իւր՝ անխափ
հնձեաց զամենայն հասակ ։

10 Պատարագն առ աշխարհ ստորնոց, կամ
դժոխք, յորմոր պատառ և պատարագուն բաշխեց
մեռոց ։

11 Ընկերել կնոջ ընդ դիշոյ առն 'ի խա-
րոյկ գաղաղոց՝ կոչի Սթի · որ բաղձաւ 'ի կալ-

ուածոց Քրիստոնեայցւոց առ Քէնդինն կուսակալաւ ։ 'Ի սահմանս բնիկ իշխանութեան Հնդկաց տակաւին կայ և մնայ այս սովորութիւն ։

12 Վահագնի արեգական այսպիսի ուխտ հասարակ էր 'ի մէջ Ազգաց ։

13 Հուստինիանուռ, այն է Գիլլի քաղաք, զոր կառոյց Հուստի Բաջա որդի Ցաղուայ Լուսնորդւոյ ։ Կոչէր և Խնդրպուրա, այսինքն քաղաք Խնդրայ դից երկնից ։

14 Քրիշնա դիւցազն մանհաբարաթ գրոց, մարմնեղութիւն Վիշնուայ, որ աջակցեալ Պանդուեանց կործանեաց զթագաւորութիւն Մաղադայ, և ինքն մեռեալ 'ի Մլիչաց ընդ աստուածս համարեցաւ ։ Անառակութիւն սորա ընդ հովուուհեացն Վրիջայ առ Ջմնայ գետով՝ անցանէ քան զամենայն առասպել ։ Նաբաղ աջակից նորա և նիզակակից՝ ոչ կարաց կին գտանել առ որում ո՛չ էր ներկայ Քրիշնա ։

15 Հնդիկ աշխարհագրութիւն յերկուս կէսաշրջանիս բաժանէ զհողագունտ մեր ։ յորոյ զհիւսիսին՝ կոչէ Սու-Մէրու, զեղեցիկ կամ գերազանց ։ իսկ զհարաւոյն՝ Կու-Մէրու, այսինքն տգեղ և մթին ։ Մէրու է բեւեռն ։ ուր եղանէ Գանգա յոտից Վիշնուայ, և ընթացեալ ընդ

չորս յառաջս ընդ չորեսին բերանս կենդանեաց՝ հոսի զառ ՚ի վայր ։ ԳԱՆՁԷՆ ՚ի բերանոյ կովուն՝ հոսի ընդ հարաւ ։ ՓԻՇՈՆ կամ Ոքսոս կամ Ջիհոն ՚ի բերանոյ ձիոյ՝ հոսի յարեւմուտս ։ ՏԻ-ԳՐԻՍ ՚ի բերանոյ փղի՝ հոսի յարեւելս . իսկ ԵՓՐԱ-ՏԻՍ ՚ի բերանոյ առիւծոյ՝ հոսի ընդ հիւսիս ։ Այլք զակն ԳԱՆՁԷԱՅ դնեն ՚ի լեառն ԳԷԲՈՒԱՅ կամ ԳԷՂՈՒԱՅ . եւ այլք եւս յայլ եւ այլ տեղիս ։ Վալմիկ ՚ի մախճան Ռամայեան գրոց յիշէ թէ՝ Գանգա զհետ գնալով կառաց Բագարիթայ մինչեւ ՚ի ծով՝ դարձաւ անդրէն ՚ի ՊԱՏԱԼԱ , կատարել զգործ ինչ սիրուն ։ Ընդ որ զուարճացեալ Բրմհայ զանուն ՍԱԳԷՐԱՅ արքային կարդաց ՚ի վերայ ծովուն , եւ զանուն դստեր նորա ԲԱԳԻՐԱ-ԹԷԱՅ՝ ՚ի վերայ ԳԱՆԳԱՅ գետոյն , զի գնայ եւ գայր զհետ նորա ։ Արդ եթէ արմատն Գըն միայն՝ ՚ի Սանսկրիտն՝ կարիցէ հնդկացուցանել , ապա եւ արմատ եւ շառաւիղ նորա ՚ի մեր բարբառ Գըն եւ ԳԱ կամ Գնագա իսկապէս հայացուցանէ մեզ զանուն գետոյս այսորիկ ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳՈՑ

1 Սովորութիւն է Հնդկաց այսպէս քաղել զծաղիկ։

2 Ազգաւոր տեսակ ինչ կարծրափայտ ծառոյ՝ յարմար առ ՚ի պէտս շինուածոց։

3 Մէնա է թռչուն մարդախօս, մեծ իբրև զսարեակ մեր՝ կամ ժեռ, սև ափետուր, կարմրակտուց, կարմրաարուն և ածխինագոյն ՚ի լանջն։ Է զարդիս մինա մի առ Պարոն Պ. Յ. Սարգսեանց Ատենադպրի Արարատեան Ընկերութեան, որ այնքան վճիտ խօսի հնդկարէն, մինչ պատրել նաև զհանապազորդեան այցելուս նորա։

4 Համբարուք կէս կոյս և կէս ձուկն առասպելեալ կենդանիք՝ փոխարք դից ծովու, համբաւին քաղցրութեամբ երգոց թմրացուցանել զմարդիկ և գիշատել։

5 Քարրի աչօք թինաւորել զմարդիկ համբաւեալ առ հնովք՝ զարդիս ընդ առասպելս գրի։

6 Թագուհի կամ դշխոյ։

7 Հայր արարչութեան Բրմհա՝ ՚ի ՊԱՏՄԱԿՐՊԻԱ կամ ՚ի շուշան-արարչութեան երևեցաւ բազմեալ ՚ի ջրշուշան կամ նունուֆար։

Ց Կամ, ՚ի հայումս կամք, կայան սիրոյ՝ կամ նոյն ինքն սէր, որդի Մայայ կամ Նիւթոյ, որ և Պաթօս ըստ Եգիպտացւոց, ամուսնացեալ ընդ Ռօտնեայ կամ գթութեան։ Արտաքոյ բարեկամ եղև Վասանտայ կամ գարնան, Նկարի երիտասարդ գեղեցիկ զմայլեալ ՚ի խօսս ընդ մօր և կնոջ իւրոյ։ Տեղի բնակութեան նորա՝ Ագրա և դաշտորայ Մաթուրայ. Աղեղն նորա եղէգն շաքարի, շուրջ զորով պար մեղուաց. և հընգեքին նետք նորա փոխանակ սլաքաց ունին ըղհնգեսին ծաղկունս Հնդկաց՝ որոց զօրութիւն է մարմաջեցուցանել և ջեռուցանել. ընտիր քան զԿուպիտոնին Յունաց։ Կոչի և Դիպակ, զոգցես հայերէն, որ անդրադարձ առոգանութեամբ լինի Կապիդ. յորմէ միւս և ս նշան զոդութեան Յունաց և մայրութեան լեզուի մերոյ։ Մահադէվ խառնի ընդ Պարվաթէայ, մեկնի ՚ի Բհուվանէշվարայ՝ (յաշխարհ Բուշանայ,) մինչ Պարվաթի ձեայ ՚ի Ղաւր։ Աստուածք միջնորդ անկանին, Սիվ ոչ զիջանի. Կամ խոցէ զնա, և ՚ի բարկութենէ աչաց նորա յաճիւն փոխարկի։ Պարվաթի երկի նմա ՚ի Կամավանայ, այսինքն (յօթևան կամ ՚ի կայան Սիրոյ.) ուր բարկացեալն Սիվ խաստանայ Ռօհինէայ զմիաւորութիւն ընդ Կամայ

'ի վերստին ծննդեան նորա՝ 'ի սերունդս Քրիշնայ , որ ծնաւ 'ի ձկանէ ։

9 Բութսի այն է Նունու փար. զոր Չինացիք պէթսի կամ պէթէի կոչեն , է բոյս որ բուսանի 'ի ջուր. բոյն նորա սպիտակ 'ի ներքուստ , այլ կարմրանայ արտաքուստ և արձակէ բազում ոստս ։ Ասեն Չինացիք թէ այն բոյս ունի զզօրութիւն կակղայուցանելոյ զպղինձ , զոր Հայրն Քօնթի հաստատէ փորձիւ ։ Աշխարհագիր. Ասիա Հ. Դ , 192 ։

10 Հուստի, Դիլլի կամ Շահջհանապատ. տես ծան , Բ , 13 ։

11 Պողերոթրա ըստ հնչման Յունաց , այլ տիրապէս 'ի լեզու Սանսկրիտ Պատալիպուտրա հնչի , և է յԱգրա , տես Պապն. Հնդկաց ։

12 Սակինա անուն թագաւորի և հարստութեան Արևորդեաց 'ի Հնդկաստան ։

13 Ջմնա գետ ստէպ յիշատակեալ 'ի պատմութեան Հնդկաց , որ 'ի ներքոյ Շահջհանապատայ և Ակպարապատայ 'ի հիւսիսոյ արևմտից գալով՝ խառնի 'ի Գանգա գետ ։ Քրիշնայ ընդ հովուուհեաց լուանիլ յայս գետ՝ հռչակաւոր է յոյժ. զորոյ յիշատակն տարեաց 'ի տարի աշխարհախումբ հանդիսիւ կատարեն. որ կոչի Ջամբրա ։

14 'Ի գալ Սիպայ առ Պարպաթի՝ անիւ ա-
ջոյ կառաց նորա՝ արեգակն , և անիւ ձախոյ՝
լուսին . փոխանակ սեւեռաց Բրահմա և Ռուդրա .
լիսեռն անուոց նորա՝ տարածութիւն յարևե-
լից յարևմուտս . ծով՝ 'ի բազմոց փափկութեան
նորա, և չորեքին վէտքն՝ երիվարք . Սարասուադի
ջռնչանուն, և մորակ երեքասանեանն հմայ . Ըռ-
տեղք՝ զարդարանք նորա, Սումէրու՝ անեղի աղեղան
նորա . և վիշապն Շէշանագ՝ 'ի լար աղեղան նո-
րա . Վիշնու աշտէն նետից նորա , Գանգայ և այլ
գետորայ՝ կարապետք՝ և Բրահմա կառավար . որ
այնքան սաստկութեամբ վարեաց , մինչ կով ե-
կրի ոչ կարաց կալ ծանրութեան նորա , Կա-
մադէվա կամ սէր յանձն առ զծանրութեանն .
Երկնային Ռուդրա և Ապսարայք երգեն նմա զերգ
նոր, և ասեն Այա՛, Այա՛ . Պարվաթի չկարացեալ
ժուժալ բաժանմանն նորա՝ յական թօթափել
զայ միանալ ընդ նմա . —

15 Քրիշնա լուղայ տես , ծան . 14 . Գ .

16 Ամ, ամբ , ամբա , նշգուկ , է պտուղ
հնդկաց , նշաձև հրագոյն և ամենահամ .

17 Ռավլուն, Թող զամբարշտութիւն իւր ընդ
դէմ Ռամայ՝ զաղանի հնարիւք ընդ իւրև նու-
աճեաց և զամենայն դիս և զդիւցազունս հնդկաց .

զօրս և աշխատեցուցանէր 'ի գործ ստորին պաշ-
տաման իւրոյ։ Ինդրա էր նմա պատկարար 'ի ծաղ-
կանց. Ագնի՝ կամ Հուր՝ խաչարար. Սուրեա՝ Արև,
լոյս նմա մեծ 'ի տունջեան, Չանդրա, լուսին՝ 'ի
գիշերի, Վարունա՝ ջրկիր, Կուվերա՝ գանձապետ.
Նարադա՝ (կամ շրջան մոլորակաց) սանդուխք
վերելից նորա։ Բրհմա էր քարոզ զառաջեաւ
նորա, Կանդեբա կամ Մանմատա սափրիչ նորա.
Վիշնու՝ կուքա իչ նորա, Վասա՝ աւելածու-
տան նորա, Քամ՝ լուսայարար նորա, Բագաանի՝
կամ Սանթի՝ սանդու որդւոյ նորա, իսկ Լաշմի
և Սարասուատի՝ նաժիշտք կնոջ նորա։

18 Կուժիլա կամ Սոմ, կին Ռամայ՝ զոր Ռա-
վուն շոպեալ տարաւ 'ի Սելան կղզի։

19 Անդամեդա կամ ձիագոհ. ոչ ումեք էր
տուեալ կատարել՝ եթէ ոչ ամենայաղթ ար-
քայից Հնդկաց։ Ծես Սկիւթացի և Հին յոյժ՝
քան զՀինդ։ Ով 100 ձի զոհէր՝ հաւասարէր Ինդ-
րայ, բայց նորա գործ էր գողանալ զզոհելին։

20 Սուրաջ Բինի նշանակէ զԱրե աղուխտ կամ
դդուս ըն Արեգական։

21 Լաշմի Աստուածուհի գեղեցկութեան և
բախտի պարայածեալ 'ի նունուֆար, պաշտ-
պանուհի Կալիդասայ։

22 Տաղաւար կամ ձգնութիւն. բաւական համարի զհամբերողն դէպ զերազոյն ամբառնալ, լինել որ ինչպիսի ոք և իցէ ։

23 Փէկու էր մայրաքաղաք Թագաւորութեան Բրմաստանի, ուր մինչև ցայսօր չիք դրամ դրոշմեալ, այլ թէ ոսկի և թէ արծաթ յաղիւս ձուլեալ՝ տանին ՚ի գանձ արքունի ։

24 Ոտտէխա որ կոչի Վըռէնջա, և Խոճասուր. անտանելի ձգնութեամբ ընկալաւ ՚ի Մահադէվայ զօրութիւն յաճիւն հասելոյ յոր հպիցէ զաջ իւր. և իբրև եգիտ զայն շնորհ. զառաջին փորձ փորձել կամեցաւ ՚ի վերայ Բարերարին. որ փախեաւ յառաջոյ նորա, և անձապարեալ թաքեաւ ՚ի պտուղն կոչեցեալ Տանտաղէպա, զհետ հաս ապիրատն, հարց ցմշակն, որ երկուցեալ ՚ի բանիւ պատմելոյն, մատամբայն ցոյց զնա նմա ։ Վիշնու յօգնութիւն հասանէ նմա ՚ի կերպարանս աղջկան Բրահմանի, ձգէ զընկոյն զհետ իւր, և ՚ի կատարել Մանտրա պաշտամանն՝ զձեռն յիւր դլուխ մատուցեալ (զի այնպ՚ս կատարի գործն,) յաճիւն դառնալ ոչնչանայ ։ Իսկ Սիպ վրէժխնդիր մատնութեան մշակին՝ կամի թափել զձեռան ՚ի մատանց անոր ։ Կին նորա աղերսէ զՍիպ թողուլ զնա, և փոխա-

ակ ուխտէ հատանել զերկուս 'ի մասանց ա-
մենայն աղջկի սերնդոց իւրոց , որք կան մինչև
յայսօր 'ի Սիլկութ և Գիւտնհուլի · կոչեցեալ
Յնխառա Վոհօլ , այսինքն Ճեռեղ Եռեռագործ :

25 Կուլին ասի ծայրագոյն դաս Բրահմանաց, որ ազնուացուցանէ զամենայն արիւն , ընդ որ և խառնակի՝ ըստ սնոտի կարծեաց Հնդկաց :

26 ՀՐԻ մակդիր գրեթէ ամենայն չաստուածոց Հնդկաց՝ է Հայ բառ :

27 Անուն աղճի կամ սեղեխին Կալիդասայ :

28 Ասուրք են չար ոգիք կամ Արհմնիք առ Հնդիկս · իսկ Սուրք՝ բարի ոգիք, քաջք, Որմզդիք:

29 Բհագավատ անուն Մահադիվայ կամ Մեծ չաստուածոյ · ուխտ Սուրբաջայ առնում 'ի վարուց անտի Պանդուայ Լուսնորդւոյ · որ իբրև անիծու մեռանիլ եթէ 'ի կին մերձենայցէ , եւ ըղձնգեսին կանայս իւր զեղծութեան Բրահմանաց · յորոց ծնան Յուդիշտր, Արջուն, Բիմ, Նաքուլ և Սահադև : Այս ախտ չար քան զամենայն ախտ , գրեթէ զօրանալով կաց և մնաց 'ի հաւատս աշխարհին՝ մինչ և ցայսօր ժամանակի :

30 Որիս կամ Որիսա , և Բանգալա նահանգք են 'ի հարաւոյ արևելից աշխարհին Հնդկաց · իսկ Բնարիս է Հնդկաց , որ ինչ Արարատ Հայոց,

Հռովմ՝ Լատինացւոց, Երուսաղէմ՝ Հրէից, և Մաքքա՝ Մահմետականաց, աղօթարան և ատեան ամենայն ազգին.

31 Վիշնու երկրորդ անձն Հնդիկ երրորդաց, ծնեալ ի Բրամահայ. որ տասն անգամ մարմին եղեալ՝ և ի յերկրի երևեցաւ ընդ զանազան կերպարանօք.

32 Ամերու, այն է Մերու. տես Ծառ. 13 Բ. և Պատմ. Հնդկաց՝ էջ 5.

33 Տասն Աւթար, տասն անգամ մարմնեղութիւն Վիշենուայ ի պէսպէս կերպարանս մարդոյ, առիւծոյ, թզկի, վիշապի, կոկորդիլոսի, Քրիշնայ, ձկան, և այլն.

34 Կասի է Բնարիս քաղաք. ուր էր տաճար մեծակառոյց կռոցս, զոր Ալամգիր Թագաւոր կործանեաց. և այժմ ի բերան խորխորատի կամ վիրապի կատարեն զպաշտօն նորա՝ ուխտաւորք Հնդկաց.

35 Վրիպուլայ քեռի էր Սօնդիպեայ.

36 Վիշնու խնամատար ամի աշխարհի.

37 ՎԱՐԱՋԱԳԻՐ յետակար ի նշան ահաւորագոյն ուխտի՝ տուեալ լինէր իրերաց առնախնեօք Հայոց և Պարսից. Աղ կնքել և տալ, էր նշան մեծի երդման.

38 Խնայելով 'ի Գրիչս մերոյ դարու՝ աղաչեմ միայն միտ դնել անտեղի հայրանարգութեանց ոմանց Ցայսմաւուրս մեր ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

### ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՅՆ

1 Արհինէ մետասաներրորդ գաւառ Ճահճհանապատայ՝ է սահմանագլուխ կրօնից Հնդկաց՝ ուստի և անդր անցանել արգելեալ է նոցա ։

2 Տանատր , երանութիւն, է լինն ուր երևեցաւ Բրմհա 'ի շուշանի · և չկարացեալ առնել ինչ՝ արտադրեաց յիւրմէ զՎիշնու և Սիվ, և նոքօք արար զաշխարհս ։

3 Հարդուար, հուպ 'ի Սիմլայ լերինն · ուր լինի տօնավաճառ բիւրաւոր մարդկան , և արիւնհեղութիւն մեծ՝ ամ ըստ ամէ ։

4 Անուն գետոյս այսորիկ Թաքուն եկաց յաշխարհի՝ ընդ ազգս յուխտենից · եթէ չիցէ կոչեցեալ յանուն Պարետայ որդւոյ Անուշաւանայ Սոսանուերին , ուրեմն է Ափրատ կամ Ափերահատ , այսինքն յորդող ընդ Թումբս կամ ափունս իւր , և արտաքս զեղանող ։ Սոյն մտօք

առեալ զրեաց և Մոլոքա · և մեկնութիւն նորա պտղաբեր կամ աճեցեալ՝ խոկե խոկ 'ի դէպ գայ հայկական անուանակոչութեան նորա՝ որ 'ի գործոց առեալ · քանզի ըստ աւանդելոյ ամենայն հնագրաց՝ որպէս Նեղոս գետ յԵգիպտոս, նոյնպէս և Ափրահատ կամ Եփրատն 'ի Միջագետս, յորդեալ արտաքս՝ պարարտացուցանէ և արգասաւոր առնէ զանձուրն անապատ ։ Սփր ԳԻՐՔ Բ, ՄԵԼ ԳԻՐՔ, ԳԼ, 1 · 3 · ԳԼ, 8, ՊԼԻՆ, ԳԻՐՔ 5, ԳԼ, 24, ՎԻՐԳ ։

5 Ծոփաց գաւառ, Ծոփք, կամ Ծոփեր ուր են ոսկեհանք Կապանի և Արղնոյ ։

6 Հիմաւանդ է աշխարհ Լահօրայ խառն ընդ Տիբեթայ · մանաւանդ լեռնակողմանք նոցա, ուր ձիւն մշտնջենաւոր է, զի Հիմա է ձիւն ։

7 Ինդոս գայ 'ի Կմաւոն կամ Եմաւոն լերանց ուստի սուհկա թռչուն մարգախօս և արծուի ։

8 Տիտանեան Քաղդեայն է Բէլ,

9 Մնու է անուն եօթն նահապետաց Պադմակլպայ կամ շուշանային արարչութեան, որոց եօթներորդն 'ի նոցանէ Սատիաւարման անուանեալ զերծաւ 'ի համատարած հեղեղէն, և նոյնանայ ընդ Նոյի մերում · վասն զի՝ գրի թէ Սատիաւարման յուշ եկեալ, և իրազեկ եղեալ

որոց միանգամ և անցքն անցին՝ անէծ զ·Բար մա, (·Բամ,) յասելն· Եղիշէ· ծառայ ծառայից· [illegible] ։ Որ է [illegible] , և [illegible] ըստ Պարսից՝ է Ծաղ։

10 Ներոսկթայ լերին մրում ։

11 Նանէ դուստր Արամազդայ՝ Աթենաս Հայոց ։

12 Կալի՝ Հռէայ Հնդկաց, կամ նոյն իսկ ժա– մանակն յերկական սերի · առակաւն կոչի Սանի , որ այն ինքնէ Երևակն ։ Նկարի կին զարհու– րելի առ կախեալ լեզուաւ և ստեամբք մեծա– մեծօք , ( զի ժամանակն միայն կարէ խօսել մեծամեծս և սնուցանել զարս անուանիս ։ ) Գլուխք մարդկան սպանելոց շարան եղեալ 'ի պարանոցի՝ առաւել քաղաքավարի է քան ըզ– Յունաց Կրոնին որ յանդիման ուտել զիւր իսկ ծնունդս ։ Եւ զեռ այս [illegible] առասպելք Յունաց ։ Ափսոս · զի մեք զմերն 'ի Յունաց առնուլ ոչ կարեմք, ըստ որում տղայք են նոքա , համեմատութեամբ Պարսից ։

13 Կին Սիվ չաստուածոյ ։

14 Սարասուատի՝ կին Բրահմայ, չաստուա– ծուհի պերճախօսութեն , և Նանէ կամ Հնդկաց ։

15 Կուժիլա, կին Թամայզոր շոպեաց Թամլուն։

16 Կունթի քոյր Բրիշնայ և կին Պանդուայ,

17 Թօտնի կին Կամայ՝ սիրոյ Հնդկաց։

18 Սոփ անուն կնոջ Բրիշնայ։

19 Կմաւօն լեառն։

20 Անուն մարգախօս թութակի իրիք։

21 Գետ Աշամայ, որ անցեալ ընդ Մոյմնսինկ հոսի 'ի Ծոցն Զաթիգամայ։

22 Կամրուպ երկիր սիրոյ, տես 'ի Պատմ. Հնդկաց. էջ. 75

23 ՓԻՍՈՆ, եթէ իցէ ըստ Եբրայեցւոց բազմութիւն և յորդութիւն, տակաւին ոչ յարմարի ընդ Ձուր Ոսկի, կամ Ծոր. Ոսկի Հնախօսին մերոյ, զի երկոքին ևս զմեղմութիւն նշանակեն. այլ յաւէտ առնուլ պարտ է զբուն անուն նորա 'ի հայն՝ որ է Ճորոխ այսինքն Ջուր Ոսկի։ Զի բնակիչք եզերաց նորա հնչեն զտառն Ջ՝ որպէս Ճ. և փոխանակ ասելոյ Ջօրողարի, ասեն Ճորողարէ Եւ ըստ այսմ թողեալ զՓիսոն, որ և ըստ հնչմանն հայանայ, տակաւին Ճոր Ոսկի Հզօր Ոսխ՝ կամ Ջօր Ոսխ յայտ առնեն զիսկութիւն նորա։

24 Գետ կամ գահ, բուն հայ բառք են, և նշանակեն զմեծամեծ ժայռս կամ զլեհս լե-

բանից , որք կազմեն զձոր ։ Արդ Գեհոն , կամ զահուն որ նշանակէ զունողն զեհէից ատոք եւ անտի 'ի լանջան՝ կամ զձորն կազմեալ 'ի զեհէից՝ է տիրապէս Երասխ մեր՝ ընդ Երասխաձոր ։ Դարձեալ Գեհոն ըստ Եբրայեցւոց նշանակէ ձոր իջեանի, եւ Երասխ անցանէ 'ի մօտոյ Նախիջեւան քաղաքի մերում ։ Դարձեալ Գեհոն նշանակէ ձոր շնորհաց , եւ 'ի ձորն Երասխայ եղեն առաջին շնորհ.ք , այսինքն օրհնութիւնք երկրի եւ բերոց նորա եւ նշանին հաշտութեան Աստուծոյ ։ Դարձեալ Գեհոն է պղտոր ․ եւ չի՛ք գետ 'ի Հայաստան պղտորագոյն քան զԵրասխ մեր , մանաւանդ յետ զՄեծամօրն Արարատայ եւ զՏըղմուտն Դարաշամբայ յինքն ընդ ունելոյ ։ Դարձեալ Գեհոն թարգմանի յորձանուտ , եւ ահա այս յատկութիւն է նորա 'ի մեծ ջրավէժն Կապանի ․ յորմէ եւ զանունն ընկալաւ ․ բառորում 'ի զեհ հուն կազմէ ․ որ է ասել , թէ 'ի զահէ վազելով հուն կամ անցս կազմէ ։ Իսկ Երեմ․ Բ ․ 18 ․ ուր գրի "զի՞նչ կայ քո եւ ճանապարհին Եգիպտացւոց ըմպել քեզ զջուրն Գեհոնայ ․" իմանալի է միայն ըստ պղտորութեան Նեղոսի , որ զուրկ է յամենայն միւս յատկութեանց զեհոն նշանակութեան սորա ․ զի նա ընդ ջուրն

՝ի վեր նաւարկի , իսկ Երասխ ամենևին ոչ՝ ընդ ամենայն՝ ընթացս իւր , յԱնփայտ Թասնէ՝ մինչև ՝ի կուր գետ ։ Անուն գՋինուն , որ է անուն Ոսքան գետոյ յԱրարացւոց և եթ տուեալ՝ յապացոյց հնութեանց նորա՝ չէք ինչ ։ զի հնագոյն անուն նորա է Քաշու , կամ գետ Քուշանաց ։

25 Քօթար , քարութար կամ ադաւնի , անուն է Համիրամայ ։ զի ասի թէ Տիկինն ծնող անազորոյն նորա՝ ընկեցիկ արար զնա յանապատ ուրեք , և ադաւնիք կերակրելով սնուցին զնա ։ Բայց ինձ յաւէտ ես հաւանական լինի՝ թէ սակս բորբորիտոն ախտիցն ընկալաւ զանուն բըղջախոհականին ՝ի սեռս թռչնոց ։

26 Նուարդ Տիկին Հայաստանեայց , կին Արայի Գեղեցկան ։

27 Ջոմ կամ Յամա , սպանդարամետ կամ Պղտոն Հնդկաց՝ դատաւոր դժոխոց ։ տես Ծան ։ 9 , Գ. Երգոյն ։

28 Գողթանցիք զինքեանս Ջոկ անուանեն , որ է ասել Ջոհաջէան կամ Աշտահաջէան ։ Ունին և գլեզու խժդժական՝ նոյնպէս Ջոջ կամ Ջոջէ կոչեցեալ , զօրօրինակ Ջոս ղոս նօլէս , ղոս ղոս գէլէս ջըտէս փօլ ։ Այսինքն՝ այսպէս զնաս և այնպէս զաս , և թեքիս ։ — Նահալոս , փըհալոս

ահաւաՏ. այսինքն գնացէ, տես, տասցէ, և այլն. տես Պատմ, Պար, էջ 10։

29 Այն է Մուրացեան կամ Մարացեան Նախարարութիւն, որ յաւուրս Արտաշիսի որդւոյ Սանատրկոյ եհաս մինչև ՚ի յերկրորդական գահըն իշխանութեան Հայոց։

30 Կալաաա է անուն լերին, ուստի ելր ՚ի բերանոյ կովու հոսի գնգա ՚ի խոնարհ։

31 Մոգք Մուղալին։ Ակպոր մեծ հայաստէր ինքնակալն Մուղալաց առաքեաց արս իմաստունս ՚ի զիւտ ականն գանգիսի, մեծաւ զօրութեամբ. որք ոչ կարացին յառաջել անդր քան զկովու Բեռան մթին լերանցն Տիբեթայ։

32 Մուղան, զուցէ նոյն զոր Խորենացին Մուխանք կոչէ՝ յԱրձախ գաւառի, դաշտ լայնածիր յարևմտից Վրկանի ծովուն, ընդ որ խաղայ Երասխ։ Նատր շահ աստ եհար զբանակ իւր, յորժամ զօրէնս ազգաց փոխել մտաբերէր։

33 Մերու Հնդկաց համարիմ աստանօր ըղձեալն Մարաթու, որ է բարձրագոյնն ՚ի կատարաց լերինն Կորդուաց՝ ընդ Սիմ և ընդ Խոյթ։

34 Ապացոյց ծաղկելոյ ամենայն պիտանի արուեստից ՚ի Հայս՝ է շինութիւն ամբարտակին ամպարտաւանութեան ՚ի Բաբելոն. քննեմ թէ

քանի՞ արուեստից պէտք իցեն ՚ի շինել զայն-պիսի իմն և յաւուրս մեր ևս ։

35 Երգունք Եգիպտոսի արտաքուստ առ ցու-ցանեն. զի ժողովուրդն երբև ստրուկ կամաց բռնաւորաց նորա՝ աշխատեցաւ զամս բազումս , առ ոչ ինչ առաւելագոյն վախճան՝ քան եթէ առ թաղել անդ զթագաւորս իւրեանց ։

36 Որոփրական նահանգին ուսումնարան՝ զիւտ բազմահմուտ Հնախօսին մերոյ , տես անդ ։

37 ՚Ի հաւաքել իմում զպատմութիւն Պար-սից՝ չգտի առաւել քան զոր յետի անդանօր՝ յաղագս առարկայիս այսորիկ ․ զԿորձն նոքա սիմուրղ անուանեն , բայց տակաւին ոչ կարեն ստուգաբանել ․ մինչ այնքան՝ զի և ես համար-ձակեցայ ըստ քմաց մեկնել զայն չինահաւ և ՚ի չարհաւ ։ Թարգմանիչ Ռոստամնամային Ֆրդու-սայ՝ համարի զնա զուլ թռչուն կզ , որ ետես զեօթն հեղեղս , և մեկնէ ՚ի Ղամիրամ ․ բայց ես հաւանեալ եմ մանաւանդ Վարդերի անուա-նեալ գրոց ․ որ ասէ թէ Սիմուրղ կամ Կորձն անուն էր Մոգի , որ ՚ի լերինս բնակէր , և Զալայ որդւոյ Սեմայ ուսուցանէր զարուեստն զաղտնի ։

Եթէ հնութիւն այսքան թաքուն ՚ի լոյս հանել արժան իցէ , պարտ է մանաւանդ

Հայել 'ի կենդանի յիշատակարան անուան նորա 'ի նահանգին Կորճայ կամ Կորճէից՝ 'ի Հայաստան. ուր նախ բնակեցաւ Կորճ կամ Կարդոս, Թոռն Հայկայ: 'Ի լեզու մեր նշանակէ զկենդանին բաղադրեալ Արծուառիւծ: Աւանիկ և Սիմուրղն Պարսից զնոյն նշանակէ. զի Սէ, այսինքն Շէր, առիւծ, և Մուրղ, Թռչուն կամ հաւ: Ծագի և միւս ևս տեսութիւն խնդրոյս 'ի յարագրութենէ նշանաց Հայոց և Պարսից, զի Հայք զարծուին կրէին 'ի վառն իւրեանց, և Պարսիկք՝ զառիւծն. որ է ասել թէ անգին՝ ուր այսոքիկ միաբանէին, ուսուցանէր զարու եսան զաղանի, կամ զմիութիւն:

Դարձեալ զի նոյն Վաթթէր գիր առնու ըզկենդանիս 'ի խորհուրդ և նշանակ կրից. զուցէ ասել կամիցի, թէ որ ուսուցանէրն զմիութիւն, զօրաւոր էր քան զառիւծ, և սրատես քան զարծուի. երկոքին ևս համեմատ իմաստութեան և քաջութեան Կորդայ, կամ Կորճայ մերումս նահապետի:

38 Մոկք երրորդ նահանգ է աշխարհին Հայոց, զորմէ ասես 'ի Հին Հայաստան:

39 Զարևանդ գաւառ. ուր Զրուան ուսոյց զժամանակագրութիւն արևոյ. տես 'ի Հին Հայս:

40 Անդրէարէն Թարգմանիչն Եղիշայի մերոյ
զՄարաղաշտ առնու փոխանակ Ջրաղաշտայ ։
41 Մխանայ է վերջին արեւելեան սահման
Ատրպատականի , ընդ որ անցանէ Մխանէ՛ գետ՝
և կամուրջ քառասնակամար 'ի վերայ նորա-
գէրք նորա 'ի ձեռ կխալրուսնի մահակածև պա-
րապատեալ լերամբք ։
42 Ատրպատականն նշանակէ ատր կամ հուր
Բայդամայ , յորմէ յիս գայ խորհուրդ , թէ
Բայդամայ նահապետի մերոյ իցէ կամ չէն զտե-
ղին արարեալ , կամ տաճար և տորուշան հրոյ
վառեալ անդանօր ․ ուստի և զանունն ընկալաւ ։
43 Ալեւան այժմ կոչի Սաւալան, լեառն սրա-
ծայր նման Դմբաւնդայ ․ որ անկանի 'ի հարաւոյ
յարեւելից Ուջենայ՝ պէպ 'ի Փայտակարան նա-
հանգ մեր ։
44 Սհէնդ է լեառն 'ի հարաւոյ Դավրիժոյ
և 'ի հիւսիսոյ Մարաղայի ։
45 Մարանդ մի 'ի գաւառաց Վասպուրականի ,
միով աւուրբ ճանապարհաւ առերի Դաւրիժու ։
46 Սաղարակ աւան 'ի ծոց ինչ Գառնոյ լե-
րին, ուր կայ աղբիւր , որ բղխէ և ցամաքի
փոխ ընդ փոխ ։
47 Հոռեան տուն սախ Հոռխանս գաւառ ,

'ի հիւսիսոյ Տուրուբերան նահանգի, զոր կառոյց Հոռի մի յորդւոց անուն Դեմետրի եւ Գիսանեայ Հնդկացւոց, որ յաւուրս Վաղարշակայ գաղթեցան 'ի Հայս։

48 Աւարտ Գրոցս շուտափոյթ զահավիժեալ՝ զուցէ 'ի կախ պահիցէ զուշ Ընթերցողին, այլ զի տղայական ժտութեամբ, քան թէ քերթողական յղկութեամբ սկսեալ եւ կատարեցաւ զործըն, ներողութեան կարօտի՝ քան դատաստանի։ Շնորհ կալցի Հօրն՝ որ յայտնելով զպակասութիւն պատմութեան Հին Հնդկաստանի, 'ի մասին նախնի երթեւեկութեան Ազգիս յայս աշխարհ. տեղիք ետ ինձ յայս յօրինուած, լիցի որպէս եւ էն, տակաւին այս առաջին եղեւ 'ի ձեռագիրս իմ, որ զնոյ արժանացաւ 'ի մէջ Ազգիս մերոյ։

| Էջ — Տող | ՎՐԷՊ | ՈՒՂԻՂ |
|---|---|---|
| 2—15— | կուան | կուսան |
| 27—12— | հայեցուացոյ | հայեցուածոյ |
| 34— 9— | Սօսնդիպեայ | Սօնդիպեայ |
| 45—10— | մղաց | մեղաց |
| 78—17— | կրկրէ | երկրէ |
| 105— 2— | դառնութե | դառնութեան |
| 119—14— | վաճառանեն | վաճառեն |
| 147— 1— | ասն աւաթար | տասն աւաթար |
| 150—10— | յերկ | յերեկ |
| 154—14— | գոյ | գոյժ |
| 174—15— | սոռկ | սոսկ |
| 177— 2— | Ասաուածոյ | Աստուածոյ |
| 179—12— | Նուարդայ | Նուարդայ |
| 194— 4— | յաշխահ | յաշխարհ |
| 216— 4-- | բճշկութէան | բժշկութեան |